

# ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ

ԴԱՏԱԿԱՐՈՒԹՅՈՒՆ



Ուսումնական  
ձեռնարկ  
դատավորների  
համար



## Ձեռնարկի հեղինակներ՝

Աննա Մարալյան, Լիզա Գրիգորյան, Նարինե Ալեքսանյան,  
Անի Վարդանյան, Անի Կոչոյան

**Իրավաբանական խմբագրումը՝** Տաթևիկ Ղարիբյանի  
**Սրբագրումը՝** Անժելա Ավագյանի  
**Էջադրումը՝** Նարինե Հովհաննիսյանի

Այս հրապարակումը պատրաստվել է «Իրավունքի կենտրոն» ՀԿ-ի կողմից, Արդարադատության ակադեմիայի հետ համագործակցությամբ, «ՀԱՎԱՍԱՐ-ԵՄ-ն հանուն կանանց իրավագործման Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսեՋեն հիմնադրամի, «Եվրոպական գործընկերություն հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի, «Նիդերլանդների հելսինկյան կոմիտե» ՀԿ-ի, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի, «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի կողմից, «Վիննեթ Շվեդիա» ՀԿ-ի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Իրավունքի կենտրոն» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Երևան, 2025

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏՈՒՄՆԵՐ .....	6
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	7
<b>ԹԵՄԱ 1.</b> ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ....	9
<b>ԹԵՄԱ 2.</b> ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	17
<b>ԹԵՄԱ 3.</b> ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ....	22
<b>ԹԵՄԱ 4.</b> ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	28
<b>ԹԵՄԱ 5.</b> ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՊԱՏԻԺԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ .....	44
<b>ԹԵՄԱ 6.</b> ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՏՈՒԺՈՂԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ .....	53
<b>ԹԵՄԱ 7.</b> ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ .....	60
<b>ԹԵՄԱ 8.</b> ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	69
<b>ԹԵՄԱ 9.</b> ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	82
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 1.</b> ՄԻԵԴ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑԱՆԿ .....	87
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 2.</b> «ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԻԵԴ ՎՃՈՒՑ ՔԱՂՎԱԾՔՆԵՐ .....	93
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 3.</b> ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ .....	100
<b>ՀԱՎԵԼՎԱԾ 4.</b> ԴԱՍԸՆԹԱՑԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ .....	103
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>108</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատական պրակտիկայում ընտանեկան բռնության գործերի քննության ընթացքում շարունակաբար արձանագրվում են ոչ գենդերազգայուն գործելակերպեր, որոնք դատական համակարգում գենդերային կարծրատիպերի վերարտադրման, վնասի ու ռիսկերի թերագնահատման, վերապրածակենտրոն մոտեցման բացակայության, ինչպես նաև իրավական նորմերի ոչ գենդերազգայուն մեկնաբանման ու կիրառման հետևանք են:

Քաղաքացիական հասարակության իրականացրած մշտադիտարկումների ու մասնագիտական հարցազրույցների արդյունքները ցույց են տալիս, որ դատական պրակտիկայում գենդերազգայուն մոտեցումների ներդրումը, ի թիվս այլոց, պահանջում է դատավորների հատուկ վերապատրաստումների կազմակերպում: Սույն ձեռնարկը միտված է արձագանքելու դատական պրակտիկայում արձանագրված ոչ գենդերազգայուն խնդիրներին և գործելակերպերին: Դրա նպատակն է ներկայացնել գենդերազգայուն դատավարության առանձնահատկությունները՝ համատեղելով իրավական ու հոգեբանական մոտեցումները, բարձրացնել ընտանեկան բռնության և այլ վերաբերելի գործերով դատական քննության գենդերազգայունության մակարդակը և աջակցել դատարաններին արդար դատաքննության իրավունքի ապահովման գործում՝ առանց խտրականության, կանխելով կրկնազոհացումը և ամրապնդելով արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը:

«Գենդերազգայուն դատավարություն. ուսումնական ձեռնարկ դատավորների համար» վերնագրով ձեռնարկը մշակվել է «Բարելավելով գենդերային հիմքով ու ընտանեկան բռնության դեպքերին դատական արձագանքը Հայաստանում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ որպես ուսումնական նյութ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների, դատավորների վերապատրաստման համար:

Ձեռնարկի առանցքը գենդերազգայուն դատավարության ապահովման գործընթացում իրավական և հոգեբանական մոտեցումների ներդաշնակ ինտեգրումն է: Այս նպատակով որպես հիմնական իրավական սկզբունք և գործիք դիտարկվում է դատարանների կողմից սահմանադրական և միջազգային նորմերի անմիջական կիրառումը, ինչպես նաև ներպետական իրավունքի՝ միջազգային իրավունքին համահունչ մեկնաբանությունը: Սրանք զուգակցվում են հոգեբանական դիտանկյունով՝ վնասի ռիսկերի, կողմերի խոցելիության և կրկնազոհացման կանխարգելման գնահատմամբ: Ձեռնարկում ներառված թեմաներն ընտրվել են դատական պրակտիկայում վերհանված ոչ գենդերազգայուն խնդիրների հիման վրա և գործնական օրինակներով ցույց են տալիս, թե ինչպես ապահովել միջազգային պրակտիկային համահունչ գենդերազգայուն դատավարություն:

Ձեռնարկում ներկայացվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են գենդերազգայուն արդարադատության էությունն ու սկզբունքները, դատարանների պար-

տականությունը՝ անմիջականորեն կիրառելու սահմանադրական հիմնական իրավունքներն ու ազատությունները և մեկնաբանելու իրավական նորմերը միջազգային պարտավորություններին համահունչ, ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի միջազգային իրավական շրջանակը, դատարանում գենդերազգայուն վարքագծի ապահովման պահանջները, քրեական պատասխանատվության և պատիժը մեղմացնող հանգամանքների կիրառման առանձնահատկությունները ընտանեկան բռնության գործերով, տուժողի անվտանգության ապահովման մեխանիզմները դատավարական փուլերում, ընտանեկան բռնության դեպքում կիրառվող պաշտպանական միջոցները, ընտանեկան իրավունքի կիրառման առանձնահատկությունները:

Ձեռնարկի հավելվածներում ներառված են ՄԻԵԴ նախադեպերի ընտրանին, պաշտպանական որոշում կայացնելիս դատարանի նախաձեռնությամբ կատարվող հարցումների օրինակները:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏՈՒՄՆԵՐ

<b>Օրենք</b>	Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին ՀՀ օրենք
<b>Եև կոնվենցիա</b>	Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի կոնվենցիա
<b>ՄԻԵԴ</b>	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
<b>ՄԻԵԿ</b>	Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա
<b>Կոնվենցիա</b>	Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
<b>ԿՆԽՎԿ</b>	Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե
<b>Վիեննայի կոնվենցիա</b>	Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիա

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **Գենդեր** – որևէ հասարակության մեջ այդ հասարակության կողմից կանանց/աղջիկներին և տղամարդկանց/տղաներին վերագրվող սոցիալական դերերը, վարքագծի տեսակները, գործունեության ձևերը և հատկություններն ու հատկանիշները, որոնք այդ հասարակությունը համարում է կանանց/աղջիկներին և տղամարդկանց/տղաներին հարիր, վայել<sup>1</sup>:
- **Գենդերազգայուն** – ճանաչելու, հասկանալու, ընդունելու, գիտակցելու հատկությունը, որ կանայք, տղամարդիկ, աղջիկներն ու տղաները հաճախ ապրում են տարբեր սոցիալական, մշակութային և տնտեսական իրականություններում՝ պայմանավորված իրենց գենդերային դերով, հնարավորություններով և հասարակության կողմից նրանց նկատմամբ ձևավորված սպասելիքներով<sup>2</sup>:
- **Գենդերազգայուն դատավարություն** – դատական գործընթաց, որում կողմերի հանդեպ վերաբերմունքը, որոշումների կայացումը և դատական հաղորդակցությունը հիմնված են գենդերային հավասարության սկզբունքների վրա՝ բացառելով կարծրատիպերը և խտրականությունը, ապահովելով արժանապատիվ վերաբերմունք, անվտանգություն և հավասար մասնակցություն բոլոր կողմերի համար:
- **Գենդերային բռնություն (գենդերի հիմքով բռնություն, գենդերահեն բռնություն) կանանց նկատմամբ** – այնպիսի բռնություն, որն ուղղված է կնոջ դեմ՝ քանի որ նա կին է, կամ այն բռնությունը, որն անհամաչափորեն է ազդում կանանց վրա: Այն տարբերվում է բռնության այլ ձևերից նրանով, որ այստեղ բռնության հիմքում ընկած հիմնական դրդապատճառը զոհի սեռն է: Այլ կերպ ասած՝ գենդերային հիմքով բռնությունը նշանակում է ցանկացած արարք, որը վնաս է հասցնում կնոջը և որը միաժամանակ և պատճառ է, և հետևանք այն անհավասար իշխանական հարաբերությունների, որոնք գոյություն ունեն կանանց և տղամարդկանց միջև ընկալվող տարբերությունների հիման վրա, և որոնք հանգեցնում են կանանց ստորադաս վիճակի՝ ինչպես մասնավոր, այնպես էլ հասարակական կյանքում<sup>3</sup>:
- **Գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)** – անձի սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցան-

<sup>1</sup> Սահմանումը մշակված է ըստ [ԵԽ Կանանց նկատմամբ բռնության և քնտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի կոնվենցիայի](#) ձևակերպումների:

<sup>2</sup> Սահմանումը մշակված է ըստ [ՄԱԿ-ի կողմից տրված սահմանումների շրջանակի](#) և [ԵՄ գենդերային հավասարության ինստիտուտի](#):

<sup>3</sup> Տե՛ս հղում 1:

կացած փարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, փնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և փղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը<sup>4</sup>:

- **Ձոհակենտրոն մոտեցում** – արդարադատության և հավասարության այն սկզբունքը, ըստ որի, բոլոր գործընթացների կենտրոնում դրվում են զոհի/բռնության ենթարկված անձի/բռնություն վերապրած անձի իրավունքները, անվտանգությունը, շահը, արժանապատվությունը, բարեկեցությունն ու անվտանգությունը և վերականգնումը՝ անկախ ենթադրյալ գործողի կարգավիճակից կամ պատկանելությունից: Այն պահանջում է, որ ցանկացած կանխարգելիչ կամ արձագանքային գործողություն կառուցվի զոհի կարիքների, ընտրությունների և անվտանգության առաջնահերթության հիման վրա՝ ապահովելով հարգալից, մեղադրանքից, թիրախավորումից և հոգեբանական վնասներից զերծ միջավայր:
- **Ընտանեկան բռնություն** – ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ փնտեսական բռնության այնպիսի գործողությունները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև, անկախ նրանից՝ կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ<sup>5</sup>: ՀՀ օրենսդրությունը ևս սահմանում է «ընտանեկան բռնություն» հասկացությունը<sup>6</sup>. «Ընտանեկան և [...] բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ փնտեսական բռնի արարքը կամ անփեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների կամ զուգընկերների կամ ընտանիքի նախկին անդամների կամ նախկին զուգընկերների միջև՝ անկախ նրանց համատեղ բնակվելու հանգամանքից»:

<sup>4</sup> Ըստ [ՀՀ կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի](#), 2013:

<sup>5</sup> Տե՛ս հղում 1:

<sup>6</sup> Ըստ [ՀՀ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին](#), 2017:



### Թեմայի նպատակն է՝

- ✓ ներկայացնել «գենդերազգայուն դատավարություն» հասկացությունը.
- ✓ ներկայացնել գենդերազգայուն մոտեցման հիմնական սկզբունքները:

Գենդերազգայուն դատավարությունը վերաբերում է օրենքների և ընթացակարգերի մեկնաբանման և կիրառման դատական գործընթացին, որը պետք է իրականացվի առանց կարծրատիպերի կամ գենդերի հիմքով խտրականության: Այն պահանջում է, որ դատավորները և այլ մասնագետները տեղեկացված լինեն և ակտիվորեն հակազդեն կարծրատիպերին, նորմերին և անհավասար մոտեցումներին, որոնք արդարադատություն իրականացնելիս անհամաչափորեն ազդում են անձանց, մասնավորապես կանանց վրա: Գենդերազգայուն դատավարության վերջնական նպատակն է ապահովել գենդերային հավասարությունը և արդարադատության հավասարաչափ մատչելիությունը բոլորի համար: Դատարանները պետք է հաշվի առնեն այն առանձին դեպքերը, երբ սեռը (և գենդերային անհավասարությունը կամ խտրականությունը) կարող է ազդել արդարադատության մատչելիության, կողմերի հանդեպ վերաբերմունքի, դատավարության անցկացման ու որոշումների կայացման վրա: Այն զուտ տղամարդկանց ու կանանց ձևական իրավական հավասարության մասին չէ, այլ ընդունում է, որ պատմական, կառուցվածքային, մշակութային կամ սոցիալական գործոնների պատճառով տարբեր սեռերի անձինք (հատկապես կանայք) կարող են անբարենպաստ վիճակում լինել, ենթարկվել կողմնակալության կամ ունենալ հատուկ կարիքներ դատական գործընթացներում:

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) ինքնին չի սահմանում «գենդերազգայուն դատավարությունը», այնուամենայնիվ, այն տրամադրում է համապարփակ իրավական չափանիշներ, որոնք կազմում են այս հասկացության հիմքը: Կոնվենցիան սահմանում է «կանանց նկատմամբ խտրականություն» հասկացությունը որպես սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և պարտավորեցնում է մասնակից պետություններին միջոցներ ձեռ-

նարկել կանանց նկատմամբ խտրականությունը վերացնելու և հավասարություն խթանելու համար<sup>7</sup>:

Ստորև ներկայացվում են այն սկզբունքները, որոնք դատարանների համար գենդերազգայուն մոտեցման ուղենիշ կարող են դիտարկվել:

### **1. Հավասարություն և խտրականության բացառում**

Այս սկզբունքն ապահովում է, որ բոլոր անձանց (անկախ սեռից) իրավունքները ճանաչվեն և կիրառվեն հավասարապես: Պետք է խուսափել սեռի հիման վրա ցանկացած ուղղակի կամ անուղղակի խտրականությունից:

Դատավարության համատեքստում հավասարության և խտրականության բացառման սկզբունքը պահանջում է, որ դատավորները չհիմնվեն կարծրատիպերի վրա, օրինակ՝ կատարեն ենթադրություն, որ կանայք չափազանցնում են բռնության մասին պնդումները, կամ որ տղամարդիկ չեն կարող զոհ լինել, և փոխարենը որոշումները հիմնավորեն փաստացի, իրավունքների վրա հիմնված դատողություններով: Գենդերազգայուն դատավորը գիտակցում է, որ չեզոքությունը չի նշանակում տարբերությունները բացարձակ չնկատել, այլ որ պետք է գործադրել ակտիվ ջանքեր՝ ապահովելու, որ յուրաքանչյուր կողմ կարողանա ստանալ հավասար պաշտպանություն:

Դատավորները պետք է ապահովեն կանանց համար արդարադատության անարգել մատչելիություն՝ առաջնորդվելով հավասարության և խտրականության բացառման սկզբունքով, ինչպես նաև բացահայտելով, հասցեագրելով և վերացնելով գենդերային խտրական գործելակերպը:

### **2. Զոհակենտրոն մոտեցում**

Ընտանեկան բռնության դատավարության զոհակենտրոն մոտեցումը նշանակում է, որ զոհի (կամ վերապրածի) իրավունքները, կարիքները, անվտանգությունը և գործունեությունը դրվում են դատական գործընթացի կենտրոնում: Կանանց նկատմամբ բռնության գործերով զբաղվող մասնագետները պետք է ճիշտ կիրառեն նաև ոլորտին առնչվող տերմինաբանությունը:

Դատարանը և արդարադատության համակարգի համապատասխան դերակատարները, գործը պարզապես որպես կողմերի միջև վեճ դիտարկելու կամ միայն ապացուցողական/դատավարական հարցերի վրա կենտրոնանալու փոխարեն, ակտիվորեն քննարկում են, թե ինչպես է ընտանեկան բռնությունը առանձնահատուկ ազդում տուժողի վրա, ինչպես է գործում ուժերի անհավասարակշռությունը ընտանիքում, և ինչպես գործընթացն ինքնին կարող է վերստին տրավմատիզացնել զոհին կամ թուլացնել նրան: Զոհակենտրոն մոտեցումը ձգտում է նվազագույնի հասցնել կրկնազոհայնացումը արդարադատության գործընթացներում:

Գործնականում սա նշանակում է, որ զոհի անվտանգությունը, արժանապատվությունը, տեղեկատվություն ստանալու կարիքները առաջնային են: Ծառայություններն ու աջակցությունը (իրավական, հոգեբանական, սոցիալական)

<sup>7</sup> [Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիա](#), 1979, հոդված 1 և հոդված 2:

ինտեգրված են, ընթացակարգային կանոնները հարմարեցվում են (օրինակ՝ կրկնակի տրավմա վերապրելուց խուսափելու համար), և գործընթացը կառավարվում է այնպես, որ զոհը չվնասվի հենց այն համակարգից, որը նախատեսված է նրան պաշտպանելու համար:

Նախևառաջ, զոհի անվտանգությունն ու պաշտպանությունը պետք է առաջնահերթություն լինեն: Սա չի սահմանափակվում պաշտպանական որոշումների կայացմամբ՝ ապահովելով, որ դատական գործընթացը զոհին չենթարկի հետագա ռիսկի, սպառնալիքի կամ վնասի: Դատարաններն ու համապատասխան դերակատարները պետք է մշակեն ընթացակարգեր, որոնց համաձայն կիրականացվի ռիսկի գնահատումը, ինչպես նաև կհամագործակցեն զոհերի աջակցության ու միջգերատեսչական ծառայությունները՝ կրկնակի զոհայնացման հավանականությունը նվազեցնելու համար<sup>8</sup>:

Երկրորդ՝ զոհի ինքնավարությունն ու մասնակցության ապահովումը պետք է երաշխավորվեն: Սա նշանակում է, որ զոհին պետք է տրամադրել համարժեք, ժամանակին տեղեկատվություն դատական գործընթացի, նրա իրավունքների, առկա օրենսդրական հնարավորությունների մասին, և պետք է հարգել նրա ընտրությունը (ներառյալ՝ որոշակի իրավական քայլեր ձեռնարկելու կամ չձեռնարկելու որոշումը):

Երրորդ՝ գործընթացը պետք է լինի տրավմայի վերաբերյալ տեղեկացված և կրկնազոհայնացման նկատմամբ չեզոքացման մոտեցմամբ: Ընտանեկան բռնության շատ զոհեր բազմիցս ենթարկվել են վերահսկողության, վախի և հարկադրանքի: Նրանց նկատմամբ գործադրվել է ուժ: Արդարադատության գործընթացը պետք է ընդունի, որ զոհերը կարող են չվարվել կարծրատիպային «համագործակցային» ձևով, կարող են ուշ ներկայացնել հաղորդումը/հայցադիմումը, կարող են հետ վերցնել կամ փոխել ցուցմունքները կամ կարող են ունենալ որոշակի խոցելիություն: Հետևաբար, դատական պրակտիկան պետք է հաշվի առնի զոհակենտրոն մոտեցումները: Օրինակ՝ ապահովելով սպասման տարածքներ՝ աջակցելու նպատակով, հնարավորություն տալով առանձին մուտքերի, թույլատրելով տեսակապեր կամ էկրաններ անվտանգ վայրերում, վերապատրաստելով դատարանի աշխատակիցներին տրավմայի վերաբերյալ և ապահովելով, որ լեզուն և ընթացակարգերը չմեղադրեն զոհին կամ ամոթի զգացում չառաջացնեն նրա մեջ:

Արդյունքների մոնիթորինգը նույնպես կարևոր է: Զոհակենտրոն մոտեցումը նաև ենթադրում է դատարանի որոշումների կատարման, դրանց ազդեցության գնահատում: Օրինակ՝ որքանով է դատարանի որոշումը ապահովել զոհի անվտանգությունը, և արդյոք կարիք առաջացել է այլ միջոցներ ձեռնարկելու:

### **3. Գենդերային համատեքստի և իշխանական հարաբերությունների մասին իրազեկվածություն**

Դատավորները պետք է տեղյակ լինեն, թե ինչպես է սեռը (և փոխկապակցված գործոնները, ինչպիսիք են սոցիալ-տնտեսական կարգավիճակը, տարիքը, հաշ-

<sup>8</sup> European Institute for Gender Equality, [Risk assessment and risk management](#)

մանդամությունը) ազդում մարդկանց կենսափորձի, խոցելիության, արդարադատության մատչելիության և վերջնական արդյունքի վրա: Պետք է հաշվի առնեն, որ կանայք կարող են բախվել համակարգային անբարենպաստ իրավիճակների կամ դժկամությամբ համագործակցեն արդարադատության համակարգի հետ՝ վախի, խարանի կամ իշխանության անհավասարակշռության պատճառով:

Դատավորները պետք է զգոն լինեն ընտանեկան/հարկադրական վերահսկողության, իշխանության անհավասարակշռության ցուցանիշների նկատմամբ: Դատավորը պետք է խուսափի զոհի փորձառությունները անտեսելուց կամ նվազագույնի հասցնելուց, քանի որ դրանք չեն համապատասխանում կարծրատիպերին (օրինակ՝ ուշ դիմելը):

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (այսուհետ՝ ԿՆԽՎԿ) թիվ 33 ընդհանուր հանձնարարականում նշվում է, որ գենդերային կարծրատիպերի, գենդերային անհավասարության և խտրական գործելակերպի պահպանումը խոչընդոտում է արդարադատությանը մատչելիությանը:

Կարևոր է, որ դատավորները գիտակցաբար խուսափեն գենդերային կարծրատիպերի կամ նախապաշարմունքների կիրառումից ապացույցները կամ ցուցմունքները գնահատելիս: Դատական որոշումները պետք է հիմնված լինեն փաստերի և օրենքի անաչառ մեկնաբանության վրա:

#### **4. Արդար դատավարություն և արդարադատության մատչելիություն**

Արդար դատավարությունը և արդարադատության մատչելիությունը գենդերազգային դատավարության կենտրոնական հիմնասյուներն են: Դրանք ապահովում են, որ բոլոր անհատները, անկախ սեռից, կարողանան արդյունավետորեն պաշտպանել իրենց իրավունքները, իմաստալից կերպով մասնակցել դատական գործընթացներին և պաշտպանության միջոցներ ստանալ, որոնք արդարացի են և համաչափ: Ընտանեկան և գենդերային բռնության համատեքստում այս սկզբունքները ձեռք են բերում ավելի մեծ կարևորություն, քանի որ զոհերը հաճախ բախվում են առանձնահատուկ խոչընդոտների, այդ թվում՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և ինստիտուցիոնալ, որոնք խոչընդոտում են նրանց՝ մյուսների հետ հավասար հիմքերի վրա արդարադատությանը հասնելու հնարավորությունը:

Արդարադատության մատչելիությունը ենթադրում է ավելին, քան պարզապես դատարան դիմելու հնարավորություն: ԿՆԽՎԿ-ի թիվ 33 ընդհանուր հանձնարարականը արդարադատության մատչելիության մեջ ներառում է.

- արդարադատելիությունը, այսինքն՝ արդարադատությունից անխոչընդոտ օգտվելու և ԿՆԽՎԿ-ի ներքո իրենց իրավունքները պաշտպանելու կանանց կարողությունը.
- առկայությունը, որը ենթադրում է դատարանների և քվադր-դատական մարմինների գոյությունն ազգային տարածքում, ներառյալ՝ գյուղական և հեռավոր շրջանները.
- հասանելիությունը, որը պահանջում է, որ արդարադատության բոլոր համակարգերը լինեն անվտանգ, մատչելի, կանանց համար ֆիզիկապես հասանելի, հարմարեցված ու համահունչ նրանց կարիքներին.

- լավորակությունը, որն այնպիսի տարրեր է ներառում, ինչպիսիք են իրավասությունը, արդյունավետությունը, անկախությունը, անաչառությունը և, ի թիվս այլոց, իրավապաշտպանության կենսունակ և բովանդակալից միջոցների ապահովումը. արդարադատության համակարգ(եր)ի հաշվետվողականությունը:

Կանանց և գենդերային բռնության զոհերի համար արդարադատության իրական մատչելիությունը նաև պահանջում է, որ ընթացակարգերը մշակվեն և իրականացվեն այնպես, որ հաշվի առնվեն գենդերային իշխանության դինամիկան և բռնության տրավման: Գործընթացը, որը ձևականորեն չեզոք է, բայց գործնականում անհասանելի, վախեցնող կամ վերատրավմատիզացնող, չի կարող համարվել արդար կամ գենդերազգային:

Արդար դատավարությունը պահանջում է, որ դատական վարույթներն իրականացվեն արժանապատվության, հավասարության և անաչառության նկատմամբ հարգանքով, բայց նաև գիտակցելով, թե ինչպես են գենդերային անհավասարությունը և զոհի դերը ձևավորում դատարանում ներկայացողների վարքագիծը և կարողությունները: Հետևաբար, գենդերազգային դատավորը պետք է մեկնաբանի դատավարական կանոնները՝ հաշվի առնելով դրանց ազդեցությունը կողմերի մասնակցության իրական կարողության վրա: Օրինակ՝ ապացույցների խստապահանջ մոտեցումը կամ բազմաթիվ առերեսումները կարող են հետ պահել ընտանեկան բռնության զոհերին ցուցմունք տալուց, հատկապես երբ հանցագործը ներկա է դատարանում: Նման համատեքստում արդարությունը կարող է պահանջել ընթացակարգերի հարմարեցում, օրինակ՝ տեսաձայնագրությամբ ցուցմունքներ տալու թույլտվություն, կրկնվող հարցաքննությունների սահմանափակում կամ դատարանում առանձին սպասման տարածքների տրամադրում՝ վախը և ահաբեկումը նվազեցնելու համար:

Արդար դատավարությունը ներառում է նաև ամբողջ գործընթացի ընթացքում հարգանքով և արժանապատվությամբ վերաբերվելու իրավունքը: Դատավորները պետք է լսումների ժամանակ որդեգրեն զոհի նկատմամբ զգայուն և տրավմայի մասին տեղեկացված մոտեցում՝ ապահովելով, որ հարցերն ու վարքագիծը չնվաստացնեն կամ չմեղադրեն զոհին: Դատավորները պետք է ուշադրություն դարձնեն վերբալ ու ոչ վերբալ արտահայտություններին, որոնք խորացնում են կարծրատիպերը, օրինակ՝ ենթադրելով, որ զոհը բռնություն է հրահրել կամ պատասխանատվություն է կրում բռնարար հարաբերություններում մնալու համար:

Նույնքան կարևոր է իրավաբանական օգնության և ընթացակարգային հարմարությունների առկայությունը: ԿՆԻՄՎԿ-ի թիվ 33 ընդհանուր հանձնարարականում նշվում է, որ պետությունները պետք է անվճար կամ մատչելի իրավաբանական օգնություն տրամադրեն այն կանանց, որոնք չունեն միջոցներ հայց ներկայացնելու համար, հատկապես ընտանեկան բռնության հետ կապված դեպքերում: Կոմիտեն ընդգծում է, որ դատավորների, դատախազների և իրավապահ մարմինների աշխատակիցների համար գենդերազգային թեմայով վերապատրաստումը կարևոր է արդարադատության մատչելիությունը ոչ միայն տեսական, այլև արդյու-

նավետ դարձնելու համար: Մատչելիությունը նաև ենթադրում է, որ ընթացակարգերը պետք է բացատրվեն զոհի համար հասկանալի լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչներով կամ պարզեցված ձևաչափերով, որպեսզի մասնակցությունը լինի իմաստալից, այլ ոչ թե ձևական:

Գենդերային բռնության գործերով արդար դատավարությունը նաև պահանջում է, որ պաշտպանական միջոցները լինեն արդյունավետ և կիրառելի: Դատավճիռը, որը ճանաչում է պատճառված վնասը, բայց չի ապահովում դրա դադարեցումը կամ վերականգնումը, չի համապատասխանում գենդերազգայուն արդարադատության սկզբունքներին:

Գործնականում գենդերային բռնության գործերով արդար դատավարության և արդարադատության իրական մատչելիության ապահովումը ենթադրում է դատավարական խոչընդոտների բացահայտման և վերացման շարունակական դատական հանձնառություն: Սա ներառում է ճկուն ժամանակացույց՝ զոհերի անվտանգության կարիքները հաշվի առնելու համար, նրանց մասնակցության վրա ազդող տնտեսական և հուզական սահմանափակումների ճանաչում և աջակցության կենտրոնների հետ համագործակցություն<sup>9</sup>:

Ի վերջո, գենդերազգայուն դատավարությունը պահանջում է, որ դատավորները գործեն որպես ոչ միայն ձևի, այլև նյութական արդարադատության պահպաններ: Դատարանները պետք է ապահովեն, որ ընտանեկան և գենդերային բռնության զոհերը դատական գործընթացն ընկալեն որպես ուժեղացնող, անվտանգ և արժանապատիվ փորձառություն, այլ ոչ թե նոր վնասի դաշտ: Երբ ընթացակարգերը հարմարեցվում են գենդերային բռնությունից տուժածների իրականությանը, դատական համակարգը կատարում է իր դերը որպես մարդու իրավունքների և օրենքի առջև հավասարության երաշխավոր:

Այսպիսով՝ դատարանները պետք է ապահովեն, որ դատավարական կանոնները, դատական պրակտիկան, ժամանակացույցը, ֆիզիկական միջավայրը, գործերի վարումը հաշվի առնեն սեռին բնորոշ կարիքները (օրինակ՝ ընտանեկան բռնության զոհերը կարող են հատուկ ժամանակացույցի կամ պաշտպանության կարիք ունենալ):

Բացի դրանից, ինչպես նշվեց, դատարանները պետք է խուսափեն կրկնազոհայնացումից և միջոցներ ձեռնարկեն ապահովելու, որ կողմերը (հատկապես անապահով վիճակում գտնվողները) հասկանան դատավարությունը, կարողանան բովանդակային մասնակցություն, համարժեք ներկայացուցչություն ունենալ կամ ստանալ աջակցություն:

Հատկանշական է, որ ընտանեկան բռնության որակման տիրույթում տուժողներ դառնում են հիմնականում ընտանիքի խոցելի անդամները՝ պայմանավորված հոգեբանական, սոցիալական, ֆիզիկական կախյալության և մի շարք այլ սոցիալ-հոգեբանական գործոններով: ԿՆԽՎԿ թիվ 19 ընդհանուր հանձնարարականով ընդգծվում է, որ գենդերային կարծրատիպերը նպաստում են բռնության որոշ ձևերի, այդ թվում՝ ընտանեկան բռնության առաջացմանը: Միևնույն ժամանակ

<sup>9</sup> UNDP, Gender and Judicial Excellence, 2022

նշվում է, որ ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ բռնության ամենատարածված և ամենաթաքնված ձևերից մեկն է:

Կանանց՝ որպես ընտանեկան բռնության հիմնական զոհեր լինելու հանգամանքն ունի մի շարք մեկնաբանություններ, որոնցից ստորև կներկայացվեն առավել նշանակալիները.

### **1. Պատմական-մշակութային հիմք**

Պատմականորեն շատ հասարակություններ կառուցվել են պատրիարխալ արժեքների վրա, որտեղ տղամարդն ընկալվել է որպես տան ղեկավար, իսկ կինը՝ ենթակա: Այս մոդելի համաձայն՝ տղամարդը «իրավունք» ունի վերահսկելու կնոջ և ընտանիքի անդամների վարքը: Նման մտածողության շարունակականությունը տարբեր մշակույթներում հանգեցրել է նրան, որ կանանց նկատմամբ կիրառված հսկողությունը կամ բռնությունը հաճախ նույնիսկ չի ընկալվել որպես անօրինական կամ անընդունելի (հիմքը՝ Պատրիարխալ համակարգի տեսություն (Patriarchy Theory)), որի համաձայն՝ ընտանեկան բռնությունը միանշանակ պետք է դիտարկել որպես իշխանության և վերահսկողության դրսևորում, որը սնուցվում է սեռերի անհավասարությամբ:

### **2. Սոցիալական դերերի բաժանում**

Հասարակությունում սեռային դերերը սովորաբար բաշխվում են այնպես, որ.

- տղամարդը ընկալվում է որպես ուժեղ, ակտիվ, վերահսկող.
- կինը ընկալվում է որպես խոնարհ, հոգատար, ենթարկվող:

Այս սեռային կարծրատիպերը բարձրացնում են ռիսկը, որ տղամարդը կարող է օգտագործել իր «իշխանությունը», իսկ կինը՝ դժվարությամբ դիմել օգնության (հիմքը՝ Սոցիալական դերերի տեսություն (Social Role Theory, Alice Eagly)), որի համաձայն՝ մարդկանց վարքը պայմանավորված է իրենց վերագրված սեռային դերերով, որոնք որոշում են նրանց գործողությունների ընդունելիության սահմանները:

### **3. Իշխանության և վերահսկողության դինամիկան հարաբերություններում**

Ընտանեկան բռնության շատ դեպքերում բռնությունը ոչ թե անհատական խնդիրների արդյունք է, այլ հարաբերությունների մեջ իշխանություն հաստատելու միջոց: Տղամարդիկ, որոնք զգում են, որ կորցնում են վերահսկողությունը (հատկապես սոցիալ-տնտեսական ճնշումների ժամանակ), բռնությունն օգտագործում են որպես վերահսկման մեխանիզմ (հիմքը՝ իշխանության և վերահսկողության շրջապտույտ (Power and Control Wheel (Duluth Model)):

### **4. Բռնության անտեսում և նորմալացում**

Շատ հասարակություններում կանանց նկատմամբ բռնությունը՝ հատկապես հուզական կամ տնտեսական բռնությունը, հաճախ նորմալացվում է կամ դիտվում է որպես «ընտանեկան գործ», որի մեջ չպետք է խառնվել: Սա նվազեցնում է բռնության բացահայտման և արձագանքման հավանականությունը (հիմքը՝ Նոր-

մերի սոցիոլոգիա (Social Norms Theory)), համաձայն որի՝ հասարակական նորմերը որոշում են, թե ինչպիսի վարքագիծն է ընդունելի և ինչպիսինը՝ ոչ: Երբ բռնությունը դառնում է «նորմալ», ապա այն սկսում է համարվել ընդունելի վարք:

Ելնելով վերոգրյալից՝ հարկ է նշել, որ հասարակության կողմից սահմանված սեռային դերերը, իշխանության անհավասար բաշխումը և բռնության նորմալացումը ստեղծում են այնպիսի միջավայր, որտեղ կանայք առավել խոցելի են, իսկ տղամարդիկ՝ առավել «արդարացված»՝ որպես բռնություն կիրառողներ:



### Թեմայի նպատակն է.

- ✓ ներկայացնել դատավորների կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական կիրառման պարտավորության բովանդակությունը.
- ✓ ներկայացնել մարդու իրավունքների միջազգային իրավունքի կիրառման նշանակությունը դատարանների կողմից արդարադատություն իրականացնելիս.
- ✓ ներկայացնել մարդու իրավունքների միջազգային իրավունքը գենդերազգային արդարադատության համատեքստում:

### 2.1. Դատավորների կողմից մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական կիրառման պարտավորությունը

Դատարանն արդարադատություն իրականացնելիս պարտավոր է անմիջականորեն կիրառել սահմանադրական այն նորմերը, որոնք ամրագրում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: Այս պարտավորության կատարումը բխում է հետևյալ իրավական հիմքերից.

1. **Դատարանի գործունեության հիմքում պետք է ընկած լինի մարդու արժանապատվության գերակայության գաղափարը.** «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»<sup>10</sup>: «Բարձրագույն արժեք» հասկացությունն այստեղ վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել<sup>11</sup>: Սահմանադրաիրավական կարգավորումների հիմքում մարդու արժանապատվությունն է, որի վրա խարսխվում են վերջինիս հիմնական իրավունքներն ու ազատությունները: Այն կանխորոշում է հիմնական իրավունքների և ազատությունների թե՛ բովանդակությունը, թե՛ իրացման սահմանները, հետևաբար մարդու արժանապատվության

<sup>10</sup> [ՀՀ Սահմանադրություն](#), 3-րդ հոդվածի 1-ին մաս:

<sup>11</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1142 որոշում](#), 2014 թ. ապրիլի 2:

գերակայության գաղափարը պետք է ընկած լինի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության հիմքում<sup>12</sup>:

2. **Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականությունն է** (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մաս): Հանրային իշխանությունը հանդիսանում է հիմնական իրավունքները և ազատությունները հարգելու և պաշտպանելու պարտականության կրողը<sup>13</sup>, ուստի դատարանը, որպես հանրային իշխանության մարմին, արդարադատություն իրականացնելիս պարտավոր է ոչ միայն պաշտպանել սահմանադրորեն ամրագրված յուրաքանչյուր իրավունք, այլև դրա խախտման դեպքում ապահովել պատճառված վնասի հատուցումը<sup>14</sup>:
3. **Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները գործում են անմիջականորեն**: Սահմանադրության 3-րդ հոդվածը, մարդուն հոչակելով որպես բարձրագույն արժեք, վերջինիս արժանապատվությունը դիտարկում է որպես սահմանադրական արժեհամակարգի հիմնաքար՝ հանրային իշխանությանը պարտավորեցնելով ապահովել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը՝ միաժամանակ սահմանափակելով հանրային իշխանությանը՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք<sup>15</sup>: Մարդու իրավունքների և ազատությունների անմիջական գործողությունը նշանակում է, որ անձի համար գործում են Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները, անկախ նրանից՝ դրանք արտացոլված են նորմատիվ իրավական ակտերում թե ոչ<sup>16</sup>: Կարգավորումների բացակայության դեպքում դատարանը պարտավոր է ապահովել մարդու իրավունքների և ազատությունների անմիջական իրացումը կոնկրետ դեպքի նկատմամբ դրանց բովանդակությունը բացահայտելու և արդյունքում՝ պարտադիր կատարման ենթակա ակտեր կայացնելու միջոցով<sup>17</sup>: Բացի դրանից՝ մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցերը չեն կարող ենթադասվել տեխնիկական ու կազմակերպչական ցանկացած բնույթի հանգամանքների, այլ այդ հարցերում իրավակիրառ պրակտիկան պետք է առաջնորդվի սահմանադրական նորմերի անմիջական գործողության և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներով<sup>18</sup>:

<sup>12</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1752 որոշում](#), 2024 թ. հոկտեմբերի 1:

<sup>13</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1769 որոշում](#), 2025 թ. փետրվարի 11:

<sup>14</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1383 որոշում](#), 2017 թ. նոյեմբերի 7:

<sup>15</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1621 որոշում](#), 2021 թ. դեկտեմբերի 23:

<sup>16</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1339 որոշում](#), 2017 թ. հունվարի 24:

<sup>17</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1766 որոշում](#), 2025 թ. հունվարի 14, Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1059 որոշում](#), 2012 թ. նոյեմբերի 23:

<sup>18</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1142 որոշում](#), 2014 թ. ապրիլի 2:

4. **Դատարանն արդարադատություն իրականացնելիս պարտավոր է պահպանել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների էությունը.** «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էությունն անխախտելի է»<sup>19</sup>: Այս իրավադրույթը հանրային իշխանությանը և դրա մարմիններին ուղղված արգելող պարտականություն է. հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանադրական դրույթներն իրավական կարգավորման կառուցակարգում (օրենքներ, ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, անհատական իրավական ակտեր) մանրամասնելիս չխախտել, չխեղաթյուրել, բովանդակային առումով չվերացնել դրանց դրույթների էությունը, ամբողջովին կամ բացարձակ չարգելել դրա իրականացումը<sup>20</sup>: Դատարանը, արդարադատություն իրականացնելիս, **մեկնաբանում և կիրառում է նորմատիվ ակտերը, կայացնում է անհատական իրավական ակտեր և ազդում է մարդու իրավունքների իրականացման ծավալի և բնույթի վրա:** Դատարանը պարտավոր է իրավական նորմերը մեկնաբանելիս պահպանել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների էությունը՝ ապահովելով դրանց իրական բովանդակային իրականացումը, ինչպես նաև չտալ այնպիսի մեկնաբանություն, որը կարող է խեղաթյուրել կամ էականորեն նվազեցնել այդ իրավունքի բովանդակությունը:

## 2.2. **Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի կիրառումը դատարանների կողմից արդարադատություն իրականացնելիս**<sup>21</sup>

Դատարանները արդարադատություն իրականացնելիս **ունեն պարտականություն՝ իրավական նորմերը կիրառելիս մեկնաբանել դրանք՝ հաշվի առնելով հիմնական իրավունքների և ազատությունների սահմանադրաիրավական բովանդակությանը և ՀՀ-ի կողմից վավերացված՝ մարդու իրավունքի վերաբերյալ պայմանագրերին համապատասխանությունը և միջազգային պրակտիկան:** Այս պարտականության իրավական հիմք են հանդիսանում.

1. **ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածը**, որի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վե-

<sup>19</sup> [ՀՀ Սահմանադրություն](#), 80-րդ հոդված:

<sup>20</sup> Սահմանադրական դատարան, [ՄԴՈ-1683 որոշում](#), 2023 թ. ապրիլի 11:

<sup>21</sup> [ՀՀ Սահմանադրության](#) 81-րդ հոդվածը սահմանում է, որ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Այս նորմն օրենսդրական մակարդակում ամրագրվել է նաև [ՀՀ դատական օրենսգրքի](#) 6-րդ հոդվածի 2-րդ մասում:

րաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները: Այս սահմանադրական նորմը նշանակում է, որ սահմանադրական հիմնական իրավունքների և ազատությունների մեկնաբանումը **օրգանապես կապված է միջազգային իրավունքի, մասնավորապես՝ միջազգային պայմանագրերով ստեղծված մարմինների նախադեպային իրավունքի և պրակտիկայի հետ:**

2. «**Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին**» կոնվենցիայի **26-րդ հոդվածը**, որը սահմանում է միջազգային հարաբերությունների հիմք<sup>22</sup> հանդիսացող **Pacta sunt servanda** («**Պայմանագրերը պետք է կատարվեն**») սկզբունքը: Այս սկզբունքը արտացոլված է բազմաթիվ միջազգային փաստաթղթերում<sup>23</sup>: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նախաբանում ընդգծվում է pacta sunt servanda սկզբունքի կարևորությունը՝ շեշտելով «պայմանագրերից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հարգման» անհրաժեշտությունը, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ կետում ամրագրվում է մասնակից պետությունների՝ ՄԱԿ-ի Կանոնադրությամբ սահմանված՝ իրենց պարտավորությունները բարեխղճորեն կատարելու պարտականությունը<sup>24</sup>: Pacta sunt servanda սկզբունքի<sup>25</sup> համաձայն՝ պայմանագրերը, ներառյալ՝ հավելվածները, ենթակա են կատարման պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում: Pacta sunt servanda-ն կիրառելի է, եթե պայմանագիրը՝ (1) ուժի մեջ է<sup>26</sup>, (2) պարտադիր է կողմերի համար, (3) կատարվում է (պետության

<sup>22</sup> Villiger M. E. Commentary on the 1969 Vienna Convention on the Law of treaties, Martinus Nijhoff Publishers, Leiden, 2009, p. 363.

<sup>23</sup> UN, International Law Commission, [Draft Declaration on Rights and Duties of States](#) (1949), Article 13; [Harvard Draft Convention on the Law of Treaties](#) (1935), Article 20; [Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations](#), (1970), pp. 122-124, preamble; [Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա, փոփոխված 11 և 14 արձանագրություններով](#), (1950 թ.), 46-րդ հոդված, [Վիեննայի կոնվենցիա «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին»](#), (1969 թ.), 26-րդ հոդված:

<sup>24</sup> Միավորված ազգերի կազմակերպություն, [Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն](#), Սան Ֆրանցիսկո, 1945 թ. հունիսի 26:

<sup>25</sup> Այս սկզբունքը համընդհանուր ճանաչված սկզբունք է, որը հանդիսանում է միջազգային սովորույթային իրավունքի և նույնիսկ բնական իրավունքի մի մասը: (Corten O., Klein P., *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary* (vol. I), Oxford University Press, 2011, p. 661; Sir Humphrey Waldock, *Sixth Report on the Law of Treaties*, (doc. A/CN.4/186), YILC, (vol. II), New York 1966, p. 60):

<sup>26</sup> Արդարադատության միջազգային դատարանը վերահաստատել է *Կամերունի և Նիգերիայի միջև ցամաքային և ծովային սահմանների վերաբերյալ* գործով, որ pacta sunt servanda դոկտրինը կիրառվում է միայն առկա պարտավորությունների նկատմամբ (International Court of Justice, [Case Concerning the Land and Maritime Boundary between Cameroon and Nigeria \(Cameroon v. Nigeria\)](#), 11.06.1998, p. 301, § 49):

բոլոր մարմինների կողմից)<sup>27</sup>, և (4) այն կատարելիս պետք է պահպանվի բարեխղճության սկզբունքը, որը պետություններից պահանջում է կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները իրենց հնարավորությունների առավելագույն չափով՝ պայմանագրի տառին և նպատակին համապատասխան<sup>28</sup>:

3. Դատարանների կողմից իրավական նորմերի մեկնաբանությունը պետք է **համապատասխանի մարդու իրավունքների պաշտպանության միջազգային «նվազագույն նշաձող»-ին կամ գերազանցի այն, և ինչպես արդեն նշվել է, իրավունքների սահմանափակումը չի կարող գերազանցել միջազգային չափանիշներով սահմանված սահմանափակումները:**<sup>29</sup>

Այսպիսով՝ դատարանները, որպես պետության անունից գործող մարմիններ, հանդիսանում են միջազգային պարտականությունների կատարման (*pacta sunt servanda*) պահանջի ապահովման ուղղակի հասցեատերերը: Ուստիև արդարադատություն իրականացնելիս դատարանները պետք է կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմերը մեկնաբանեն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան՝ հաշվի առնելով վավերացված պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը և ԿՆԽՎԿ ընդհանուր հանձնարարականները:

---

<sup>27</sup> Տե՛ս հղում 22, Էջ 368:

<sup>28</sup> Տե՛ս նույն տեղում, Էջ 367:

<sup>29</sup> Տե՛ս հղում 10, 81-րդ հոդված:

**Գենդերային բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումներ**



**Թեմայի նպատակն է՝**

- ✓ ներկայացնել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումները.
- ✓ ծանոթացնել ընտանեկան բռնության գործերի քննության որոշ առանձնահատկություններին:

**3.1. Միջազգային իրավական կարգավորումներ**

Գենդերազգային արդարադատության համատեքստում մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքը ներառում է ՀՀ կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային պայմանագրերը, ՀՀ կողմից վավերացված պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան՝ ընդունված ակտեր, մեկնաբանություններ և հանձնարարականներ, ինչպես նաև պայմանագրերը, որոնց վավերացման պարտականություն է ստանձնել ՀՀ-ն:

**ՀՀ կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային պայմանագրերը**

ՀՀ կողմից վավերացված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային առանցքային պայմանագրերը, որոնք անդրադառնում են մարդու իրավունքների գենդերազգային հարցերին, ներառում են ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան՝ կից արձանագրություններով:

**ՀՀ կողմից վավերացված պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան՝ ընդունված ակտեր, մեկնաբանություններ և հանձնարարականներ**

ՀՀ կողմից վավերացված պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան ներառում է ՄԻԵԴ վճիռները, թիվ 12, թիվ 19, թիվ 28, թիվ 33 և թիվ

35 ընդհանուր հանձնարարականները, ԵԽ Նախարարների կոմիտեի Rec(2002)5 բռնությունից կանանց պաշտպանության մասին հանձնարարականը (ընդունված 30 ապրիլի 2002 թ.) և բացատրական հուշագիր, այլ փաստաթղթեր:

ԿՆԽՎԿ-ն մշակել է մի շարք ընդհանուր հանձնարարականներ, որոնք վերաբերում են գենդերային հավասարությանը, գենդերային և ընտանեկան բռնությանը վերաբերող գործերի քննության չափանիշներին: Մասնավորապես, ԿՆԽՎԿ-ն իր թիվ 19 ընդհանուր հանձնարարականում սահմանում է, որ պետությունները պարտավոր են ձեռնարկել համապատասխան բոլոր միջոցները՝ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը կանխելու, քննելու, պատժելու և տուժողներին պաշտպանելու համար: ԿՆԽՎԿ նշում է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրվում է կանանց նկատմամբ խտրականության սահմանումը, որում ներառված է գենդերային բռնությունը, այսինքն՝ այն բռնությունը, որը գործադրվում է կնոջ նկատմամբ այն պատճառով, որ նա կին է, կամ որը անհամաչափորեն ազդում է կանանց վրա<sup>30</sup>: ԿՆԽՎԿ-ի թիվ 35 ընդհանուր հանձնարարականը վերահաստատում է, որ կանանց նկատմամբ գենդերային բռնությունը խտրականության ձև է, և պարտավորեցնում է պետություններին կանխել, քննել, պատժել և ապահովել նման բռնություններից տուժողների համար արդյունավետ միջոցներ և պատշաճ ընթացակարգ: ԿՆԽՎԿ-ի թիվ 28 ընդհանուր հանձնարարականը պարզաբանում է, որ անդամ պետությունները պարտավոր են արդյունավետ իրականացնել այն՝ օրենքների, քաղաքականությունների և իրավակիրառ պրակտիկայի միջոցով, որոնք ապահովում են կանանց փաստացի (de facto) հավասարությունը: Թիվ 33 ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎԿ շեշտում է, որ կանայք պետք է ունենան հավասար, արդյունավետ և խտրականությունից զերծ հասանելիություն արդարադատությանը իրավական գործընթացների բոլոր փուլերում, և պետությունները պարտավոր են ապահովել գենդերազգայուն, մատչելի և պատասխանատու արդարադատության համակարգեր: Անհրաժեշտ է ընդգծել, որ գենդերազգայունության պահանջը ընդհանուր գիծ է համարվում վերոհիշյալ ընդհանուր հանձնարարականներում: Մարդու իրավունքի միջազգային մարմինները հավասարապես ուշադրություն են դարձնում կանանց նկատմամբ բոլոր տեսակի՝ ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի խտրականությանը: Ավելին՝ թիվ 33 ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎԿ-ն մատնանշում է, որ իրավախախտների կամ ենթադրյալ իրավախախտների իրավունքները կամ պահանջները դատական վարույթի ընթացքում և դրանից հետո, այդ թվում՝ գույքի, անձնական կյանքի, երեխայի խնամակալության, հանդիպումների, շփման և այցելությունների վերաբերյալ, պետք է որոշվեն՝ հաշվի առնելով կանանց և երեխաների կյանքի, ինչպես նաև ֆիզիկական, սեռական և հոգեբանական ամբողջականությունը և ղեկավարվելով երեխայի լավագույն շահի սկզբունքով:

ՄԻԵԴ-ը նույնպես ընտանեկան բռնությունը համարել է կանանց նկատմամբ խտրականության ձև (տես Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի ([Volodina v. Russia],

<sup>30</sup> CEDAW, [General Recommendation 19](#), 1992:

թիվ 41261/1/17, 2019 թ., հուլիսի 9, § 110) և ընտանեկան բռնությունը դիտարկում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի համատեքստում՝ այն համարելով խոշտանգում կամ վատ վերաբերմունք, որի պարագայում պետությունը պոզիտիվ պարտականություն է կրում (տե՛ս Օպուզն ընդդեմ Թուրքիայի [Opuz v. Turkey], թիվ 33401/02, 2009 թ. հունիսի 9, § 159):

ՄԻԵԴ-ը նաև նշում է, որ ընտանեկան բռնությունները, որ կարող են դրսևորվել տարբեր ձևերով՝ սկսած ֆիզիկական բռնությունից մինչև սեռական, տնտեսական, հուզական կամ բանավոր բռնություն, հատուկենտ դեպքեր չեն համարվում: Սա ընդհանուր խնդիր է, որն այս կամ այն չափով դրսևորվում է բոլոր անդամ պետություններում, և որը միշտ չէ, որ բարձրաձայնվում է, քանի որ այն հաճախ տեղի է ունենում անձնական հարաբերությունների կամ փակ շրջանակներում և ազդում է ընտանիքի տարբեր անդամների վրա, թեև կանայք կազմում են բռնության զոհերի ճնշող մեծամասնությունը (տե՛ս Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի [Volodina v. Russia], թիվ 41261/17, 2019 թ. հուլիսի 9, § 71):

Ընտանեկան բռնության զոհերի առանձնահատուկ խոցելիությունը և նրանց պաշտպանությանը պետության ակտիվ մասնակցության անհրաժեշտությունն ընդգծվել են մի շարք միջազգային փաստաթղթերում և ՄԻԵԴ նախադեպային իրավունքում՝ ՄԻԵԿ-ի տարբեր դրույթների մասով (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, վերը հիշատակված՝ Օպուզն գործը, §§ 72-86, Բևակվան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի [Bevacqua and S. v. Bulgaria] թիվ 71127/01, 2008 թ. հունիսի 12, §§ 64-65 և Հաջդուովան ընդդեմ Սլովակիայի [Hajduova v. Slovakia], թիվ 2660/03, 2010 թ. նոյեմբերի 30, § 46 գործերը):

ՄԻԵԴ-ը նշել է, որ այս առումով ներպետական իշխանություններից պահանջվում է իրականացնել «ինքնուրույն», «պրոակտիվ» և «համապարփակ» ռիսկի գնահատում՝ 3-րդ հոդվածի դրույթներին համահունչ: Ներպետական իշխանությունները չպետք է հիմնվեն բացառապես տուժողի կողմից ռիսկի/վտանգի ընկալման վրա, այլ պետք է լրացնեն այն սեփական գնահատականով՝ գերադասելիորեն օգտագործելով վտանգի գնահատման ստանդարտացված գործիքները և ստուգաթերթերը, ինչպես նաև հավաքելով և գնահատելով տեղեկություններ ռիսկերի գործոնների և տվյալ գործի մանրամասների վերաբերյալ, այդ թվում՝ պետական այլ մարմիններից ստացված: Ռիսկի գնահատման ընթացքը պետք է փաստաթղթավորվի և հաղորդվի այլ շահագրգիռ կողմերին, որոնք կանոնավոր կապի մեջ են ռիսկի սպառնալիքի տակ գտնվողների հետ. ներպետական իշխանությունները պետք է տուժածին տեղեկացնեն վտանգի գնահատման արդյունքների մասին և անհրաժեշտության դեպքում տրամադրեն խորհրդատվություն և առաջարկություններ առկա իրավական և գործառնական պաշտպանության միջոցների վերաբերյալ (տե՛ս Տունիկովան և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի գործը [Tunikova and others v. Russia], թիվ 55974/16 and three others, § 104, 2021 թ. դեկտեմբերի 14):

Անդրադառնալով քննության արդյունավետությանը՝ ՄԻԵԴ-ը նշել է, որ ներպետական դատական մարմինները չպետք է անպատիժ թողնեն հասցված ֆիզի-

կական կամ հոգեբանական տառապանքները: Անհրաժեշտ է պահպանել հանրության վստահությունը օրենքի գերակայության նկատմամբ և աջակցել դրան, ինչպես նաև կանխել իշխանությունների կողմից բռնի գործողությունների նկատմամբ հանդուրժողականության ցանկացած դրսևորում կամ նրանց մասնակցությունն այդ գործողություններին: Ընտանեկան բռնության դեպքերը քննելիս անհրաժեշտ է ցուցաբերել առանձնահատուկ ուշադրություն, իսկ ներպետական վարույթների ընթացքում պետք է հաշվի առնել ընտանեկան բռնության առանձնահատուկ բնույթը (տե՛ս Գայդուկևիչն ընդդեմ Վրաստանի [Gaidukevich v. Georgia], թիվ 38650/18, 2023 թ. հունիսի 15, §58 և վերը հիշատակված՝ Տունիկովան և այլք գործերը, §114):

«Ղ դատական պրակտիկայում հանդիպող այն մեկնաբանությունները, որ բռնարարի նկատմամբ պետք է մեղմ պատիժ նշանակել, կամ անհապաղ միջամտության որոշումը և պաշտպանական որոշումը խախտում են բռնարարի իրավունքները, համատեղելի չէ ընտանեկան բռնության միջազգային չափանիշների հետ»<sup>31</sup>: ԿՆԽՎԿ-ն նշել է, որ «... ենթադրյալ բռնարարի իրավունքները չեն կարող գերակայել կանանց կյանքի և ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության իրավունքների նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ գործերում» (տե՛ս Ա.Թ.-ն ընդդեմ Հունգարիայի [A.T. v. Hungary] գործով որոշումը, 2005 թ. § 9.3): Նշված մոտեցումը ԿՆԽՎԿ-ի կողմից արտահայտվել է նաև Ֆաթմա Յիլդիրիմն ընդդեմ Ավստրիայի [Fatma Yildirim v. Austria] (2007 թ.) գործով:

Այսպիսով՝ բռնարարի իրավունքներին չի կարող տրվել առավելություն ի հաշիվ գոհերի կյանքի և ֆիզիկական ու մտավոր անձեռնմխելիության, հետևաբար, եթե առկա է ընտանեկան բռնության կամ դրա կրկնվելու վտանգ, ապա անհրաժեշտ է ձեռնարկել պաշտպանական միջոց:

Հաջորդ պայմանը, որ առաջադրվում է ընտանեկան բռնության գործերով, անհապաղ արձագանքելու, ինչպես նաև դրանք առանձնահատուկ ուշադրությամբ դիտարկելու պարտավորությունն է, քանի որ ուշացումը վտանգում է բռնության ենթարկված անձանց կյանքը, խրախուսում անպատժելիությունն ու բռնության երևույթների արմատավորումը: ՄԻԵԴ-ն իր նախադեպային որոշումներում նշել է նաև, որ անհապաղությունը գնահատելիս ներպետական իշխանությունները պետք է հաշվի առնեն ընտանեկան բռնության դեպքերի հատուկ առանձնահատկությունները, ինչպիսիք են բռնության հաջորդական ցիկլերը, որոնք ժամանակի ընթացքում ավելի հաճախակի, ինտենսիվ և վտանգավոր են դառնում<sup>32</sup>: Բռնության ցիկլիկ բնույթի մասին ավելի մանրամասն նկարագրվում է ձեռնարկի պաշտպանական միջոցների վերաբերյալ գլխում:

Միջազգային դատական ատյանները անդրադարձել են նաև բռնությունից տուժած անձանց վնասի հատուցման հարցերին: Օրինակ՝ Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործով ՄԻԵԴ-ը ([Hasmik Khacharyan

<sup>31</sup> Տե՛ս պաշտպանական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև մեղմացուցիչ հանգամանքների վերաբերյալ սույն ձեռնարկի 5-րդ և 7-րդ թեմաները:

<sup>32</sup> [Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի](#) [Hasmik Khacharyan v. Armenia], թիվ 11829/16, 2024 թ. սեպտեմբերի 12, Տունիկովան և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի [[Tunikova and others v. Russia](#)], թիվ 55974/16 և 3 այլք, § 104, 2021 թ. դեկտեմբերի 14:

v. Armenia], թիվ 11829/16, 2024 թ. սեպտեմբերի 12) համարել է, որ ընտանեկան բռնության գործերով, բացի նյութական վնասի հատուցման իրավունքից, ՄԻԵԿ-ի ամենահիմնարար դրույթները համարվող 2-րդ և 3-րդ հոդվածների խախտում պարունակող գործերում պետք է հասանելի լինի նաև խախտման հետևանքով առաջացած ոչ նյութական վնասի հատուցումը՝ որպես փոխհատուցման շրջանակի մի մաս:

ՄԻԵԿ-ի վկայակոչած նախադեպերը<sup>33</sup> և ԿՆԽՎԿ-ի որոշումները պարտավորեցնում են ներպետական դատարաններին՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնել ընտանեկան բռնության գործերին և հաշվի առնել դրանց առանձնահատկությունները: Հակառակ դեպքում չի ապահովվի ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետությունը:

Ընտանեկան բռնության վերաբերյալ օրենքի ցանկացած մեկնաբանություն և կիրառություն պետք է հիմնվի ընտանեկան բռնության առանձնահատկությունների վրա, որոնց մասին տեղեկացված լինելը և կիրառելի դատավորների, դատախազների և ոլորտի այլ մասնագետների պարտականությունն է<sup>34</sup>:

### **Պայմանագրեր, որոնց վավերացման պարտականություն է ստանձնել ՀՀ-ը**

Հայաստանը ստորագրել, սակայն դեռևս չի վավերացրել Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման պայքարի մասին կոնվենցիան (այսուհետ՝ ԵԽ կոնվենցիա): Պայմանագիրը ստորագրելով՝ պետությունը ոչ միայն արտահայտում է իր պատրաստակամությունը՝ գործելու այդ պայմանագրի դրույթներին համապատասխան, այլև ստանձնում է այդ պայմանագրի առարկան և նպատակը հարգելու, ինչպես նաև պայմանագրից բխող պարտականություններին համապատասխան՝ բարեխղճորեն գործելու պարտականություն<sup>35</sup>: Թեև պայմանագրի ստորագրումը ինքնին չի նշանակում, որ պետության համար տվյալ պայմանագրի դրույթները պարտադիր են, սակայն այն ձևավորում է բարեխղճորեն գործելու ակնկալիք: Այս սկզբունքը բխում է ոչ միայն Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 26-րդ հոդվածով նախատեսված *pacta sunt servanda* ընդհանուր կանոնից, այլև նույն կոնվենցիայի 18-րդ հոդվածից, համաձայն որի՝ պայմանագիր ստորագրած պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խաթարել տվյալ պայմանագրի նպատակը և իմաստը:

Ստորագրելով ԵԽ կոնվենցիան՝ Հայաստանը ստանձնել է պարտավորություն՝ հարգել կոնվենցիայի նպատակը և իմաստը: Կոնվենցիայի 1-ին հոդվածով որպես նպատակ՝ *inter alia*, սահմանվել է «կանանց պաշտպանությունը բռնությունից, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը, քրեական հետապնդումը և վերացումը»:

<sup>33</sup> ՄԻԵԿ-ի գործերի լրացուցիչ ցանկը ներկայացվում է ձեռնարկի 1-ին հավելվածում:

<sup>34</sup> [Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի](#) [Hasmik Khacharyan v. Armenia], թիվ 11829/16, 2024 թ. սեպտեմբերի 12:

<sup>35</sup> Hugh Thirlway, *The Law and Procedure of the International Court of Justice: Fifty Years of Jurisprudence* Volume, 2013, Oxford University press, p. 364.

Այս առումով՝ պետությունները Կոնվենցիայի դրույթներին համահունչ միջոցներ ձեռնարկելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնեն գենդերային բռնության զոհ դարձած կանանց: Գենդերազգայուն մոտեցումը կոնվենցիայի անբաժանելի սկզբունքն է, որը պարտադիր պահանջ է Կոնվենցիայով ամրագրված բոլոր իրավունքների պաշտպանության գործընթացում:

Այսպիսով՝ գենդերազգայուն արդարադատությունը Հայաստանում պետք է հիմնվի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու վերացման ոլորտում միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերով ՀՀ ստանձնած պարտավորությունների վրա: Այս առումով կարևոր է ոչ միայն ՄԻԵԴ նախադեպային իրավունքը, այլև տվյալ ոլորտում մասնագիտացված կառույցների պրակտիկան և մեկնաբանությունները, որոնք սահմանադրորեն պարտադիր են դատարանների համար մարդու իրավունքները մեկնաբանելիս և անմիջականորեն կիրառելիս: Բացի դրանից՝ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը մեծապես հիմնված է հենց այդ մարմինների մեկնաբանությունների վրա:



### Թեմայի նպատակն է՝

- ✓ ներկայացնել գենդերազգայուն դատական միջավայրի կարևորությունը.
- ✓ ներկայացնել միջազգային և ներպետական իրավական պահանջները՝ գենդերազգայուն դատական միջավայրի ապահովման մեջ դատավորի դերի և պատասխանատվության վերաբերյալ.
- ✓ տրամադրել գործնական ուղենշային գործելակերպեր ոչ գենդերազգայուն հաղորդակցության միջոցները (խոսքային և ոչ խոսքային) կանխելու և դրանց կառուցողական ու գենդերազգայուն կերպով արձագանքելու վերաբերյալ:

#### 4.1. Գենդերազգայուն դատական միջավայրի կարևորությունը

Արդար դատաքննության իրավունքը ներառում է ոչ միայն ընթացակարգային ապահովումը, այլև մարդու արժանապատվության պաշտպանությունն ամբողջ դատավարության ընթացքում: Գենդերային և հատկապես կանանց նկատմամբ բռնության գործերով դատավարությունները հաճախ ուղեկցվում են տուժողների նկատմամբ խտրական կամ նվաստացուցիչ վերաբերմունքով, որը ոչ միայն խախտում է նրանց հիմնարար իրավունքները, այլև նվազեցնում է դատական համակարգի նկատմամբ վստահությունը:

Դատական նիստերի ընթացքում գենդերային կողմնակալությունը կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ սկսած արտաքուստ «բարեկիրթ», սակայն խտրական ենթատեքստ պարունակող արտահայտություններից մինչև ակնհայտ խտրական վարքագիծ: Նման վարքագիծը ոչ միայն խաթարում է դատավարության մասնակիցների արժանապատվությունը, այլև կարող է վտանգել դատական որոշումների անաչառությունը և ամբողջ դատավարության արդար ընթացքը: Գենդերային կողմնակալության դրսևորումները կարող են լինել սեռային ենթատեքստով կամ նվաստացնող բնույթի նկատողությունները, կանանց հետ հաղորդակցության ժամանակ «վերնից» կամ խիստ տոնով խոսելը, տուժողի արտաքին տեսքին վերաբերող անհամապատասխան մեկնաբանությունները, ինչպես նաև նրան մեղադրող հարցադրումները:

Դատարանում ոչ գենդերազգայուն և խտրական, վիրավորական ու անհարգալից վերաբերմունքը պայմանավորված է գենդերային կարծրատիպերով, որոնք խորքային ակունքներ ունեն երևույթների մեկնաբանման, «ճիշտ» և «սխալ» որակելու, պիտակավորելու և ծայրահեղական գնահատականներ տալու համատեքստում և վերարտադրվում են դատաքննության ժամանակ: Ընտանեկան բռնության

գործերում գենդերային կարծրատիպերն ու տուժողին մեղադրող մոտեցումները բացասաբար են ազդում դատավորների կողմից որոշումների կայացման վրա՝ հանգեցնելով ապացույցների թերի կամ կողմնակալ մեկնաբանության, կողմնակալ դատավճիռների կայացման և տուժողի կրկնազոհացման: Այսպիսի մոտեցումները հաշվի չեն առնում ընտանեկան բռնության բարդ հոգեբանական, սոցիալական և տնտեսական հանգամանքները: Տուժողները բռնարարից հաճախ չեն հեռանում վախի, ֆինանսական կախվածության, երեխաների պաշտպանության կամ սոցիալական աջակցության բացակայության պատճառով, սակայն դա չի նվազեցնում նրանց հանդեպ իրականացված բռնության ծանրության աստիճանը: Այս առումով անհրաժեշտ է հաշվի առնել, որ ցանկացած հաղորդակցման դեպքում փոխհարաբերությունը ձևավորվում է կենսափորձի, դիրքորոշումների, վերաբերմունքի, սպասելիքների որոշակի «պաշարով»: Որքան ավելի փորձառու է դատավորը, այնքան ավելի շատ է «տիպային» իրավիճակների նկատմամբ ունեցած փորձառությունը, ինչը կարող է թե՛ դրական (նախկին կենսափորձն օգտագործելով արագ կողմնորոշվելու, ճկուն լուծումներ գտնելու առումով), թե՛ բացասական (իրավիճակը նորովի չգնահատելու, գործի և անձի հատուկ հանգամանքներն անտեսելու կամ դրանք պատշաճ չգնահատելու բարձր ռիսկայնությամբ պայմանավորված) ազդեցություն ունենալ պատշաճ մասնագիտական մոտեցում ցուցաբերելու վրա:

Հատկանշական է նաև, որ տուժողի հայտնած տեղեկությունների համատեքստում խնդրո առարկա է դառնում նաև այն հանգամանքը, որ նա դժվարանում է ներկայացնել ամբողջական տեղեկություններ, որոշակի բացթողումներ են առկա լինում իրողությունների ամբողջականության շրջանակներում, ինչը դիտարկվում է որպես տեղեկությունների ոչ արժանահավատության ցուցանիշ: Մինչդեռ տուժողի կողմից տեղեկություններ հայտնելու կարողության վրա էական ազդեցություն կարող է ունենալ նրա հոգեվիճակը, քանի որ տրավմատիկ փորձառությունը հաճախ առաջացնում է հիշողության ֆրագմենտացիա, որոշ իրողություններ մտաբերելու դժվարություններ, հակասական հույզեր կամ լռության պաշտպանական արձագանք, սակայն այս առանձնահատկությունները չպետք է մեկնաբանվեն որպես տեղեկությունների ոչ արժանահավատության ցուցանիշներ: Իհարկե, հոգեբանական փորձաքննության շրջանակներում հնարավոր է ապահովել տուժողի հուզական վիճակի, վարքի և տեղեկություններ հաղորդելու կարողության վրա դրա ազդեցության մասնագիտական և ճշգրիտ գնահատումը, սակայն մինչ այդ անհրաժեշտ է զերծ մնալ տուժողի խոսքային, հուզական և/կամ վարքային դրսևորումներին սուբյեկտիվ գնահատական տալուց, թերահավատության, մեղադրանքի և նմանօրինակ այլ դրսևորումներից:

Հարկ է նշել, որ տուժողի կողմից տեղեկություններ հաղորդելու տիրույթում էական բովանդակային հակասություններ դրսևորվում են առավելապես որևէ անձի կամ անձանց կողմից հոգեբանական ազդեցության դեպքում, հատկապես երբ, գործի քննության տևականությամբ պայմանավորված, առաջանում են կյանքի նոր հանգամանքներ, նոր իրավիճակներ, և արտաքին սոցիալական ազդեցություններն առավել արտահայտված բնույթ են կրում: Նման դեպքերում տուժողները

բռնության վերաբերյալ ի սկզբանե իրենց հայտնած տեղեկությունները մեկնաբանում են բոլորովին այլ դրդապատճառներով կամ փորձում ներկայացնել, որ բազմաթիվ այլ հանգամանքներ չեն մտաբերում՝ այդպիսով խուսափելով փաստական հանգամանքների ճշգրիտ ներկայացումից:

Դատական գործերի քննության ընթացքում հաճախ ի հայտ են գալիս գենդերային կարծրատիպեր, որոնք կարող են խաթարել դատավորի, դատախազի, ոստիկանության կամ փորձագետի կողմից ցուցաբերվող անաչառությունը և ազդել գործի արդար գնահատման վրա: Ստորև ներկայացված են առավել տարածված **գենդերային կարծրատիպային պատկերացումները:**

- «Իդեալական զոհի» մասին կարծրատիպային պատկերացումները (օրինակ՝ թե ինչպիսի վարքագիծ պետք է ցուցաբերի «իրական» զոհը, այլ կերպ ասած՝ «իրական» զոհը պետք է ցուցաբերի որոշակի վարքագիծ՝ լինի խոնարհ, վախեցած, արտասվող կամ բացարձակ անօգնական):
- Բռնության արդարացումը կնոջ «ոչ բարոյական» վարքի հիման վրա, մասնավորապես՝
  - սեռական կյանքի պատմության հիշատակում.
  - դավաճանության մեղադրանք.
  - սադրիչ վարքագծի մեղադրանք.
  - ազատ վարքագիծ.
  - հագուստի կամ արտաքին տեսքի վերաբերյալ մեկնաբանություններ:
- Ենթադրությունը, որ կինը պարտավոր է պահպանել ընտանիքի ամբողջականությունը ցանկացած պայմաններում՝ նույնիսկ բռնության առկայության դեպքում:
- Կանանց որպես «չափազանց զգացմունքային» կամ «անհիմն մտահոգություն ունեցող» անձանց ներկայացնելը՝ ասելով, թե նրանք զգացմունքային (էմոցիոնալ) են, «չափազանցնում են վտանգը»:
- Ենթադրությունը, որ կանայք իրականում չեն ցանկանում լքել բռնարար ամուսիններին, այլ պարզապես փորձում են «զգուշացնել» նրանց:
- Սպասելիքը, որ կողմերը (հատկապես՝ կինը) վերջում «հաշտվելու են»:
- Դիտարկումը, որ պետությունը չպետք է միջամտի ընտանեկան հարցերին, քանի որ դրանք «մասնավոր» բնույթ են կրում:
- Ընտանեկան բռնությունը ոչ թե բռնություն է, այլ ուղղակի ընտանեկան հարց, սովորական վիճաբանություն երկու հավասար կողմերի միջև: Հայաստանում քաղաքացիական հասարակության կողմից իրականացված դատական նիստերի մշտադիտարկման արդյունքում<sup>36</sup> արձանագրվել են մի շարք դեպքեր,

<sup>36</sup> «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ և «Իրավունքի ուժ» ՀԿ, [«2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները» զեկուլց](#), 2025, «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, [Վնասից դեպի արդարություն. Սեռական բռնության գործերով դատական քննության բարելոմիման ուղենիշները Հայաստանում. Դատական մոնիթորինգի արդյունքների վերլուծություն միջազգային չափանիշների լույսի ներքո](#), 2025

երբ դատական նիստերի ընթացքում թույլ են տրվել սեռի և գենդերի հիմքով պայմանավորված վիրավորական, խտրական կամ արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ, մեկնաբանություններ կամ հարցեր տուժողի հասցեին: Դրանք հիմնականում հնչեցվել են մեղադրյալի կամ նրա պաշտպանների կողմից, սակայն արձանագրվել են նաև դատավորի կողմից արված անթույլատրելի արտահայտություններ:

Գենդերազգային մոտեցումը արդարադատության կարևոր նախապայմաններից է: Դատական գործընթացի բոլոր դերակատարները պարտավոր են ապահովել, որ ընտանեկան բռնության գործերով տուժողները չկրկնազոհացվեն դատարանի դահլիճում: Դատարանում տրվող հարցերը պետք է նպաստեն ճշմարտության բացահայտմանը՝ առանց տուժողին թիրախավորելու և ստուգման ենթարկելու:

Գենդերազգային դատավարությունը ենթադրում է.

- հարգալից վերաբերմունք տուժողի նկատմամբ.
- զգայուն և չվնասող ձևակերպումների կիրառում.
- այնպիսի միջավայրի ձևավորում, որտեղ տուժողը կարող է անվտանգ և արժանապատիվ կերպով ներկայացնել եղելությունը:

➤ Դատարանի կողմից տրվող հարցերը պետք է լինեն՝

- Բաց (օրինակ՝ «հայտնե՞ք», «պատմե՞ք», «նկարագրե՞ք» ձևակերպումների կիրառմամբ և ոչ թե հաստատող կամ հերքող միանշանակ պատասխան ակնկալելով, օրինակ՝ «պատմե՞ք, խնդրեմ, թե ինչպես զարգացավ այդ իրավիճակը»)՝ հնարավորություն տալով տուժողին ազատ պատմել իր փորձառությունը՝ առանց սահմանափակվելու «այո» կամ «ոչ» պատասխաններով:
- Հստակ և չեզոք, առանց մեղադրական ենթատեքստի և ձայնի մեղադրական կամ սարկաստիկ կամ ծաղրական կամ հեգնող տոնայնության: Դատարանի խոսքը պետք է արտացոլի հարգանք և մասնագիտական չեզոքություն:
- Ուղղված գործի փաստերի պարզաբանմանը, այլ ոչ թե տուժողի անձնական վարքի գնահատմանը: Դատական հարցերն ապացույցների հավաքման գործիք են, ոչ թե անձի արժանապատվության փորձարկման միջոց:
- Պարզ, հասկանալի և չեզոք ձևակերպմամբ՝ խուսափելով իրավաբանական բարդ կամ մասնագիտական եզրույթներից և որակական պիտակավորումից (օրինակ՝ «կանացի թուլություն», «տղամարդկային ուժ» արտահայտությունների կիրառումից):

➤ Պետք է խուսափել՝

- Մեղադրական կամ ճնշող բնույթի հարցերից, որոնք ենթադրում են մեղքի վերագրում տուժողին: Դատական հարցը պետք է լինի բաց և փաստական, այլ ոչ՝ մեղադրական ենթատեքստ ունեցող:
- Սեռի, գենդերի կամ ընտանեկան դերի վերաբերյալ կարծրատիպային դիրքորոշում արտահայտող ձևակերպումներից, տուժողի վարքին կամ ընտանեկան հարաբերություններին գնահատականներ տալուց. նման արտահայտությունները խախտում են չեզոքության և հարգանքի սկզբունքը:
- Տուժողի հագուկապի, վարքի կամ նախկին հարաբերությունների կամ անձնական կյանքի քննարկումից<sup>37</sup>, քանի որ դրանք չեն առնչվում գործի էությանը և կարող են հանգեցնել կրկնազոհայնացման:
- Ուղղորդող կամ պատասխան պարունակող հարցերից, որոնք կարող են ազդել տուժողի պատասխանների վրա կամ ստեղծել ճնշման մթնոլորտ:
- Տուժողի հույզերի, վախերի կամ հոգեվիճակի «ճիշտ» կամ «սխալ» լինելու վերաբերյալ մեկնաբանություններից. յուրաքանչյուր անձ ունի սեփական հուզական փորձառություն, և մասնագետի գործառույթը ոչ թե դատելն է, այլ հասկանալը:
- Անձին իր զգացածի կամ գործողության համար մեղադրելուց (օրինակ՝ «Դուք փոքր երեխա չեք այլևս, հավաքեք Ձեզ», «Դուք չպետք է գնայիք այդ վայր, եթե վտանգ կար»), նրա հույզերն ու զգացմունքները մեկնաբանելուց («Ձեր տխրության պատճառը Ձեր ոչ հեռանկարային վարքն է»):
- Ասվածի կապակցությամբ համաձայնություն կամ անհամաձայնություն արտահայտելուց, որևէ գնահատական տալուց:
- Խորհուրդներ տալուց, տրամաբանական սխալներ կիրառելուց, այդ թվում՝ հապճեպ եզրահանգումներ կամ ընդհանրացումներ կատարելուց, պատճառահետևանքային խզված, արհեստական կամ սխալ կապ ստեղծելուց, կեղծ երկընտրանքից և որևէ գործողություն կատարելուն միտված՝ համոզելու դրսևորումներից՝ նույնիսկ լավագույն մտադրություններից դրդված:
- Գենդերային պիտակավորում պարունակող կամ սեռային դերերի կանխավարկած արտահայտող ձևակերպումներից (օրինակ՝ «Որպես կին՝ ընդունելի՞ եք համարում Ձեր գործողությունը», «Որպես կին՝ Դուք պարտավոր չե՞ք հանդուրժել», «Եթե այստեղ հայկական ավանդական ընտանիք լինեք, ապա կինը կարող էր և հանդուրժել ամենը, քանի որ վերջիվերջո իր ամուսինն է»):

<sup>37</sup> Բացառությամբ այն դեպքերի, երբ դա կապված է գործի էության հետ և խիստ անհրաժեշտ է գործի ելքի համար:

<b>Գենդերազգայուն հարց</b>	<b>Ոչ գենդերազգայուն հարց</b>
Կարո՞ղ եք ներկայացնել՝ ինչ է տեղի ունեցել այդ օրը:	Ինչ էիք արել, որ նա այդ օրը բարկացավ:
Ինչպե՞ս եք Դուք զգացել Ձեզ այդ պահին:	Դուք իրականում վախեցնել էիք, թե պարզապես նյարդային էիք:
Կարո՞ղ եք նկարագրել բռնության դեպքերը և դրանց հաճախականությունը:	Դուք համոզված եք, որ դա բռնություն էր և ոչ թե ընտանեկան վեճ:
Ինչ միջոցների եք դիմել Ձեր և երեխաների անվտանգությունը ապահովելու համար:	Ինչո՞ւ չեք փախել կամ տեղափոխվել այլ վայր, եթե իսկապես վախեցնում էիք:
Դուք դիմել եք աջակցություն ստանալու (ոստիկանություն, ընկերներ, կազմակերպություններ):	Եթե իսկապես բռնությունը այդքան լուրջ էր, ինչո՞ւ տարիներ շարունակ ոչ ոքի չեք ասել այդ մասին:
Կարո՞ղ եք պատմել՝ ինչպես է բռնությունը ազդել Ձեր հոգեկան ու ֆիզիկական վիճակի վրա:	Ձեր արձագանքը չափազանցված չէ: Այդ մի հարվածը իսկապես բռնությունն էր համարում:
Ինչո՞ւ որոշեցիք հենց հիմա դիմել ոստիկանություն:	Կարո՞ղ է՝ Դուք պարզապես վրեժ եք ուզում լուծել նախկին ամուսնուց:
Դատական գործընթացը Ձեր ընտանիքի վրա ինչպիսի՞ ազդեցություն է ունեցել:	Չե՞ք կարծում, որ դատական գործընթացը վնասում է Ձեր ընտանիքի համբավին:
Տեղյա՞կ եք Ձեր իրավունքներին որպես տուժող:	Դուք գիտե՞ք, որ Ձեր երեխաների հոր դեմ եք ցուցմունք տալիս:
Կնկարագրե՞ք, թե ինչ խոչընդոտներ կային, որ չհեռացաք:	Ինչո՞ւ չեք հեռացել ամուսնուց, եթե բռնություն էր:
Կպատմե՞ք՝ ինչ հանգամանքներում եք հանդիպել նրան:	Իսկ ինչո՞ւ էիք այդքան ուշ վերադառնում երեկոյան:

### **Հարցադրումները կազմելիս կարևոր է՝**

1. Սկզբում տալ ընդհանուր, ավելի «անվտանգ» հարցեր, ապա անցնել ավելի ծանր թեմաների:
2. Հաստատել, որ պատմությունը կարևոր է և լսվում է հարգանքով:
3. Կոնկրետացումները կատարել առանց մեղադրանքի («Կկարողանա՞ք հիշել՝ երբ առաջին անգամ նման միջադեպ եղավ», «Ի՞նչ զգացիք այդ պահին»):
4. Յուրաքանչյուր դեպք դիտել անհատական պատմության շրջանակում:

Հարցադրումներն արդյունավետ կազմելու համատեքստում կարևոր է հաշվի առնել նաև ակտիվ (ռեֆլեքսիվ) լսելու կարողությունը, որը, ի տարբերություն ոչ ռեֆլեքսիվ կամ պասիվ ունկնդրման (երբ լսողը չի միջամտում զրուցակցի խոսքին, գրեթե չի օգտագործում մարմնի լեզու, պատասխանները հասցված են նվազագույնի, պարզապես լսում է նրան), ենթադրում է ուշադիր լսելու ունակություն, ապահովում է տեղեկատվության իմաստի վերծանման գործընթաց, զրուցակիցն ակտիվ անդրադարձնում է խոսողի ասածը, շեշտադրում է, թե ինչ հասկացավ նրա խոսքից, խթանում է նրա խոսքի շարունակությունը, արտացոլում է խոսողի հուզական վիճակը, վերաձևակերպում է նրա բառերը, ճշտում է իր հասկացածը, ամփոփում է ասվածը և այլն:

Ակտիվ լսելու միջոցով դատավորը կարող է ստեղծել հաղորդակցման այնպիսի նախադրյալներ, որոնց պայմաններում չեզոքացվում է հարցաքննվողի զգացողությունը, որ իր հանդեպ ցուցաբերվում է խտրականություն, ինքը մեղադրվում կամ քննադատվում է, ինչը նպաստում է տեղեկություններ հաղորդելու նրա հակվածությանը՝ արտահայտվելով մարդու հուզական վիճակի գիտակցման և կատարվածն իրապես օբյեկտիվորեն հասկանալու պատրաստականության միջոցով, երբ առկա է լիարժեք գիտակցում, որ չեն լինում ճիշտ կամ սխալ զգացմունքներ և ապրումներ, և այդ դեպքում անկյունաքարային նշանակություն ունի անձի հանդեպ հարգանքի և նրան չվնասելու դիրքորոշումը: Սա էթիկական կարևոր նորմ է, որը պետք է պահպանվի անխախտ գենդերազգայուն մոտեցում պահանջող հարցաքննության ամբողջ ընթացքում՝ սկզբից մինչև վերջ, և առանց խաղարկային, կեղծ դրսևորումների, քանի որ այդ ոչ անկեղծ դրսևորումներն անպայման փոխանցվելու են տուժողներին տարբեր արտահայտչամիջոցների՝ դիմախաղի, շարժումների, ձայնի հնչերանգի, մարմնի դիրքի, հայացքի և այլ ոչ խոսքային հաղորդակցման եղանակներով: Հետևաբար, մինչև հարցաքննություն սկսելը կարևոր է, որ դատավորը հստակ գիտակցի իր իրական վերաբերմունքը և կարողանա չեզոքացնել բացասական դիրքորոշումները (որոնք առավելապես իր կենսափորձի, պատկերացումների ամբողջությունն են), որպեսզի վերոնշյալ

հաղորդակցման միջոցների կիրառումը չլինի ձևական, ոչ արդյունավետ և իսկապես ապահովի դրական ընթացք:

Նշված երևույթը պահանջում է դատավորի կողմից կողմնակալությունների ինքնաճանաչում՝ հետևյալ բաղադրատարրերով.

- Իմպլիցիտ կողմնակալության գնահատում, երբ դատավորը նախապես հարցնում է ինքն իրեն. «Արդյոք ես նույն հարցը կտայի՞, եթե դիմացս լիներ այլ սեռի անձ»:

- Մետակոգնիտիվ ռազմավարության մշակում և կիրառում՝ դատավարությունից առաջ սեփական վերաբերմունքի, կանխավարկածների և հոգեբանական ու հուզական արձագանքների վերաբերյալ «ստուգում»/«ինքնավերլուծություն» (self-check) իրականացնելու նպատակով:

Այնուհետև, արդեն կայացած նիստերից հետո, դատավորը պետք է ինքնահարցադրումներ անի՝ հետևյալ բովանդակությամբ.

- Որևէ պահի իմ հարցերը կարճ էին արդյոք ընկալվել որպես մեղադրող:
- Ես հավասար վերաբերվեցի արդյոք բոլոր կողմերին:

Նշված համատեքստում կարևոր է, որ դատավորը մասնագիտական քննարկումների շրջանակներում ներկայացնի իր փորձը, պատրաստակամություն հայտնի առավել կառուցողական հմտությունների ձևավորման հարցում:

**Օրինակ՝** եթե դատավորը նկատում է, որ կանանց վկայությունները հաճախ համարում է «հուզական», իսկ տղամարդկանցը՝ «տրամաբանական», սա ինքնաճանաչման ազդանշան է՝ կողմնակալությունը նվազեցնելու համար:

## 4.2. Միջազգային և ներպետական իրավական շրջանակ

Դատավորի կողմից գենդերային կողմնակալություն դրսևորելը կամ դատավարության մասնակիցների ոչ գենդերազգայուն, տուժողի արժանապատվությունը նվաստացնող վարքագիծը չկանխելը դատարանում հակասում է **միջազգային իրավական կարգավորումներին հետևյալ հիմքերով և պատճառաբանությամբ.**

1. Դատարանը, որպես հանրային իշխանության մարմին, պարտավոր է պահպանել դատավարության **գենդերազգայուն և անկողմնակալ** միջավայրը: Կանանց նկատմամբ գենդերային բռնության բնույթի, այդ բռնությանը կանանց արձագանքի ձևերի, ինչպես նաև այդ բռնությունը ապացուցելու համար պահանջվող ապացույցների նկատմամբ կիրառելի չափանիշների վերաբերյալ կարծրատիպային պատկերացումների կիրառումը **լրջորեն խաթարում է կանանց իրավունքների իրականացումը՝ օրենքի առջև հավասար լինելու, արդար դատաքննության և արդյունավետ իրավական պաշտպանության առումով՝** ինչպես ամրագրված է Կանանց նկատ-

մամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի 2-րդ և 15-րդ հոդվածներում<sup>38</sup>: Տուժողի վարքագծի, «բարոյականության», արտաքինի կամ «իդեալական գոհի» մասին կարծրատիպային պատկերացումների կիրառումը խաթարում է այս իրավունքների իրականացումը, քանի որ դատավարության ընթացքում իրավական չափանիշների հիման վրա իրավական գնահատականի փոխարեն գործում է գենդերային **կարծրատիպերի հիման վրա գնահատումը և ընկալումը**:

2. Կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ե» ենթակետը<sup>39</sup> պահանջում է վերացնել խտրականությունը նաև ոչ պետական դերակատարների գործողություններում: Հետևաբար, դատարանը պարտավոր է կանխել պաշտպանի, մեղադրյալի կողմից գենդերային խտրականության վերարտադրումը և ոչ գենդերազգայուն հաղորդակցման միջոցների կիրառումը: ԿՆԽՎԿ թիվ 28 ընդհանուր հանձնարարական<sup>40</sup> այս պարտավորությունը բնորոշում է որպես «պատշաճ ջանասիրության» (*due diligence*) պարտավորություն: Նման դեպքերում դատարանի չմիջամտելը նշանակում է պետության կողմից այդ պարտավորության չկատարում<sup>41</sup>:
3. Դատական ընթացակարգերի գենդերազգայուն, կարծրատիպերից զերծ և երկրորդային զոհայնացում չառաջացնող դատական վարույթի ապահովման պարտականությունը անմիջականորեն կրում է դատարանը: Դատական մարմինները պարտավոր են ձեռնպահ մնալ ցանկացած տեսակի խտրականությունից կամ կանանց նկատմամբ գենդերային բռնության դրսևորումից և խստորեն կիրառել քրեական օրենսդրության այն բոլոր դրույթները, որոնք նախատեսում են պատասխանատվություն նման բռնու-

<sup>38</sup> CEDAW, [General Recommendation 33](#), 2015, §§ 18 (e), 26 և 29; CEDAW, [Tayag Vertido v. Philippines](#), CEDAW/C/46/D/18/2008, 2008, § 8.9 (b); CEDAW, [R.P.B. v. Philippines](#), CEDAW/C/57/D/34/2011, 2011, § 8.3:

<sup>39</sup> Մասնակից պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ ապահովելու համար կանանց նկատմամբ խտրականության վերացումը՝ անկախ այն հանգամանքից՝ խտրական գործողություններն իրականացվում են ֆիզիկական անձանց, կազմակերպությունների, թե ձեռնարկությունների կողմից:

<sup>40</sup> «Պատշաճ ջանասիրության» պարտավորության ներքո պետությունները պարտավոր են ընդունել և իրականացնել բազմակողմանի միջոցառումներ՝ ուղղված կանանց նկատմամբ ոչ պետական դերակատարների կողմից իրականացվող գենդերային բռնության կանխարգելմանն ու արձագանքմանը, այդ թվում՝ համապատասխան օրենսդրական դաշտի, իրավասու մարմինների և գործուն համակարգի ներդրմամբ ու գործարկմամբ՝ ապահովելով, որ այդ համակարգերը գործեն արդյունավետ, կիրառվեն պրակտիկայում և ստանան բոլոր այն պետական մարմինների աջակցությունը, որոնք պարտավոր են հետևողականորեն կիրառել օրենքները (CEDAW, [General Recommendation 28](#), 2010, § 13):

<sup>41</sup> Եթե պետությունները չեն ձեռնարկում բոլոր անհրաժեշտ և պատշաճ միջոցները՝ կանխելու, ինչպես նաև հետաքննելու, քրեական հետապնդման ենթարկելու, պատժելու և փոխհատուցում տրամադրելու՝ ոչ պետական դերակատարների կողմից կատարված գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած՝ կանանց նկատմամբ գենդերային բռնության դեպքերում, ապա դրանք կարող են համարվել խախտումներ պետության պարտավորությունների շրջանակում (CEDAW, [General Recommendation 19](#), 1992, § 9; CEDAW, [General Recommendation 35](#), 2017, § 24.b):

թյան համար՝ միաժամանակ ապահովելով, որ կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ մեղադրանքներով վարույթներում բոլոր դատավարական ընթացակարգերն իրականացվեն անկողմնակալ, արդար և կարծրատիպերից ու խտրական իրավաբանական մեկնաբանություններից զերծ եղանակով, ներառյալ՝ միջազգային իրավունքի նորմերի կիրառման ընթացքում<sup>42</sup>:

4. Գենդերային բռնության որոշ ձևեր, ինչպես նաև դատական համակարգի միջոցով **նվաստացուցիչ հարցաքննությամբ կամ վերաբերմունքով** պայմանավորված հոգեբանական տառապանքն ու վախը կարող են հասնել **դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի** շեմին: **Կանանց նկատմամբ գենդերային բռնությունը որոշ հանգամանքներում կարող է հասնել խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի սահմանին՝ հատկապես բռնաբարության, ընտանեկան բռնության կամ վնասակար ավանդապաշտական գործողությունների կիրառման դեպքերում**<sup>43</sup>: Այդպիսի բռնությունների հետևանքով կանանց կրած ցավն ու տառապանքն ամբողջապես ըմբռնելու համար անհրաժեշտ է գենդերազգային մոտեցում<sup>44</sup>: Նման արարքները որպես խոշտանգում որակելու համար սահմանված են նպատակի և դիտավորության չափանիշներ, որոնք համարվում են կատարված, երբ այդ գործողությունները կամ անգործողությունները ուղղված են կոնկրետ սեռի դեմ կամ կատարվել են անձի սեռով պայմանավորված հիմքով<sup>45</sup>:
5. Կանանց նկատմամբ քրեական արդարադատության համակարգի կողմից իրականացվող երկրորդային զոհայնացումը խոչընդոտում է նրանց՝ արդարադատություն ստանալու հնարավորությանը, քանի որ նրանք ձերբակալման, հարցաքննության և կալանքի ընթացքում կարող են ենթարկվել

<sup>42</sup> CEDAW, [General Recommendation 33](#), 2015, , [Կոնվենցիայի](#) 2-րդ հոդվածի (դ) և (զ) ենթակետեր, ինչպես նաև 5-րդ հոդվածի (ա) ենթակետ:

<sup>43</sup> UN, [Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment \(A/HRC/31/57\)](#), 2016; UN, [Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment \(A/HRC/7/3\)](#), 2008, § 36; UN Human Rights Committee, [General Comment No. 28 :Article 3 \(The equality of rights between men and women\)](#), 2000; Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Burundi ([CAT/C/BDI/CO/1](#)); Guyana ([CAT/C/GUY/CO/1](#)); Mexico ([CAT/C/MEX/CO/4](#)); Peru ([CAT/C/PER/CO/5-6](#)); Senegal ([CAT/C/SEN/CO/3](#)); Tajikistan ([CAT/C/TJK/CO/2](#)); and Togo ([CAT/C/TGO/CO/1](#)); Concluding observations of the Human Rights Committee on the periodic reports of States parties under the ICCPR, including such observations as in respect of Slovakia ([CCPR/CO/78/SVK](#)); Japan ([CCPR/C/79/Add.102](#)); and Peru ([CCPR/CO/70/PER](#))

<sup>44</sup> CEDAW, [General Recommendation 35](#), 2017, § 17, UN, [Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment \(A/HRC/31/57\)](#), 2016, § 8; and UN, [Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, A/HRC/7/3](#), § 36

<sup>45</sup> Committee against Torture, [V.L. v. Switzerland](#), CAT/C/37/D/262/2005, 2006.

հոգեբանական և ֆիզիկական բռնության ու սպառնալիքների, ինչը խորացնում է նրանց խոցելիությունը<sup>46</sup>:

Դատավորի կողմից գենդերային կողմնակալություն դրսևորելը կամ դատավարության մասնակիցների ոչ գենդերազգայուն, տուժողի արժանապատվությունը նվաստացնող վարքագիծը չկանխելը դատարանում հակասում է նաև **ներպետական իրավական կարգավորումներին հետևյալ հիմքերով և պատճառաբանությամբ**.

1. Այն հանդիսանում է **ՀՀ Սահմանադրությամբ<sup>47</sup> և ՀՀ դատական օրենսգրքով<sup>48</sup> սահմանված հավասարության սկզբունքի և խտրականության արգելքի խախտում**: Այս արգելքը տարածվում է ինչպես դատական ակտի, այնպես էլ դատավարության ընթացքի վրա: **Ոչ գենդերազգայուն դատական միջավայրը ուղղակի խտրականություն է**, քանի որ տուժողին ոչ գենդերազգայուն, նվաստացնող հարցերը («հագուստի/սեռական կյանքի» մասին), «իդեալական զոհի» չափանիշների պարտադրումը, «ընտանիքը ցանկացած գնով» ակնկալիքը **դասական գենդերային կարծրատիպեր են**: Դրանք տուժողին դնում են **անհավասար իրավիճակում**, ինչը հակասում է կողմերի հավասարության սկզբունքին: **Ոչ գենդերազգայուն դատական միջավայրը նաև անուղղակի խտրականություն է**, քանի որ տուժողներին հարցաքննելու միակերպ «մեխանիկական» չափանիշները հաշվի չեն առնում ընտանեկան բռնության առանձնահատկությունները (տրավմա, կախվածություն, վախ, տնտեսական խոչընդոտներ) և անհամաչափ ծանր բեռ են դնում տուժողների վրա:
2. Այն հանդիսանում է **դատավորի՝ անկողմնակալ և անաչառ լինելու պարտականության<sup>49</sup> խախտում**: Այս պարտականությունը մեկնաբանվում է երկու ասպեկտով. նախ՝ որպես ակտիվորեն իրացվող պարտականություն, ի թիվս այլոց, ոչ գենդերազգայուն հաղորդակցման միջոցներից գերծ

<sup>46</sup> CEDAW, [General Recommendation 35](#), 2017, §48:

<sup>47</sup> Տե՛ս հոդում 10, 28-րդ և 30-րդ հոդվածներ:

<sup>48</sup> [ՀՀ դատական օրենսգրքի](#) 10-րդ հոդվածի համաձայն բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև: Դատարանի կողմից արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններն իրականացնելիս խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, զույթային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

<sup>49</sup> «Ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է՝ ... լինել անաչառ և գերծ մնալ իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելուց կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելուց, ... հարգալից և բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերել դատավարության մասնակիցների, դատավորների, դատարանի աշխատակազմի և բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ դատավորը շփվում է ի պաշտոնե»: ([ՀՀ Դատական օրենսգրքի](#), 7-րդ հոդված) [ՀՀ Դատական օրենսգրքի](#) 142-րդ հոդվածի համաձայն այս վարքագծի կանոնների խախտումը դատավորի կողմից հանդիսանում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք

մնալու առումով, և երկրորդ՝ նիստի վարման միջոցով գենդերազգայունության առումով անթույլատրելի հարցերը կանխելու, գործի քննությունը իրավաբանական նշանակություն ունեցող հանգամանքների քննությանը ուղղորդելու և հաղորդակցման հարգալից տոնն ու խոսույթը ապահովելու առումով:

3. Այն **հակասում է անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի արգելքին**<sup>50</sup>, քանի որ դատարանում տուժողին նվաստացնող հաղորդակցման միջոցները, մեղադրող ձևակերպումները կարող են առաջացնել վախի և ամոթի զգացում, որը հոգեբանական ճնշման ձև է: Ընտանեկան բռնության գործերով նման հարցերն ունեն տրավման խորացնող ազդեցություն, որը կարող է հասնել նվաստացուցիչ վերաբերմունքի շեմին:

Երբ դատարանում վերարտադրվում են սեռային կարծրատիպեր, տուժողը վախենում է կամ ամաչում է ամբողջական ցուցմունք տալ, ինչի հետևանքով **ապացույցների հավաքումն ու գնահատումը աղավաղվում է**: Այսինքն՝ **հավասարության իրական ապահովումը** տուժում է ոչ միայն ձևականորեն, այլև **բովանդակային արդյունքի** վրա ազդելով:

Այսպիսով՝ միջազգային և ներպետական նորմերը պահանջում են ապահովել գենդերային հավասարություն, բացառել գենդերային խտրականությունը և ստեղծել մատչելի, անվտանգ ու անաչառ դատական միջավայր՝ հատկապես ընտանեկան բռնության գործերով: Դատարանը, հանդես գալով պետության անունից, ունի ոչ միայն ոչ գենդերազգայուն հաղորդակցման միջոցներից **զերծ մնալու**, այլև դրանք **ակտիվորեն կանխելու՝ ուղիղ իրավական պարտականություն**:

#### **4.3. Գործնական ուղենշային գործելակերպեր ոչ գենդերազգայուն հաղորդակցության միջոցները (խոսքային և ոչ խոսքային) կանխելու և դրանց կառուցողական ու գենդերազգայուն կերպով արձագանքելու վերաբերյալ**

Գենդերազգայուն դատական մոտեցումը ենթադրում է, որ դատավորները ոչ միայն **պետք է անաչառորեն կիրառեն օրենքը**, այլև **դատաքննության ընթացքում չդրսևորեն ոչ գենդերազգայուն վարքագիծ, ինչպես նաև ակտիվորեն կանխեն այդպիսի վարքագծի դրսևորումը դատավարության մյուս մասնակիցների կողմից**:

Համաձայն միջազգային և ներպետական կարգավորումների՝ դատավորները պարտավոր են իրենց վարույթում գտնվող գործերը քննելիս՝

<sup>50</sup> «Վարույթի ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ֆիզիկական կամ հոգեկան բռնության, այդ թվում՝ դեղերի օգտագործման, սովի, ուժասպառման, հիպնոսի, բժշկական օգնությունից զրկվելու միջոցով: Արգելվում է անձից տեղեկություններ ստանալ բռնության, սպառնալիքի, խաբեության, նրա իրավունքների ոտնահարման, ինչպես նաև այլ անօրինական գործողությունների միջոցով» ([ՀՀ Զրեական դատավարության օրենսգիրք](#), 18-րդ հոդվածի 8-րդ մաս):

1. **Ճանաչել և չեզոքացնել գենդերային կարծրատիպերն ու նախապաշարմունքները՝** բացառելով միանշանակ պատճառահետևանքային կապերի հաստատումը կամ հերքումը (օրինակ՝ «Եթե իրականում բռնություն լիներ, նա կհեռանար»), կամ սոցիալական դերերի կանխավարկածները (օրինակ՝ «Կինը ընտանիքում պետք է հանդուրժող լինի»):

2. **Ապահովել, որ իրենց վարքագիծն ու դատավարական գործընթացը չհանդիսանան խտրականության աղբյուր,** ինչը պարունակում է իրավական, էթիկական և հոգեբանական բաղադրատարրեր: Էթիկական տեսանկյունից դատավորի վարքագիծը օրինակ է դատարանի մթնոլորտի համար. նրա խոսքը, ձայնի տոնը, մարմնի լեզուն ազդում են բոլոր մասնակիցների վրա: Հոգեբանական տեսանկյունից դատավորի վերաբերմունքի և որոշումների վրա կարող են էական ազդեցություն ունենալ **նույնիսկ չգիտակցված նախապաշարմունքները, ուստի խտրականության դրսևորման կանխումը էապես փոխկապակցված է դատավորի ինքնավերլուծության կարողության հետ:** Բացի դրանից՝ այլ անձանց հետ համեմատության շրջանակում հաղորդակցման նույնիսկ փոքր տարբերությունները կարող են էապես ազդել ոչ միայն տուժողի, այլև մյուսների կողմից իրավիճակին տրվող գնահատականի, տեղեկություններ հաղորդելու պատրաստակամության և դիրքորոշումների վրա:

3. **Ստեղծել միջավայր, որտեղ տուժողները կարող են արտահայտվել ազատ՝ առանց վախի, մեղադրանքի կամ սոցիալական ճնշման:** Դատավորը պետք է՝

- *Նիստի ընթացքում վերահսկի լարվածությունը՝ կանխելով վիրավորական կամ խտրական արտահայտությունները:*
- *Եթե դրանք հնչում են, արձագանքի հստակ, բայց չեզոք՝ առաջարկելով զերծ մնալ անձի արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններից:*

#### 4.4. Տուժողի վարքագծի գնահատման ուղենշային գործելակերպեր

Գենդերազգային մոտեցումները պահանջում են որոշակի առանձնահատուկ դիտարկումներ, որոնք բխում են տուժողների վարքագծային դրսևորումներից: Սովորաբար, հարցաքննությունների ընթացքում տուժողների վարքին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները<sup>51</sup>.

- Անտարբեր, չհետաքրքրված, նույնիսկ արգելակված լինելը (հաճախ անհրաժեշտություն է առաջանում հարցերը կրկնել մի քանի անգամ, խոսքի շարադրանքում առկա են լինում երկարատև դադարներ):
- Կատարված հանցագործության հանգամանքները մտաբերելու դժվարություններ, հիշողության բեկորայնություն (հաճախ շփոթում են իրողությունների հաջորդականությունը կամ բաց են թողում որոշ հանգամանքներ), ինչը միտումնավոր բնույթ չի կրում:

<sup>51</sup> Դրանք առավել արտահայտված են սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերում:

- Բռնությունն իր անձին չվերագրելը, այն որպես այլ անձի նկատմամբ կատարված գործողություն ներկայացնելը (հրադրությունները պատմում են երրորդ դեմքով):
- Վախ բռնարարի սպառնալիքներից իր և իր հարազատների անվտանգության համար, ինչի հետևանքով կարող է նաև ժխտել, որ ենթարկվել է բռնության՝ հետագա վրեժխնդրությունից կամ ճնշումներից խուսափելու նպատակով (հատկապես տարածված է ընտանեկան բռնության գործերում, լինում են անգամ դեպքեր, երբ բռնարարն ու զոհը շարունակում են ապրել նույն միջավայրում):
- Արժեզրկման և մեղադրանքի վախ (սոցիալական դատապարտման վախ. «Կմտածեն, որ ես եմ մեղավոր»):
- Ինքնամեղադրում (հաճախ համոզված են, որ իրենք են ինչ-որ ձևով հրահրել բռնությունը, ինչը դրսևորվում է հատկապես ընտանեկան բռնության գործերում):
- Կատարվածի արդյունքում ամոթի, տառապանքի, դժբախտ լինելու զգացողություն (ինչը տեսանելի է լինում արտաքին դրսևորումներում՝ կծկված նստել, փակ դիրք, տեսողական կոնտակտից խուսափում, ինչպես նաև հույզերն արտահայտելու դժվարություններով, դրանց վերաբերյալ խոսքային՝ հնարավոր է՝ աղքատիկ, բայց որոշակի մեկնաբանություններով, հնարավոր են նաև ինքնասպանության մտքերի, նույնիսկ ինքնասպանության փորձի դրսևորումներ):
- Հուսահատությունը և իրեն «խորտակված» անձ համարելը, ապագայի նկատմամբ պատկերացումների աղոտ լինելը (կարող է նշել, որ կատարվածից հետո չգիտի ինչպես է ապրելու, որ այլևս չի կարող լավ ապագայի հույս ունենալ):
- Հուզական կապվածությունը կամ թշնամանքը բռնարարի նկատմամբ (զոհի հոգեբանության առկայության և բռնարարի հետ տևական շփման պայմաններում վերջինիս նկատմամբ ձևավորվում են հակասական զգացողություններ, և հնարավոր է նույնիսկ, որ տուժողը փորձի արդարացնել բռնարարի վարքը):
- Խայտառակության վախը, չհասկացված լինելու զգացողությունը, ինչի արդյունքում դեպքի վերաբերյալ հարցադրումներ կատարող անձանց նկատմամբ կարող է ցուցաբերել մերժողական, անգամ թշնամական վերաբերմունք, առկա լինեն հոգեբանական կոնտակտի հաստատման դժվարություններ: Այս խնդիրն առավել ցայտուն է, երբ առկա է անվստահություն իրավապահ համակարգի նկատմամբ, քանի որ ուղեկցվում է այն խորքային համոզմունքով, որ եթե նույնիսկ պատմի ամբողջ ճշմարտությունը, մնալու է անպաշտպան և չհասկացված, և դա հանգեցնում է տեղեկությունների ոչ լիարժեք ներկայացմանը:

Կարևոր է ընդգծել, որ իրողությունների ապրման բարդություններն ու հուզական ռեակցիաներն անմիջականորեն կապված են տարիքային հոգեբանական առանձնահատկությունների (հատկապես անչափահասների դեպքում), մտավոր զարգացման մակարդակի, կատարվածի բնույթը և նշանակությունը, ինչպես նաև բարոյական և սոցիալական կողմերը հասկանալու կարողությունների և այլ գործոնների հետ: Կատարվածի բնույթը և նշանակությունը չհասկացող նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի անչափահասների կամ մտավոր զարգացման որևէ խնդիր ունեցող մեծահասակների դեպքում, բնականաբար, ապագայի վերաբերյալ մտորումներ, դրանց համապատասխան հուզական ռեակցիաներ չեն դրսևորվում: Սովորաբար նրանք կատարվածն ընկալում են որպես «վատ» բան, սակայն չեն կարողանում մեկնաբանել՝ ինչու է վատ, ընդ որում՝ եթե նրանց նկատմամբ կատարված գործողությունները ֆիզիկական ցավ չեն պատճառել նրանց, ապա տուժողը նույնիսկ դեպքի պահին և դրանից անմիջապես հետո կարող է որևէ արտառոց հոգեվիճակ չունենալ և առավել բուռն հուզական ռեակցիաներ սկսեն դրսևորվել միայն այն ժամանակ, երբ ծնողներն ու հարազատները, տեղեկանալով կատարվածի մասին, արտահայտեն իրենց զայրույթը, մտահոգությունները, հանցագործին պատժելու անխուսափելիությունը, և տուժողը, իրավիճակը մեկնաբանելով որպես իր հետ տեղի ունեցած արտասովոր, ոչ ցանկալի, ամոթալի ինչ-որ երևույթ, ունենա լարված հոգեվիճակ:

Բոլոր այն դեպքերում, երբ տուժողի հոգեվիճակում հարցաքննության ընթացքում դրսևորվում են դեպքը ներկայացնելու հոգեբանական խոչընդոտներ, էական կարևորություն են ստանում դատավորի արձագանքման հմտությունները, որոնց միջոցով նա կարող է օգնել տուժողին՝ հաղթահարելու այդ վիճակը: Օրինակ՝ եթե տուժողը դժվարանում է պատմել, դատավորը կարող է ասել. «Ես հասկանում եմ, որ դժվար է այդ մասին խոսել: Կխնդրեմ շարունակել այն չափով, որքան կկարողանաք, այնուհետև կփորձենք կոնկրետ հարցադրումների միջոցով ամբողջացնել»:

**Հաշվի առնելով տեղեկությունների ձեռքբերման ամբողջականության կարևորության համատեքստում դատավորների կողմից իրավիճակի բազմակողմանի գնահատման նշանակությունը և ելնելով վերոնշյալ մի շարք առանձնահատկություններից՝ անհրաժեշտ է ընդգծել, որ տուժողների տված հակասական կամ ոչ լիարժեք ցուցմունքները հնարավոր է՝ կապված են տրավմայի հոգեբանական ազդեցության, ոչ թե զոհի անկեղծության պակասի կամ ոչ արժանահավատ տեղեկություններ հաղորդելու միտվածության հետ, իսկ տուժողի հուզական արձագանքները (թուլություն, լռություն, լաց կամ նույնիսկ անտարբերություն) ցուցմունքի արժանահավատության ցուցիչ չեն:**

Դատական պրակտիկայում հաճախ հանդիպող իրավիճակ է նաև հարցաքննվող անձանց կողմից դեպքերը ըստ էության չներկայացնելը, թեմայից հեռանալը, որի դեպքում, հաշվի առնելով տուժողների կողմից բոլոր հանգամանքները ներկայացնելու գերկարևորությունը և դրանց շրջանակներում դատավորի արձագանքի նկատմամբ զգայունությունը՝ կարևոր է ապահովել իրավիճակի նկատմամբ հասկացում՝ միևնույն ժամանակ նպաստելով իրողությունների ներ-

կայացման կոնկրետացմանը (օրինակ՝ «Ես հասկանում եմ, որ սա կարևոր է Ձեզ համար, բայց, խնդրում եմ, վերադառնանք դեպքի ժամանակագրությանը»):

Հարցաքննության արդյունավետությանը նպաստող գործոնների մեթոդական կարևոր առանձնահատկություն և կրկնակի զոհայնացման չեզոքացման գործոն է հարցաքննության դրական ավարտը՝ ամփոփումը կատարելով առանց գնահատական տալու և դրական հետադարձ կապ ապահովելով (օրինակ՝ «Շնորհակալություն Ձեր պատմությունը ներկայացնելու համար: Ձեր պատրաստակամությունը շատ կարևոր է», իսկ անչափահասների դեպքում՝ ըստ տարիքի նաև նրանց հասկանալի բառապաշարով և առավել հարմարեցված լեզվական միջոցներով):

Վերոնշյալ մեթոդական դիտարկումները դատավորի կողմից պետք է ապահովեն երկու հիմնական երաշխիք՝

- տուժողի արժանապատվության պաշտպանություն.
- փաստական ճշգրտության ապահովում՝ առանց սեռային կողմնակալությունների:

**Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ գենդերազգային հարցաքննությունը չի նշանակում մեղադրյալի իրավունքների սահմանափակում, այլ ապահովում է, որ տուժողը հավասար պայմաններում ներկայացնի իր վկայությունը: Այս մոտեցումը նվազեցնում է սուբյեկտիվ կարծիքների ազդեցությունը և բարձրացնում է դատարանի որոշման լեգիտիմությունը:**



### Թեմայի նպատակն է՝

- ✓ ներկայացնել ընտանեկան բռնության գործերով քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքների կիրառման առանձնահատկությունները.
- ✓ ներկայացնել իրավական նորմերի գենդերազգայուն մեկնաբանման և կիրառման կարևորությունը.
- ✓ տրամադրել գործնական ուղենշային գործելակերպեր մեղմացնող հանգամանքների գենդերազգայուն կիրառման վերաբերյալ:

### 5.1. Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները ընտանեկան բռնության գործերով

Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքների ինստիտուտը պատժի անհատականացման կարևորագույն գործիք է: Այն հնարավորություն է տալիս դատավորին որոշակի դեպքերում նվազեցնել պատժի չափը՝ հաշվի առնելով հանցանքի համատեքստը, հանցանք կատարած անձի վարքագիծը, սոցիալական ու առողջության հետ կապված հանգամանքները: Մեղմացնող հանգամանքների կիրառումը դատարանի կողմից թույլ է տալիս ավելի մեղմ պատիժ նշանակել:

Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով<sup>52</sup>: Պատիժ նշա-

<sup>52</sup> Քրեական պատասխանատվությունը կամ պատիժը մեղմացնող հանգամանքներն են՝

- 1) հանցանքը հանգամանքների պատահական զուգորդմամբ առաջին անգամ կատարելը.
- 2) հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի հղիությունը.
- 3) հանցանք կատարելու կամ պատիժ նշանակելու պահին հանցավորի 65 տարին լրացած լինելը.
- 4) պատիժ նշանակելու պահին հանցանք կատարած անձի խնամքի տակ անչափահասի կամ հաշմանդամություն ունեցող անձի առկայությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցանքը կատարվել է խնամքի տակ գտնվող անձի նկատմամբ.
- 5) հանցանքը կյանքի ծանր հանգամանքների զուգորդմամբ կատարելը.
- 6) հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը.
- 7) հանցանքը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները խախտելով կատարելը.
- 8) հանցանքը հանցագործությունից տուժած անձի հակաիրավական վարքագծի ազդեցության տակ կատարելը.
- 9) հանցանքը սպառնալիքի, հարկադրանքի կամ այն անձի ազդեցությամբ կատարելը, որից հանցավորը գտնվում է նյութական, ծառայողական կամ այլ կախվածության տակ.
- 10) հանցանք կատարած անձի՝ մեղայականով ներկայանալը, հանցագործությունը, հանցա-

նակելիս դատարանը կարող է հաշվի առնել այս ցանկով չնախատեսված մեղմացնող այլ հանգամանքներ:

Թվարկված մեղմացնող հանգամանքներից յուրաքանչյուրի, ինչպես նաև այլ մեղմացնող հանգամանքների կիրառումը կոնկրետ գործով ենթակա է գնահատման դատարանի կողմից: Սակայն ընտանեկան բռնության գործերով քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների կիրառումն ունի յուրահատուկ **զգայունություն** և **բարդություններ**, քանի որ այն կարող է՝

- ✓ թուլացնել պատժի կանխարգելիչ և պաշտպանական նշանակությունը.
- ✓ ոչ միանշանակ ընկալվել հասարակության կողմից՝ որպես բռնության հանդուրժում կամ անտեսում.
- ✓ վտանգի տակ դնել տուժողին՝ բռնարարի հետ կրկին առնչվելու առումով:

Այս պատճառով, ընտանեկան բռնության գործերով դատավորները պետք է գնահատեն մեղմացնող հանգամանքները գենդերազգային տեսանկյունից՝ **մարդու իրավունքների և գենդերային հավասարության սկզբունքներին համահունչ**, հաշվի առնեն **իշխող հարաբերությունների անհավասարությունը, վախի մթնոլորտը, բռնության կրկնվող բնույթը և այլ հանգամանքներ**, որոնք հատուկ են ընտանեկան բռնության գործերին:

Մեղադրյալի սոցիալական կարգավիճակը կամ ծնող լինելու հանգամանքը **չեն կարող դիտարկվել որպես մեղմացնող հանգամանքներ**:

*Օրինակ՝ դատարանները ընտանեկան բռնության գործերով հաճախ կիրառում են մեղադրյալի՝ անչափահաս երեխաներ ունենալը որպես մեղմացնող հանգամանք<sup>53</sup>, մինչդեռ անչափահաս երեխաներ ունենալը ոչ միայն չի կարող դիտարկվել որպես մեղմացնող հանգամանք, այլև հակառակը՝ պետք է դիտվի որպես արարքի վտանգավորությունը մեծացնող հանգամանք, քանի որ բռնարար ծնողի գործողությունները բացասաբար են անդրադառնում երեխաների հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Ընդ որում՝ երեխաների վրա ընտանեկան բռնության բացասական ազդեցությունը պետք է որոշիչ հանգամանք լինի ոչ միայն այն դեպքում, երբ երեխան ֆիզիկապես ներկա է եղել և տեսել է բռնությունը, այլ նաև այն դեպքերում, երբ ֆիզիկապես ներկա չի եղել, սակայն կարողացել է լսել և հետագայում տեսնել բռնության հետևանքները, ինչպես նաև այն դեպքերում, երբ ֆիզիկապես ներկա չի եղել, չի կարողացել լսել, սակայն հետագայում տեսել է բռնության հետևանքները:*

Դատարանները պետք է առաջնորդվեն այն սկզբունքով, որ երեխան պետք է մեծանա անվտանգ, բռնությունից զերծ միջավայրում, ինչը առաջնահերթ և բա-

---

գործության այլ մասնակցին բացահայտելուն, հանցագործությամբ ձեռք բերված գույքը որոնելուն, գործով ապացույց ձեռք բերելուն աջակցելը.

11) հանցանք կատարած անձի կողմից հանցագործությունից հետո հանցագործությունից տուժած անձին բժշկական կամ այլ օգնություն ցույց տալը.

12) հանցանք կատարած անձի կողմից հանցագործությամբ պատճառված վնասը կամովին հատուցելուն կամ այլ կերպ հարթելուն ուղղված գործողություն կատարելը:

<sup>53</sup> «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ և «Իրավունքի ուժ» ՀԿ, [«2022-2024 թթ. ընտանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները» զեկույց](#), 2025, էջ 66:

ցարձակ իրավունք է: Ընտանեկան բռնության գործերով դատարանները պետք է որպես առաջնահերթություն գնահատեն տուժողի և անչափահաս երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը, այլ ոչ թե բռնարարի անձնական հանգամանքները, այդ թվում՝ ծնող լինելը:

Հարկ է նշել, որ, ԵԽ կոնվենցիայի համաձայն, երեխաների ներկայությամբ ընտանեկան բռնության գործերով հանցանքը երեխաների ներկայությամբ կատարելը դիտարկվում է պատիժը և քրեական պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք<sup>54</sup>: Հետևաբար, դատավորները պետք է զերծ մնան իրավական նորմերի այնպիսի մեկնաբանումից և կիրառությունից, որը, ի վնաս տուժողի և երեխաների շահերի, հանգեցնում է պատժի անհամաչափ մեղմման՝ հատկապես այն դեպքերում, երբ բռնարարի սոցիալական կամ ընտանեկան կարգավիճակը ներկայացվում է որպես արդարացում կամ մեղմացնող հանգամանք:

*Որոշ դեպքերում դատարանները ընտանեկան բռնության գործերով որպես մեղմացնող հանգամանք են դիտարկում մեղադրյալի պաշտոնական դիրքը (օրինակ՝ զինվորական լինելը) կամ աշխատանքի վայրից տրված դրական բնութագրերը<sup>55</sup>, մինչդեռ մեղադրյալի սոցիալական ազդեցիկ, իշխանական կամ պաշտոնական դիրքը չի կարող համարվել պատիժը մեղմացնող հանգամանք ընտանեկան բռնության գործերով: Այն փաստը, որ մեղադրյալը զբաղեցնում է սոցիալական ազդեցիկ դիրք և/կամ իրականացնում է հանրային ծառայություն (օրինակ՝ ոստիկանության ծառայող, քաղաքացիական ծառայող և այլն), չի կարող դիտվել ավելի մեղմ պատժի հիմք և չպետք է ընկալվի որպես նրա «դրական բնութագրի» հաստատում: Ավելին՝ հանրային գործառույթ իրականացնող անձինք դատարանում չպետք է արժանանան որևէ հատուկ կամ արտոնյալ վերաբերմունքի:*

## **5.2. Դատարանների կողմից իրավական նորմերի գենդերազգայուն մեկնաբանման և կիրառման կարևորությունը**

Քրեական դատավարության հստակ և հետևողական արձագանքը ընտանեկան բռնության գործերին կարևոր կանխարգելիչ ազդեցություն ունի: Բռնարարներն իրենց գործողությունների համար պետք է կրեն անխուսափելի պատասխանատվության միջոցներ, որոնց ապահովման հարցում առանցքային դեր են կատարում դատավորները: Ընտանեկան բռնության գործերով պատիժների պայմանական չկիրառումը և մեղմ պատիժները կարող են հանրության մեջ չձևավորել այն ընկալումը, որ ընտանեկան բռնությունը հասարակության կողմից սոցիալապես անընդունելի վարքագիծ է: Իրականում նման դատական արձագանքը կարող է փոխանցել հակառակ ուղերձը՝ մեծացնելով անպատժելիության զգացողությունը և բռնարարի ինքնավստահությունը: Դատավորները կարող են և պարտավոր են պաշտպանել տուժողի անվտանգությունը և ապահովել բռնարարի պատասխանատվությունը՝ գենդերազգայուն կերպով կիրառելով իրավական նորմերը:

<sup>54</sup> [Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին](#), 2011, 46-րդ հոդված:

<sup>55</sup> Տե՛ս հղում 53:

Դատավորները լայն հայեցողություն ունեն իրավանորմերը մեկնաբանելու և կիրառելու հարցում, սակայն այդ հայեցողությունը երբեմն կարող է օգտագործվել այնպես, որ կասկածի տակ դրվի բռնարարի պատասխանատվությունը: Օրինակ՝ մեղմացնող հանգամանքները հաշվի առնելով՝ պատժի պայմանական չկիրառումը կամ մեղմ պատիժ նշանակելը կարող է խորացնել բռնարարի համոզմունքը, որ ինքը իրավասու է ուժ կիրառել, և որ այդ բռնությունը չի պատժվելու: Դատական համակարգի նման արձագանքը ձևավորում է համոզմունք, որ դատարանը ընտանեկան բռնությունը չի համարում լուրջ հանցագործություն, և, ամենայն հավանականությամբ, այն կմնա անպատիժ:

Դատական որոշումների կայացումը կիրառման ենթակա իրավական նորմերի գենդերազգայուն մեկնաբանման միջոցով հնարավորություն է տալիս դատարաններին՝ իրականություն դարձնել հավասարության իրավունքը: Սահմանադրական և միջազգային իրավական նորմերը պետություններին պարտավորեցնում են վերացնել խտրականության բոլոր ձևերը: Այդ պարտավորությունների իրականացման կարևորագույն մեխանիզմ է դատական համակարգը: Հետևաբար, դատավորները պետք է կարողանան երաշխավորել արդարադատության մատչելիությունն ու հասցեագրել հավասարության սկզբունքի խախտումներն իրենց վարույթում գտնվող գործերում: Այս մանդատի իրականացման համար կարևոր է իրավանորմերի գենդերազգայուն մեկնաբանումն ու կիրառումը:

Իրավական նորմերի գենդերազգայուն մեկնաբանությունը նորմատիվ իրավական ակտերի դրույթների այնպիսի մեկնաբանությունն է, որը երաշխավորում է իրավահավասարությունը և հարգանքը մարդու արժանապատվության նկատմամբ, ճանաչում է այն հանգամանքը, որ միևնույն նորմը կարող է տարբեր ազդեցություն ունենալ կանանց և տղամարդկանց վրա, և չի վերարտադրում հասարակության մեջ առկա գենդերային կարծրատիպերը:

Քրեական պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների վերաբերյալ իրավանորմերը մեկնաբանելիս և կիրառելիս դատարանը պարտավոր է դատական ակտում ներկայացնել համակողմանի պատճառաբանություն (լիարժեք բացատրություն) այն մասին, թե ինչու է այս կամ այն հանգամանքը դատարանի կողմից տվյալ գործով դիտարկվել որպես մեղմացնող հանգամանք:

### 5.3. Գործնական ուղենշային գործելակերպեր պատիժը մեղմացնող հանգամանքների գենդերազգայուն կիրառման վերաբերյալ

**Մեղմացնող հանգամանքների վերաբերյալ իրավանորմերի գենդերազգայուն մեկնաբանման և կիրառման ժամանակ դատավորները պետք է հաշվի առնեն հետևյալը.**

- ✓ **Իրավական նորմերի նպատակային մեկնաբանում:** Իրավական նորմերը պետք է «կարդալ»՝ հաշվի առնելով դրանց նպատակը (բռնությունից պաշտպանություն, արդյունավետ միջոց), ինչպես նաև իրավահավասարության, արժանապատվության, խտրականության արգելքի սահմանադրաիրավական և միջազգային իրավական երաշխիքներն ու պարտականությունները:

- ✓ **Ընտանեկան բռնության համատեքստի ամբողջական վերլուծություն:** Նորմերը մեկնաբանելիս պետք է հաշվի առնել ընտանեկան բռնության համատեքստը՝ վերլուծելով ոչ թե միայն մեկ դրվագ, այլ ընտանեկան բռնության ամբողջ դինամիկան (վերահսկողություն, մեկուսացում, տնտեսական կախվածություն, սպառնալիքներ և այլն):
- ✓ **Տուժողի և երեխայի անվտանգության առաջնահերթություն:** Մեղմացնող հանգամանք կիրառելիս պետք է ստուգել՝ արդյոք դա չի՞ վտանգում տուժողի/երեխաների անվտանգությունը: Եթե իրավական նորմը պարունակում է գնահատողական եզրույթներ («ողջամիտ», «անհրաժեշտ», «անխուսափելի»), ապա իրավաչափության ու համաչափության սկզբունքներին համապատասխան պետք է այնպիսի մեկնաբանություն ընտրել, որը չի վտանգում տուժողի կամ երեխայի անվտանգությունը:
- ✓ **Տուժողի դիրքորոշման ոչ որոշիչ բնույթը:** Պատժի մեղմացման վերաբերյալ տուժողի դիրքորոշումը չպետք է դիտարկել որպես «որոշիչ» հանգամանք՝ մեղմացնող հանգամանքների կիրառման համար: Դատավորը պետք է, նախ, գնահատի ճնշման, կախվածության և վախի գործոնները:
- ✓ **Տրավմայի վերաբերյալ տեղեկացված մեկնաբանում:** Պետք է մեկնաբանել իրավական նորմերը տուժողի «տրավմայի» վերաբերյալ տեղեկացվածության տեսանկյունից: «Տրավման» և հարկադրական վերահսկողությունը կարող են էականորեն ձևավորել անձի վարքը՝ ներառյալ ուշ ներկայացված հաղորդումը, հատվածային կամ հակասական հիշողությունը, ինչպես նաև շարունակական շփումը բռնարարի հետ:
- ✓ **Գենդերային կարծրատիպերի վրա հիմնված մեղմացնող հանգամանքների բացառումը:** Պետք է բացառել գենդերային կարծրատիպերի վրա հիմնված մեղմացնող հանգամանքների կիրառումը: «Ընտանիքի միակ կերակրող», «ընտանիքի պատիվ», «փոխադարձ կոնֆլիկտ» և այլ բնութագրումները չպետք է նվազեցնեն պատասխանատվությունը:

#### **5.4. Գործնական ուղենշային գործելակերպեր համակողմանի հոգեբանական գնահատման համատեքստում**

Ընտանեկան բռնության գործերով պատժի մեղմացնող հանգամանքների գնահատման շրջանակներում հոգեբանական դիտարկումները պարտադիր բաղադրիչ են, քանի որ ընտանեկան բռնության գործերով քրեական պատասխանատվության և պատիժը մեղմացնող հանգամանքների կիրառման գործընթացը պահանջում է ոչ միայն իրավական, այլև հոգեբանական բազմաչափ վերլուծություն, ինչի շրջանակներում էական կարևորություն ունեն նաև դատահոգեբանական փորձաքննության միջոցով ստացված արդյունքները, իսկ եթե առկա են նաև տեղեկություններ հոգեկան առողջության խնդիրների կամ վարքի ոչ լիարժեք ադեկվատության համատեքստում, ապա՝ դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննության եզրակացություններով ստացված տվյալ-

ները: Հանցագործության շարժառիթների, հանցավոր արարք կատարած անձի և տուժողի հոգեբանական վիճակի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել այն գործոնները, որոնք էական են արդար և գենդերազգային դատական գնահատման համար: Հատկանշական է, որ իրավական տեսանկյունից էական նշանակություն ունի բռնության արդյունքում տուժողին հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը բացառելու հանգամանքը, որը գնահատման ենթակա է դատահոգեբանական փորձաքննության միջոցով, իսկ ընդհանուր գործոնների տարրաբաժանման համատեքստում կարելի է առանձնացնել:

### **1. Հոգեկան առողջության և պատասխանատվության կարողության տարբերակման անհրաժեշտությունը**

Բռնություն գործադրող անձի վարքի մոտիվացիոն հիմքի և հանցանքի պահին հուզական վիճակի (ինչն էական իրավական նշանակություն ունի միջին և ծանր աստիճանի մարմնական վնասվածքներ հասցնելու և սպանության դեպքերում հոգեկան խիստ հուզմունքի վիճակի որակման առումով) ճշգրիտ գնահատման անհրաժեշտություն, որը կարող է նաև ուղենշային լինել հետագա վարքի կանխատեսման առումով:

Հուզական անկայունությունը կամ անձնային շեղումները միշտ չէ, որ համարժեք են հոգեկան խանգարմանը: Հոգեբանական տեսանկյունից անհրաժեշտ է տարբերակել, թե արդյոք հանցանքը կատարվել է ուժեղ հուզական պոռթկման և ինքնատիրապետման իրական կորստի պայմաններում, թե՛ այն արտահայտել է բռնարար վարքի կայուն ձև՝ հիմնված վերահսկման և իշխանության պահպանման վրա: Ընտանեկան բռնության դեպքերում, ի տարբերություն այլ հանցագործությունների, բռնարար վարքը հաճախ համակարգային և նպատակային է, ունի վերահսկող բնույթ, ընդ որում՝ նույնիսկ որոշակի հուզական իրավիճակային բուռն հակազդումների հակվածության դեպքում, եթե առկա չէ մասնագիտական այնպիսի եզրակացություն, համաձայն որի՝ բռնություն գործադրողը չէր կարող հաշիվ տալ իր գործողությունների համար և կառավարել սեփական վարքը (ինչը հոգեկան առողջության խնդիրների հետևանք է և գնահատվում է հոգեբույժ-փորձագետի կողմից) կամ առկա է եղել աֆեկտիվ հակազդում (ինչը իրավիճակային բնույթ է կրում և գնահատման ենթակա է հոգեբան-փորձագետի կողմից), ապա անհրաժեշտ է դիտարկել նրա վարքի կամային բնույթը և կրկնման բարձր ռիսկայնությունը:

### **2. Գենդերային կարծրատիպերի և անգիտակցական կողմնակալությունների ազդեցությունը**

Դատական պրակտիկայում հաճախ գործարկվում են գենդերային կարծրատիպեր և անգիտակցական կողմնակալություններ, որոնք կարող են էականորեն խեղաթյուրել իրավիճակի ընկալումը և ազդել մեղմացումների կիրառման վրա: Այս կողմնակալությունները դրսևորվում են այնպիսի ենթագիտակցական դատողություններով, որոնք վերարտադրում են ավանդական սեռային դերերը և խոչընդոտում արդար քննությանը: Օրինակ՝ տղամարդ բռնարարների դեպքում

հաճախ կիրառվում է «ինքնատիրապետման կորստի» փաստարկը՝ «մի պահ իրեն չի տիրապետել», մինչդեռ կանանց նկատմամբ բռնության զոհերը կարող են ընկալվել որպես «սադրիչ» կամ «պասիվ»՝ դրանով իսկ նվազեցնելով նրանց ցուցմունքների արժանահավատությունը և փորձառությունները: Հոգեբանական կրթվածությունը և գենդերազգային իրազեկությունը նպաստում են այս կողմնակալությունների գիտակցմանը և չեզոքացմանը՝ ապահովելով հավասար և օբյեկտիվ դատական մոտեցում:

### **3. Բռնարարի անձնային կառուցվածքը և վերասոցիալականացման հեռանկարը**

Բռնարար վարք դրսևորող անձանց մոտ հաճախ առկա են նարցիստական, հակասոցիալական կամ կախվածության անձնային արտահայտված գծեր, որոնց առկայության դեպքում պատժի մեղմացումը պետք է զուգակցվի հոգեբանական վերականգնողական միջամտություններով՝

- զայրույթի և իմպուլսների կառավարման ուսուցում.
- էմպաթիայի և պատասխանատվության ձևավորում.
- գենդերային դերերի վերաիմաստավորում:

Այս մոտեցումը թույլ է տալիս, որ պատժի մեղմացումը չդառնա սոցիալական վտանգի բարձրացման պատճառ, այլ՝ վերասոցիալականացման հնարավորություն, հավասարակշռում է պատժի իրավական բովանդակությունն ու դրա հոգեբանական բաղադրատարրը՝ նպաստելով ընտանեկան բռնության դեպքերի արդյունավետ կանխարգելմանը և հանրային անվտանգության ամրապնդմանը:

## **Հիփոթետիկ գործ Գործի փաստական հանգամանքներ**

**Քաղաքացիներ Ա.Ա.-ն և Գ.Գ.-ն ամուսնացած են արդեն 10 տարի: Նրանք ունեն երկու անչափահաս երեխա՝ 5 և 7 տարեկան: 2024 թ. դեկտեմբերի 15-ին նրանց հարևանը զանգահարել է ոստիկանություն և հայտնել, որ Ա.Ա.-ի և Գ.Գ.-ի 7-ամյա երեխան դրսում է՝ առանց վերարկուի և կոշիկների, և լաց է լինում, իսկ նրանց տնից վեճի ձայներ են գալիս:**

Երբ ոստիկանները ժամանել են, ամուսինը (Ա.Ա.) շատ հանգիստ է եղել, իսկ կինը (Գ.Գ.)՝ բղավել է և լացել: Երկու երեխաներն էլ տանն են եղել, ծնողների հետ նույն սենյակում և նույնպես լացել են: Կինը պնդել է, որ ամուսինը իրեն ծեծի է ենթարկել, ապտակել դեմքին և հարվածել մարմնի տարբեր մասերին: Ամուսինը պնդել է, որ ուժ չի գործադրել, միայն մեկ անգամ ապտակել է կնոջը, քանի որ վերջինս իրեն խիստ զայրացրել է կենցաղային վեճի ժամանակ:

### **Գործով առկա լրացուցիչ տեղեկություններ**

- Ոստիկանների հարցին ի պատասխան՝ ամուսինները նշել են, որ երեխաները իրենց վեճի ժամանակ ներկա չեն եղել: Նրանք տանն են եղել, մեկ այլ սենյակում: Ծնողներից ոչ մեկը տեղյակ չի եղել, որ իրենց վեճի ընթացքում 7-ամյա երեխան լաց լինելով դուրս է եկել տնից առանց վերարկուի և կոշիկների:
- Ոստիկանները զրուցել են 7-ամյա երեխայի հետ, որն ասել է, որ երբեմն «հայրիկը մաքրում է իր զենքը, երբ նյարդայնանում է, և դա վախեցնում է մայրիկին»:
- Ոստիկանները նշում են, որ ամուսինը ավագանու անդամ է և համայնքում բարձր հեղինակություն ունի:

### **5.5. Դատարանի պատճառաբանությունը (բացառապես մեղմացնող հանգամանքների գենդերազգայուն գնահատման մասով)**

Դատարանը մեղմացնող հանգամանք է համարում այն, որ մեղադրյալը նախկինում դատապարտված չի եղել: Պաշտպանը միջնորդել է պատիժը մեղմացնող հանգամանք համարել այն, որ դատավարության ընթացքում մեղադրյալը դրսևորել է օրինակելի վարք ինչպես դատարանի, այնպես էլ դատավարության մասնակիցների, ներառյալ՝ տուժողի նկատմամբ: Սակայն դատարանը մեղադրյալի այս «օրինակելի» վարքագիծը չի գնահատում որպես քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, քանի որ նման վարքագիծ ակնկալվում է բոլոր մեղադրյալներից և բոլոր այն անձանցից, որոնք ներկայանում են դատարան քրեական վարույթի շրջանակում: Այդ վարքը դիտվում է որպես դատա-

րանի հանդեպ ցուցաբերվող ընդհանուր նորմ, ոչ թե որպես մեղադրյալի դրական բնութագրի ապացույց, ինչպես պնդում է պաշտպանական կողմը:

Բացի դրանից՝ դատարանն անհրաժեշտ է համարում մեկնաբանել մի շարք հանգամանքների վերաբերյալ իր մոտեցումը՝ հաշվի առնելով, որ պաշտպանական կողմը հատկապես շեշտադրել է դրանց կարևորությունը դատաքննության ընթացքում: Պաշտպանական կողմը նշել է, որ մեղադրյալը քաղաքական գործիչ է և «որպես ավագանու անդամ՝ համայնքում հարգանք է վայելում»: Դատարանը այս հանգամանքը չի գնահատում որպես քրեական պատիժը մեղմացնող հանգամանք, քանի որ հասարակական պարտականություն կատարող անձինք կամ հանրային պաշտոն զբաղեցնող և հանրային հարգանք վայելող քաղաքացիները չունեն դատարանի կողմից հատուկ վերաբերմունքի իրավունք: Բոլորը հավասար են օրենքի առջև: Դատարանը չի համարում մեղադրյալի քաղաքական կարիերան և համայնքի վերաբերմունքը որպես նրա «դրական բնութագրի» ապացույց, ինչպես ներկայացրել էր պաշտպանական կողմը: Դատարանը համարում է, որ մեղադրյալի հանրային համբավը չի կարող գերակայել նրա՝ անձնական կյանքում ցուցաբերած վարքագծի, հատկապես ընտանեկան բռնության՝ գործով հաստատված փաստերի նկատմամբ:

Դատարանը մեղադրյալի՝ խնամքին երկու անչափահաս երեխա ունենալու հանգամանքը ևս չի գնահատում որպես քրեական պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք, ինչպես պնդում է պաշտպանական կողմը: Դատարանի գնահատականը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ընտանեկան բռնությունը տեղի է ունեցել երկու մանկահասակ երեխաների ներկայությամբ, որոնք գուցե ուղղակի չեն տեսել բռնությունը, բայց հստակ լսել են այն և հետո ականատես են եղել դրա հետևանքներին: Ավելին՝ 7-ամյա երեխան բռնության դրվագի ժամանակ հայտնաբերվել է դրսում՝ առանց վերարկուի և կոշիկների, լաց լինելիս: Հետևաբար, երեխաները անուղղակի կերպով ենթարկվել են ընտանեկան բռնության, ինչը բացասաբար է ազդում նրանց հոգեբանական ներդաշնակ զարգացման վրա:



**Թեմայի նպատակն է՝**

- ✓ ներկայացնել ընտանեկան բռնության գործերով դատարանում տուժողի անվտանգության ապահովման կարևորությունը.
- ✓ ապահովել դատավորների իրազեկվածությունը և կարողությունը՝ ընտանեկան բռնության գործերով դատավարությունների ընթացքում երաշխավորելու տուժող(ներ)ի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը՝ հաշվի առնելով գենդերազգայուն արդարադատության սկզբունքները.
- ✓ ներկայացնել գործնական ուղենշային գործելակերպեր՝ դատարանում տուժողի անվտանգության ապահովման վերաբերյալ:

**6.1. Ընտանեկան բռնության գործերով դատարանում տուժողի անվտանգության ապահովման կարևորությունը**

Ընտանեկան բռնության գործերով դատավարություններն առանձնահատուկ զգայուն են տուժողի ֆիզիկական և հոգեբանական անվտանգության, ինչպես նաև դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից: Տուժողները հաճախ դատական պրոցեսի ընթացքում կրկին ենթարկվում են բռնության կամ դրա սպառնալիքի, ինչպես նաև վերատրավմատիզացիայի, ինչը կարող է խաթարել արդարադատության իրականացման ամբողջ գործընթացը:

Այս համատեքստում, դատարանը կարևոր դեր է կատարում ոչ միայն օրենքի կիրարկման, այլ նաև անձի անվտանգության և արժանապատվության երաշխավորման գործում: Անվտանգ, ոչ խտրական ու արդար դատական միջավայրի ստեղծումը առանցքային է՝ գենդերազգայուն և զրհակենտրոն արդարադատության իրագործման համար:

Տուժողի անվտանգության գնահատման համար չի կարող հիմք ընդունվել միայն հանցագործության մեկ դրվագը: Տուժողի պաշտպանվածությունն ապահովելու համար տվյալ հանցագործությունը պետք է դիտարկել ավելի լայն՝ սոցիալ-մշակութային և վարքագծային համատեքստում, որպեսզի բացահայտվի բռնարարի հետ հարաբերություններում առկա բռնության իրական ծավալը: Այդպես դատարանը կարող է ամբողջական գնահատել մեղադրյալի (կամ կասկածյալի) առաջացրած ռիսկը՝ թե՛ տուժողի, թե՛ հասարակության համար:

Տուժողի իրավունքների արդյունավետ իրացման (այդ թվում՝ արդար դատաքննության իրավունքի) հիմնական պայմաններից մեկը **դատավարությանը** նրա **անվտանգ մասնակցությունն է**: Եթե տուժողն իրեն պաշտպանված չզգա

դատարանում, ապա նա կարող է հրաժարվել ցուցմունք տալուց, ենթարկվել լուրջ հոգեբանական ճնշման, որի հետևանքով կարող է ունենալ առողջական խնդիրներ, իսկ որոշ դեպքերում՝ նորից ենթարկվել բռնության:

**Դատարանում տուժողի անվտանգության ապահովման համար կարևոր գործիք է վտանգի վերլուծությունն ու գնահատումը, որը** պետք է ընկալվի որպես գործի ոչ ֆորմալ, բայց կարևոր բաղադրիչ: Այն կարող է ազդել դատավարական գործընթացի ձևավորման վրա (օրինակ՝ հեռավար մասնակցություն, առանձին լուսններ), ինչպես նաև դատավարության մասնակիցների կողմից ցուցմունք տալու կարգի փոփոխման վրա (օրինակ՝ առանց ամբաստանյալի հետ անմիջական շփման):

Տուժողի անվտանգությունը կարող է ապահովվել դատավարական մեխանիզմների ճկուն և հարմարեցված ձևերի օգտագործման միջոցով, որոնք միաժամանակ համատեղում են արդար դատաքննության սկզբունքների պահպանումը բոլոր կողմերի համար: Այդպիսիք ներառում են՝

1. **Վիրտուալ կամ հեռավար մասնակցության հնարավորությունը:** Տուժողի մասնակցությունն ապահովելու նպատակով դատարանը կարող է կիրառել **տեսահեռարձակման կամ այլ հեռահար տեխնոլոգիական միջոցներ**, որոնք հնարավորություն են տալիս նրան մասնակցել դատավարությանը առանց դատարանում ֆիզիկապես ներկա լինելու: Այս միջոցի կիրառումը նվազեցնում է տուժողի՝ ուղղակի կամ անուղղակի կոնտակտի հավանականությունը ամբաստանյալի հետ, կրճատում է հուզական լարվածությունն ու վերատրավմատիզացիայի վտանգը՝ ընդգծելով դատարանի գենդերազգայուն և մարդակենտրոն վերաբերմունքը: Հեռավար մասնակցությունը պետք է կազմակերպվի տեխնիկապես հուսալի և վստահելի պայմաններում՝ ապահովելով անհրաժեշտ գաղտնիություն և անխափան կապ:
2. **Տուժողի և ամբաստանյալի ֆիզիկական տարանջատումը:** Դատարանը կարող է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ **նիստերի ընթացքում տուժողի և ամբաստանյալի միջև ֆիզիկական տարանջատում ապահովելու համար:** Այս միջոցները ներառում են նիստերի դահլիճում տուժողի և ամբաստանյալի նստատեղերի դասավորություն այնպես, որ չլինի աչքի կոնտակտ կամ սպառնալիք հիշեցնող իրավիճակ, ցուցմունքներ տալու ժամանակ պաշտպանիչ էկրանների կամ տեսապատկերային տեխնոլոգիաների օգտագործում (ըստ հնարավորության): Այս մեխանիզմները հնարավորություն են տալիս նվազագույնի հասցնել կոնֆլիկտային միջավայրի ստեղծումը և պաշտպանել տուժողի հոգեկան առողջությունը:
3. **Անձնական տվյալների պաշտպանությունը:** Տուժողի **անձնական և զգայուն տվյալների գաղտնիության ապահովումը** համարվում է կարևոր բաղադրիչ նրա անվտանգության, անձնական կյանքի անխախտելիության և արժանապատվության պահպանման տեսանկյունից: Դատարանը կարող է անձնական տվյալները (հասցե, աշխատավայր, հեռախոսահամար և այլն) չհրապարակել դատավարության ժամանակ, խուսափել դատական ակ-

տերում նման տվյալների նշումից և այլն: Հատկապես զգայուն դեպքերում անձնական տվյալների չպաշտպանումը կարող է հանգեցնել հետագա հետապնդումների, վրեժխնդրության կամ կրկնակի բռնության:

4. **Դռնփակ դատական նիստերի անցկացումը:** Դատական նիստերը կարող են **անցկացվել դռնփակ**, եթե դա անհրաժեշտ է տուժողի անվտանգության և պաշտպանության համար: Ընտանեկան բռնության գործերով դռնփակ դատական նիստը կարող է լինել հիմնավոր որոշում, եթե գոյություն ունի տուժողի ֆիզիկական կամ հոգեբանական վնասման վտանգ, ներկայացվում են խիստ անձնական, ինտիմ բնույթի մանրամասներ, դատական գործընթացում ներգրավված են երեխաներ կամ այլ խոցելի անձինք:

## 6.2. Ընտանեկան բռնության գործերով տուժողի անվտանգության վերաբերյալ միջազգային իրավական շրջանակը

Դատական պրոցեսի ընթացքում տուժողի անվտանգության անտեսումը կարող է հանգեցնել միջազգային իրավական պարտավորությունների խախտման: Մասնավորապես.

Այն հանդիսանում է **ընտանեկան բռնության գործերով դատաքննության բոլոր փուլերի ընթացքում տուժողի իրավունքների իրացման պետության պարտականության չկատարում**, ինչը հակասում է ԵԽ կոնվենցիայի 49-րդ հոդվածին<sup>56</sup>: Եթե դատարանը **անտեսում է տուժողի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը**, օրինակ՝ նրան չպաշտպանելով ամբաստանյալի հնարավոր ճնշումից կամ վրեժխնդրությունից, դա խաթարում է թե՛ գործի արդյունավետ քննությունը, և թե՛ **տուժողի իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորությունները**:

1. Այն խախտում է ԵԽ կոնվենցիայի 56-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցների ապահովման պարտականությունը<sup>57</sup>, որը պահան-

<sup>56</sup> [ԵԽ կոնվենցիա](#). «Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դրսևորման դեպքերով նախաքննական ու դատական վարույթներն իրականացվեն առանց անհարկի ձգձգումների՝ միաժամանակ քրեական դատավարության բոլոր փուլերում հաշվի առնելով տուժողի իրավունքները: Մասնակից պետությունները, մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին և բռնության գենդերային ընկալմանը համապատասխան, պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը կատարվեն արդյունավետ կերպով»:

<sup>57</sup> «Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ տուժողների իրավունքները և շահերը նախաքննական և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանելու նպատակով, ներառյալ նրանց՝ որպես վկաների ունեցած հատուկ կարիքները, մասնավորապես՝ ա. տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին պաշտպանելով ճնշումներից, վրեժխնդրությունից և կրկնակի զոհականացումից, բ. ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ

ջում է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ **ապահովելու տուժողների և նրանց ընտանիքների պաշտպանությունը վրեժխնդրությունից, ճնշումներից և կրկնազոհացումից**: Եթե դատարանում թույլատրվում է տուժողի ու ենթադրյալ կատարողի միջև շփում, հարցաքննությունն ընթանում է ոչ ապահով միջավայրում, ապա խախտվում է տուժողի **հոգեբանական և ֆիզիկական անվտանգությունը**, և առաջանում է **կրկնազոհացման ռիսկ**, ինչը հակասում է Կոնվենցիայի պահանջներին:

2. Այն խախտում է ԿՆԽՎԿ թիվ 35-րդ ընդհանուր հանձնարարականով<sup>58</sup> սահմանված գենդերազգային արդար դատավարության ապահովման պարտականությունը<sup>59</sup>: Տուժողի անվտանգությունը չապահովելը անտեսում է գենդերային համատեքստը, **խախտում է կանանց անձնական կյանքի**

---

վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողի կամ նրա ընտանիքի անդամներին կարող է սպառնալ վտանգ, գ. տեղեկացնելով նրանց, ներպետական օրենսդրությամբ սահմանված պայմաններում, իրենց իրավունքների և իրենց տրամադրության տակ եղած ծառայությունների, իրենց բողոքների քննության ընթացքի, հարուցված մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց դատավարական դերի, ինչպես նաև իրենց գործի ելքի մասին, դ. հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ներկայացնելու ապացույցներ և ապահովելով նրանց տեսակետները, կարիքները և մտահոգությունները անձամբ կամ միջնորդ անձի միջոցով քննարկման առարկա դարձնելու հնարավորությունը, ե. տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով՝ այն հաշվով, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պատշաճ կերպով, գ. ապահովելով տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը կամ տուժողի նկարագիրը պաշտպանելուն ուղղված միջոցներ նախատեսելու հնարավորությունը, Է. **ապահովելով, հնարավորության դեպքում, նախաքննության մարմնի գտնվելու վայրում կամ դատարանում տուժողի և ամբաստանյալի միջև շփումների բացառումը**, ը. ապահովելով անկախ և ձեռնահաս թարգմանիչներ՝ թե՛ այն դեպքերում, երբ տուժողը հանդիսանում է դատավարության կողմ, թե՛ այն դեպքերում, երբ նա տալիս է ցուցմունքներ, թ. տուժողներին, ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով, առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ամբաստանյալի բացակայության պայմաններում, ցուցմունք տալու հնարավորություն տալով, մասնավորապես՝ հնարավորության դեպքում, հարդրակցման համապատասխան տեխնոլոգիաների օգտագործմամբ: 2. Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին, համապատասխան դեպքերում, պետք է տրամադրվեն պաշտպանության հատուկ միջոցներ, որոնք հաշվի կառնեն երեխայի լավագույն շահերը»:

<sup>58</sup> Տե՛ս հղում 46, § 31(a) i:

<sup>59</sup> «Կոմիտեն խորհուրդ է տալիս, որ մասնակից պետություններն իրականացնեն հետևյալ պաշտպանական միջոցները. (ա) Ընդունել և կիրառել արդյունավետ միջոցներ գենդերային բռնության մասին բողոք ներկայացրած և վկայություն տվող կին տուժողներին պաշտպանելու և օժանդակելու համար՝ նախքան դատական վարույթը, դրա ընթացքում և դատական վարույթից հետո, այդ թվում՝ (i) Նրանց անձնական կյանքի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանել թիվ 33 ընդհանուր հանձնարարականին համապատասխան, ներառյալ՝ գենդերազգայուն դատական վարույթների ու միջոցների կիրառմամբ՝ հաշվի առնելով տուժողների, վկաների և մեղադրյալների դատավարական երաշխիքները...»:

**անձեռնմխելիությունը**<sup>60</sup> և խաթարում է նրանց ներգրավման հնարավորությունը արդար դատավարության գործընթացում:

Կարևոր է արձանագրել, որ ընտանեկան բռնության գործերով դատարանում տուժողի անվտանգության ապահովման պարտավորությունը չունի ընտրովի բնույթ. պետությունները պարտավոր են դատական համակարգում ներդնել համապատասխան մեխանիզմներ և ապահովել, որ տուժողների անվտանգությունը դիտարկվի որպես **պետության պարտավորություն** և ոչ թե միայն բարոյական խնդիր:

### **6.3. Գործնական ուղենշային գործելակերպեր դատարանում տուժողի անվտանգության ապահովման վերաբերյալ**

Անվտանգության ապահովման համատեքստում անհրաժեշտ է դիտարկել և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական բաղադրատարրերը՝ վերջինիս շրջանակներում դիտարկելով տուժողի այն ընկալումը, որ դատարանում իր հանդեպ չի լինի խտրական, նվաստացնող կամ վախեցնող վերաբերմունք, կնվազեցվեն սթրեսային ռեակցիաների, հետտրավմատիկ արձագանքների և պաշտպանական վարքային մեխանիզմների դրսևորումները, և կապահովվի վստահություն իր իրավունքների պաշտպանության լիարժեքության առումով:

Տուժողի նկատմամբ բռնության ռիսկը նվազեցնելու և դատական գործընթացում պատասխանողի վարքագիծը վերահսկելու նպատակով դատավորները կարող են **դատական նիստից առաջ, նիստի ընթացքում և նիստից հետո** կիրառել հետևյալ միջոցները.

#### **1. Անվտանգություն դատական նիստից առաջ.**

- ✓ նախատեսել առանձին մուտք տուժողների համար.
- ✓ ապահովել անվտանգության հսկող կետեր դատավարության բոլոր կողմերի համար.
- ✓ տուժողների համար (առավել ռիսկային դեպքերում) ապահովել անվտան-

<sup>60</sup> Թիվ 33 ընդհանուր հանձնարարականում ԿՆԽՎԿ-ն դատական համակարգերի բարձր որակի ապահովման համար առաջարկում է, որ պետությունները, ի թիվս այլոց, կանանց անձնական կյանքի գաղտնիությունը, անվտանգությունն ու այլ իրավունքները պաշտպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված, ապահովեն, որ արդար դատաբնության և պատշաճ դատավարության պահանջներին համահունչ կերպով դատական վարույթները ամբողջությամբ կամ մասնակիորեն անցկացվեն դռնփակ, կամ վկայությունները տրվեն հեռահար ձևաչափով կամ կապի միջոցների կիրառմամբ՝ այնպես, որ դրանց բովանդակությունը հասանելի լինի միայն գործով շահագրգիռ կողմերին: Պետք է թույլատրվի կեղծանունների օգտագործումը կամ այլ միջոցների կիրառումը՝ այդ կանանց ինքնությունը պաշտպանելու համար դատական գործընթացի բոլոր փուլերում: Պետությունները պետք է երաշխավորեն համապատասխան միջոցների կիրառման հնարավորությունը՝ տուժողների անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու համար՝ արգելելով նկարահանումը և հեռարձակումը այն դեպքերում, երբ դրանք կարող են խախտել աղջիկների և կանանց արժանապատվությունը, հոգեբանական վիճակը և անվտանգությունը (CEDAW, [General Recommendation 33](#), 2015, § 18(f)):

գության ուղեկցում դատարանի մուտքից մինչև դատական նիստերի դահլիճ և հետդարձի ժամանակ.

- ✓ դատական նիստից առաջ ապահովել դատարանի անվտանգության աշխատակիցների ներկայությունը՝ կողմերի միջև հնարավոր շփումը կանխելու համար.
- ✓ դատավորության կողմերը մինչև նիստի սկսվելը պետք է սպասեն առանձին տարածքներում (հնարավորության դեպքում տրամադրել առանձին սպասասենյակներ).
- ✓ անվտանգության ծառայությանը պետք է տեղեկացնել, թե ինչ հնարավոր վարքագծային դրսևորումներ կարող են լինել, և ինչպես պետք է արձագանքել դրանց:

## 2. Անվտանգություն դատական նիստի ընթացքում

- ✓ դատական նիստերի դահլիճում դատավարության կողմերը պետք է նստեն այնպես, որ ապահովվի կողմերի ֆիզիկական տարանջատումը, օրինակ՝ նրանց միջև դատարանի անվտանգության աշխատակցի տեղակայմամբ.
- ✓ տուժողը և մեղադրյալը պետք է նստեն այնպես, որ վերջինս չկարողանա ուղիղ աչքերի շփում հաստատել տուժողի հետ՝ բացառելու հայացքի միջոցով վախեցնելու կամ ճնշման մեթոդները.
- ✓ դատավորը պետք է լիարժեք վերահսկի նիստի վարումը և անհապաղ կասեցնի մեղադրյալի կամ նրա փաստաբանի այնպիսի հարցերը, որոնք՝
  - ◇ կապ չունեն քննվող գործի հանգամանքների հետ,
  - ◇ խանգարում են տուժողի կողմից ցուցմունք փայտն,
  - ◇ մեղադրում են տուժողին գործի հետ կապ չունեցող արարքներում,
  - ◇ փորձում են պարզել, թե արդյոք տուժողը դեռ սիրում է բռնարարին,
  - ◇ հրապարակում են տուժողի անձնական կամ գաղտնի տեղեկություններ:
- ✓ Տուժողին անհրաժեշտ է տեղեկացնել, որ դատական նիստի ընթացքում ցուցմունք տալիս նա պետք է նայի դատավորին:

Հատկանշական է, որ բռնության տուժող անձանց մեծ մասը դատաքննության ընթացքում գտնվում է հետտրավմատիկ սթրեսային արձագանքի (PTSR) վիճակում, որը բնորոշվում է՝

- վախի և տագնապի զգացումներով.
- հիշողության մասնակի խաթարմամբ.
- արգելակված կամ հակասական վարքով.
- վերահսկողության կորստի վախով:

Այս վիճակը կարող է էականորեն ազդել տուժողի վարքի և հուզական արձագանքների վրա. հնարավոր է՝ նա չկարողանա հստակ հիշել դեպքերի հաջորդականությունը, խուսափել կոնտակտից կամ նույնիսկ ժպտալ լարվածության պահին: Միևնույն ժամանակ հարկ է շեշտել, որ հույզերի ապրման ձևերը կրում են խիստ անհատական բնույթ. որոշ մարդիկ հակված են առավել բուռն դրսևորումների, արտասվելու, որոշների դեպքում գերակայում է արգելակվածությունը, ուստի ըստ այդ հակազդումների չպետք է գնահատականներ տալ, ավելին՝ պետք

է ապահովել դրանց դրսևորումների անվտանգ, ապահով միջավայր: Վերոգրյալի համատեքստում անհրաժեշտ է, որ դատավորը զերծ մնա այսպիսի դրսևորումներին սուբյեկտիվ գնահատականներ տալուց և թույլ չտա, որ տուժողի հույզերը արժեզրկող, ծաղրող կամ մեղադրող արտահայտություններ հնչեն հարցաքննությանը ներկա այլ անձանց կողմից:

**Անվտանգություն դատական նիստից հետո.**

- ✓ կազմակերպել կողմերի հեռացումը դատարանի շենքից փուլային եղանակով՝ սկզբում տուժողը, անհրաժեշտության դեպքում՝ ուղեկցությամբ՝ հատկապես բարձր ռիսկային դեպքերում.
- ✓ պահանջել, որ մեղադրյալը, նրա ընտանիքի անդամները կամ ընկերները տուժողի հեռանալուց հետո դատարանի տարածքում սպասեն առնվազն 15 րոպե:

Հարկ է նշել, որ դատարանում տուժողի հոգեբանական անվտանգությունը ոչ միայն նվազեցնում է վնասը, այլև նպաստում է **վերականգնման (resilience)** գործընթացին:

Հոգեբանական գիտության մեջ հաստատված է, որ երբ տուժողը զգում է, որ իրեն լսել են և հարգել.

- *վերականգնում է իր լիարժեքության զգացումը.*
- *նվազում է վերադրավճարի զգացիայի վրանգը.*
- *բարձրանում է իրավապահ համակարգի հանդեպ վստահությունը, ինչը նպաստում է ապագայում բռնության կանխմանը:*



### Թեմայի նպատակն է՝

- ✓ ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պաշտպանական միջոցները՝ վեր հանելով նրանց կիրառման հետ կապված խնդիրները.
- ✓ տրամադրել տեղեկատվություն ընտանեկան և գենդերային բռնության գործերով պաշտպանական միջոցների կիրառման դատական պրակտիկայի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով.
- ✓ համահունչ դարձնել պաշտպանական միջոցների կիրառումը միջազգային չափանիշներին:

#### 7.1. Պաշտպանական որոշումը որպես պաշտպանական միջոց

Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կարևորագույն սկզբունքներից է տուժողների անվտանգության և պաշտպանության ապահովումը:

Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը նախատեսում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները՝ նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում և պաշտպանական որոշում:

Ընտանեկան բռնության գործերում կարևոր է ապահովել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց անվտանգությունը: Ցանկացած ընթացակարգի շրջանակներում իրավասու անձը պարտավոր է միջոցներ ձեռնարկել բռնության ենթարկված անձին պաշտպանելու բռնարարի հարձակումներից և ահաբեկումից: Բռնարարի նույնիսկ հայացքը կամ ժեստերը կարող են բացասական ազդեցություն ունենալ բռնության ենթարկված անձի վրա:

Պաշտպանական որոշումը կայացնում է դատարանը: Պաշտպանական որոշման համար դատարան կարող է դիմել բռնության ենթարկված անձը կամ նրա համաձայնությամբ՝ աջակցության կենտրոնը: Պաշտպանական որոշումը կայացվում է 4-12 ամիս ժամկետով, և այն կարող է դրա անհրաժեշտությունը հիմնավորող համապատասխան դիմումի հիման վրա դատարանի պատճառաբանված որոշմամբ երկարաձգվել մինչև վեց ամիս ժամկետով<sup>61</sup>:

Հարկ է նշել, որ պաշտպանական միջոցի վերաբերյալ հայցադիմումը և այդ պահանջի քննությունը ունեն առանձնահատկություններ: Հայցադիմումի ձևին և

<sup>61</sup> Տե՛ս հղում 6, 8-րդ հոդված:

բովանդակությանն առաջադրվող պահանջները ներառում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր պահանջները և նշված գործերի համար առաջադրվող հատուկ պահանջները: Հայցադիմումին առաջադրվում են հետևյալ հատուկ պահանջները.

- հղում կատարել Օրենքի վերաբերելի դրույթներին.
- նշել բռնարարի և բռնության ենթարկված անձի միջև ընտանեկան, արյունակցական կապի կամ զուգընկերային հարաբերությունների մասին.
- նշել անմիջական սպառնացող վտանգի վերաբերյալ տեղեկությունների մասին.
- հիշատակել բռնարարի նկատմամբ Օրենքով սահմանված սահմանափակումների կիրառման և կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու մասին:

Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ դատարանը վերադարձնում է հայցադիմումը ենթադրյալ բռնարարի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ օրենքով սահմանված սահմանափակումների կիրառման մասին տեղեկություններ հայցում նշված չլինելու հիմքով: Ձևական պահանջների չկատարումը բացասաբար է ազդում անձի՝ պաշտպանություն ստանալու իրավունքի իրացման վրա: Իրավական նորմերի նման մեկնաբանությունը համահունչ չէ ԿՆԽՎԿ-ի և ՄԻԵԴ-ի գործերով սահմանված չափանիշներին: Օրենսդրության ձևակերպումից չի բխում, որ մինչև պաշտպանական որոշում ստանալու համար դատարան դիմելը անձը պարտադիր պետք է դիմի ոստիկանություն, քանի որ անհապաղ միջամտության և պաշտպանության ընթացակարգերն ինքնուրույն վարույթներ են և միմյանցով պայմանավորված չեն, այսինքն՝ պարտադիր չէ, որ անձը մինչև դատարան դիմելը անպայման դիմած լինի ոստիկանություն: Նման պայմաններում համաչափ չէ բռնության ենթարկված անձին պարտադրել ներկայացնելու սահմանափակման կիրառման կամ հաշվառման վերցված լինելու վերաբերյալ տեղեկություններ: **Նշված և այլ անհրաժեշտ տեղեկությունների ստացումը պետք է կատարի դատարանն իր նախաձեռնությամբ, քանի որ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.3-րդ հոդվածի<sup>62</sup> հիմքով՝ նշված գործերի քննությունը դատարանն իրականացնում է ի պաշտոնե (ex officio), կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:** Հետևաբար, վերը նշված իրավիճակները պետք է դիտարկել Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.3-րդ հոդվածի լույսի ներքո ի պաշտոնե գործելու

<sup>62</sup> [33 քաղաքացիական դատավարության օրենսգրքը](#), հոդված 234.3-րդ հոդված, «4. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար...»:

պարտականության շրջանակում և չճանրաբեռնել բռնությունից տուժած անձին ներկայացնելու հիմքեր, որոնք կարող են պարզվել դատարանի կողմից: Դատարանի՝ ի պաշտոնե գործելու պարտականությունն է նաև քննության ընթացքում առերևույթ հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելու դեպքում դիմել գլխավոր դատախազին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի առկայությունը ստուգելու միջնորդությամբ:

Պաշտպանական որոշում ստանալու վերաբերյալ հայցադիմումը քննվում է եռօրյա ժամկետում: Պատասխանողին պատասխան ներկայացնելու համար տրամադրվում է եռօրյա ժամկետ, իսկ դատական ակտը դատարանը կայացնում է հայցը վարույթ ընդունելու օրվանից հնգօրյա ժամկետում<sup>63</sup>: Կրճատ ժամկետների նպատակն է ապահովել հայցի քննության անհապաղությունը, որը բխում է միջազգային պարտավորություններից: Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հայցվորը պաշտպանական որոշում կայացնելու հայցադիմումով խնդրում է նաև հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել և կայացնել պաշտպանական որոշում: Նման հայցի ապահովման միջոցի ձեռնարկումը չի հակասում ներպետական օրենսդրությանը, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքին, որով նախատեսվում է, որ հայցի ապահովման միջոցը կարող է համընկնել ներկայացված պահանջի հետ, ավելին՝ հայցի ապահովման միջոցի կիրառումը թույլ է տալիս ավելի արագ արձագանքել անձին սպառնացող վտանգին: Օրինակ՝ բռնության կրկնման բարձր հավանականությամբ, ինչպես նաև արձագանքման հրատապությամբ պայմանավորված՝ բռնության ենթարկվող անձը կարող է մինչև պաշտպանական որոշման կայացումը միջնորդել պաշտպանական միջոցներ ձեռնարկել՝ որպես հայցի ապահովման միջոց նկատի ունենալով, որ օրենքը վերջնական դատական ակտ կայացնելու համար սահմանում է հնգօրյա ժամկետ, իսկ բռնությունը կարող է կրկնվել ավելի շուտ: Միշտ պետք է նկատի ունենալ, որ անձի կյանքին ու առողջությանը սպառնացող վտանգին արձագանքելը նախապատվություն ունի այլ շահերի նկատմամբ, ուստի այն, ինչ բխում է նշված նպատակից, իրավաչափ է և համապատասխանում է միջազգային չափանիշներին:

Դատական պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ վերաքննիչ դատարանը վերացրել է ստորադաս դատարանի դատական ակտը այն հիմքով, որ պատասխանողը հնարավորություն չի ունեցել պատասխան ներկայացնել: Պատասխանողի կողմից պատասխան ներկայացնելու հնարավորության բացակայության հիմքը ևս չի կարող դիտարկվել պաշտպանական որոշումը վերացնելու պատճառ: Իրավասու մարմինները, անձինք և դատարանը պարտավոր են բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել՝ ապահովելու համար պատասխանողի պատշաճ ծանուցումը և նրան պատասխան ներկայացնելու համար ողջամիտ ժամկետի տրա-

<sup>63</sup> Տե՛ս նույն տեղում, 234.3-րդ հոդված «2. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումն ստանալու օրվանից՝ եռօրյա ժամկետում: 3. Դատարանը պաշտպանական որոշման կիրառման մասին հայցադիմումը քննում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում առանց դատական նիստ հրավիրելու հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնելու պահից՝ հնգօրյա ժամկետում»:

մադրումը: Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ անձի կյանքն առավել կարևոր է, և պաշտպանական որոշման նպատակը տվյալ պահին անձի անվտանգությունն ապահովելն է, որը չի կարող կասկածի տակ դրվել կամ հետաձգվել ընթացակարգային, ձևական պատճառաբանություններով:

Այսպիսով՝ անվտանգությունն ու կյանքի պաշտպանությունը պետք է դիտարկվեն որպես անհետաձգելի և առաջնահերթ միջոցառումներ, որոնք գերակշռում են ցանկացած ընթացակարգային ֆորմալության նկատմամբ:

## **7.2. Նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումները որպես պաշտպանական միջոց**

Նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումները ոստիկանության կողմից ընդունվում են որպես բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներ և բողոքարկվում վերադասության կամ վարչական դատավարության կարգով<sup>64</sup>: Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է Ոստիկանության կողմից կիրառված պաշտպանության միջոցների՝ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկում վարչական դատավարության կարգով: Օրենսդրի ձևակերպումից հետևում է, որ նախազգուշացում և անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել բռնություն գործադրած անձի կողմից վերադասության կարգով կամ վարչական դատարան: Օրենքը չի նախատեսում նախազգուշացում կամ անհապաղ պաշտպանության միջոց չկիրառելու մասին ոստիկանության որոշման բողոքարկման ընթացակարգ, սակայն նշված դեպքերում բռնության ենթարկված անձը կարող է դիմել ընդհանուր իրավասության դատարան պաշտպանական որոշում ստանալու համար, ինչպես նաև վիճարկել ոստիկանության գործողությունը կամ անգործությունը՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 69-րդ հոդվածի հիմքով: Այնուամենայնիվ, ոստիկանության գործողությունների վիճարկումը ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոց չէ, քանի որ չի ապահովվում գործի քննության հրատապությունը և ընտանեկան բռնության առանձնահատուկ բնույթը:

Ավելին՝ 2025 թ. կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Ոստիկանության կողմից կիրառված պաշտպանական միջոցների դեմ վարչական դատավարության կարգով վիճարկված հայցերի գերակշիռ մասը բավարարվել է, ինչի արդյունքում վերանում են ոստիկանության կայացրած պաշտպանական որոշումները, իսկ բռնության ենթարկված անձը մնում է անպաշտպան<sup>65</sup>:

<sup>64</sup> Տե՛ս հղում 6, 6-րդ և 7-րդ հոդվածներ:

<sup>65</sup> Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, [«Ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության միջոցներ, խնդիրներ և լուծումներ»](#) հետազոտություն, «90 հայցերից բավարարվել է 80-ը», 2025 թ., էջ 13:

Որոշ գործերով անհետաձգելի միջամտության որոշումներն անվավեր են ճանաչվել այն պատճառաբանությամբ, որ օրենքով հետապնդվող նպատակին հասնելու համար և հաստատված փաստերի պայմաններում անհրաժեշտ և բավարար միջոց էր նախագուշացումը (բռնության կիրառման փաստն, ըստ դատարանի, ինքնին չէր առաջացնում հիմնավոր ենթադրություն առ այն, որ առկա է կրկնակի բռնություն գործադրելու անմիջականորեն սպառնացող վտանգ)<sup>66</sup>: Այսինքն՝ պաշտպանության միջոցը վերացվել է այն պատճառաբանությամբ, որ հնարավոր էր կիրառել առավել մեղմ միջամտության միջոց, որի արդյունքում բռնության ենթարկված անձը մնացել է առանց պաշտպանության: Օրենքի նման մեկնաբանությունն ու կիրառումն ամբողջությամբ հակասում է ընտանեկան բռնության վերաբերյալ ԿՆԽՎԿ և ՄԻԵԴ դիրքորոշումներին: Նման մեկնաբանությունը չի բխում նաև ներպետական օրենսդրության մեկնաբանությունից, քանի որ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը: Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Ոստիկանության կողմից կիրառված անհապաղ միջամտության որոշումները վարչական դատարանի կողմից վերացվել են նաև հետևյալ հիմքերով՝

- ոստիկանության որոշումը պատճառաբանված և հիմնավորված չէ.
- փաստն ապացուցված չէ.
- ապացույցներ առկա չեն.
- բազմակողմանիությունն ապահովված չէ:

Վարչական դատարանը գտել է, որ միայն տուժողի հայտնածը բավարար չէ բռնության փաստը հաստատելու համար, և իրավասու մարմինը չի հավաքել այլ ապացույցներ<sup>67</sup>: Դատարանը նաև արձանագրել է, որ անձի՝ տվյալ դեպքում՝ բռնություն գործադրած անձի լսված լինելու իրավունքը չի ապահովվել, և իրավասու մարմինը բավարար միջոցներ չի ձեռնարկել ենթադրյալ բռնարարի դիրքորոշումը լսելու ուղղությամբ<sup>68</sup>: Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածը սահմանում է վարչական վարույթի փուլերը, որոնք բաղկացած են միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական

<sup>66</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>67</sup> Վարչական դատարան, [Բարկեն Ներսիսյանը ընդդեմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության](#), թիվ ՎԴ/0237/05/24, 2024:

<sup>68</sup> Տե՛ս նույն տեղում:

վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով: ՄԻԵԴ-ը նշել է, որ ընտանեկան բռնության դեպքերը քննելիս անհրաժեշտ է ցուցաբերել առանձնահատուկ ուշադրություն, իսկ ներպետական վարույթների ընթացքում պետք է հաշվի առնել ընտանեկան բռնության առանձնահատուկ բնույթը<sup>69</sup>:

Նշվածից հետևում է, որ **վարչական դատարանը անհապաղ միջամտության որոշումների վիճարկման գործերը չի կարող քննել այլ վարչական գործերի նման՝ առանց հաշվի առնելու ընտանեկան բռնության առանձնահատուկությունները**, իսկ ընտանեկան բռնության առանձնահատուկությունն այն է, որ պաշտպանական միջոցները պետք է կիրառվեն անհապաղ, հետևաբար վարչարարության փուլերը չեն կարող պահպանվել: Հակառակ մեկնաբանության դեպքում տուժողները կզրկվեն անհրաժեշտ պաշտպանությունից, և պաշտպանական միջոցներ կիրառելու օրենսդրական կարգավորումները կհիմաստազրկվեն:

Անհետաձգելի միջամտության որոշումը վերացվել է նաև այն հիմքով, որ տուժողի կողմից վտանգի գնահատումը ցածր է եղել: Նշված մեկնաբանությունը ևս հակասում է *Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ նախադեպին*, որով ՄԻԵԴ-ը նշել է, որ ներպետական իշխանություններից պահանջվում է իրականացնել «ինքնուրույն», «պրոակտիվ» և «համապարփակ» վտանգի գնահատում՝ 3-րդ հոդվածի դրույթների համաձայն: Ներպետական իշխանությունները չպետք է հիմնվեն բացառապես տուժողի կողմից վտանգի ընկալման վրա, այլ պետք է լրացնեն այն սեփական գնահատականով՝ գերադասելիորեն օգտագործելով վտանգի գնահատման ստանդարտացված գործիքները և ցուցակները, ինչպես նաև հավաքելով և գնահատելով տեղեկություններ համապատասխան բոլոր վտանգավոր գործոնների և դեպքերի տարրերի վերաբերյալ, այդ թվում՝ պետական այլ մարմիններից ստացված տեղեկությունները: Վտանգի գնահատման ընթացքը պետք է փաստաթղթավորվի հատուկ ձևով և հաղորդվի այլ շահագրգիռ կողմերին, որոնք կանոնավոր կապի մեջ են վտանգի սպառնալիքի տակ գտնվողների հետ: Ներպետական իշխանությունները պետք է տուժածին տեղեկացնեն վտանգի գնահատման արդյունքների մասին և անհրաժեշտության դեպքում տրամադրեն խորհրդատվություն և առաջարկություններ առկա իրավական և գործառնական պաշտպանության միջոցների վերաբերյալ<sup>70</sup>:

Հիշատակված գործով ՄԻԵԴ-ն անդրադարձել է նաև ՀՀ դատարանների կողմից ներպետական օրենսդրության մեկնաբանությանը՝ այն գնահատելով որպես բացառապես ձևական մոտեցում, քանի որ արարքը որակյալ դարձնող «հանցավորից այլ կախվածության» հանգամանքի սխալ մեկնաբանությունը թույլ է տվել վերաորակել քրեորեն հետապնդելի արարքը ավելի մեղմ արարքի՝ հնարավորություն տալով կիրառել համաներում: ՄԻԵԴ-ը մասնավորապես նշել է. «Իսկապես, ինչպես երևում է այն ձևից, որով ներպետական դատարանները մեկնաբանել ու կիրառել են քրեական օրենսդրության խնդրո առարկա դրույթները, մասնավորապես՝ «հանցավորից այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ» եզրույթը

<sup>69</sup> Գայդուկևիչն ընդդեմ Վրաստանի [[Gaidukevich v. Georgia](#)], թիվ 38650/18, 2023 թ. հունիսի 15, § 58:

<sup>70</sup> Տե՛ս հղում 34:

դիմումատուի՝ Ս.Հ.-ի հետ հարաբերությունների համատեքստում, այդ եզրույթը եղել է չափազանց անորոշ և թույլ է տվել հայեցողության ազատություն, ինչը հանգեցրել է այնպիսի մեկնաբանության, որով ամբողջությամբ անտեսվել է սույն գործով ընտանեկան բռնության տարրը»: Նշվածից կարող ենք եզրակացնել, որ դատարանները պարտավոր են հաշվի առնել ընտանեկան բռնության տարրը, և նման պարտավորությունը վերաբերում է ոչ միայն քրեական վարույթի կարգով քննվող գործերին, այլև վարչական կամ քաղաքացիական վարույթով քննվող գործերին:

Հարկ է նաև մատնանշել, որ նման մոտեցումը խաթարում է բռնության ենթարկված անձանց վստահությունը պետության հանդեպ և հնարավորությունը՝ պաշտպանված լինելու գենդերային բռնություններից: Բռնության ենթարկված անձը, որին պաշտպանելու նպատակով կիրառվել է պաշտպանական միջոց, որն արդյունավետ չէ, կամ որը վերացվել է դատարանի կողմից ձևական հիմքերով, հայտնվում է բռնարարի դեմ դիմաց առանց պաշտպանության, քանի որ վստահությունը պաշտպանական միջոցների արդյունավետության նկատմամբ գրոյացվում է և նվազեցնում նրա՝ ևս մեկ անգամ նման միջոցներին դիմելու հավանականությունը: Այս մոտեցումը չի կարող դիտարկվել գենդերազգային:

Պաշտպանական միջոցների վերաբերյալ որոշում կայացնողները պետք է հաշվի առնեն ընտանեկան բռնության փուլային բնույթը: Ընտանեկան բռնությունը, որպես կանոն, սկսվում է թեթև բռնություններից և վերաճվում ծայրահեղ բռնության, որին կարող է հետևել զոջման փուլ, այնուհետև կրկին անցնել ծայրահեղ բռնության փուլի: Ընտանեկան բռնության հետ առնչվող մասնագետները պետք է տեղյակ լինեն բռնության ցիկլի բնույթի և ընտանեկան բռնության առանձնահատկությունների մասին, որպեսզի կարողանան կատարել ռիսկի ճիշտ գնահատում: Ծայրահեղ բռնության փուլի ախտորոշումը հնարավորություն կտա ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կարող են փրկել տուժողների կյանքը կամ խուսափել առողջությանը հասցված ծանր վնասից: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել ռիսկի գնահատում: Ռիսկի գնահատումը գործընթաց է, որի ժամանակ պարբերաբար որոշվում և գնահատվում են ռեցիդիվի, բռնության սրացման և նույնիսկ մահվան ելքով բռնության հնարավոր ռիսկերը: Ռիսկերի գնահատման իրականացումը կարևոր պահանջ է, որն առաջադրվում է ԵԽ կոնվենցիայի 51-րդ հոդվածով, համաձայն որի՝ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որ բոլոր շահագրգիռ մարմինները կատարեն մահ պատճառելու ռիսկի, իրավիճակի լրջության և բռնության կրկնվելու ռիսկի գնահատումը՝ համապատասխան ռիսկը կառավարելու և անհրաժեշտության դեպքում համակարգված ձևով անվտանգություն և աջակցություն ապահովելու համար: Ռիսկերի սկզբնական գնահատումն իրականացնում է ոստիկանությունը, իսկ հետագայում՝ դատավորները և դատախազները: Ոստիկանության կողմից պետք է կատարվի ռիսկի գնահատում ընտանեկան բռնության գործերով անհապաղ միջամտության որոշում կայացնելիս, ինչպես նաև միջամտության տեսակը որոշելիս: Դատավորը պետք է ռիսկի գնահատում իրականացնի, երբ պաշտպա-

նության որոշում է կայացնում և պաշտպանական միջոց է ընտրում, կամ երբ վիճարկվում են ոստիկանության գործողությունները անհապաղ միջամտության որոշում կայացնելու շրջանակում:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընտանեկան բռնության հետևանքները բազմաշերտ են և արտահայտվում են կնոջ հոգեկան առողջության, հուզական կայունության, վարքի և ինքնաընկալման բացասական փոփոխություններով, որոնց համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք կարող են արտահայտվել էական հոգեկան փոփոխությունների (օրինակ՝ հետտրավմատիկ սթրեսային խանգարում (PTSD), դեպրեսիա, տագնապային խանգարումներ և այլն) տեսքով:

**1. Հուզական փոփոխությունների շրջանակում** դիտարկման ենթակա են հետևյալ հիմնական դրսևորումները.

- Մեղքի զգացում, որի հիմքում ընկած է այն, որ տուժողները կատարվածի համար հաճախ հակված են մեղադրելու իրենց («Ես եմ արժանացել», «Եթե ես ճիշտ վարվեի...»):
- Ամոթի զգացում, որը կապված է հասարակական ընկալման, խարանի, «կեղտոտված» կամ արժեզրկված լինելու զգացողության հետ: Այս զգացումը հաճախ խոչընդոտում է զրհերին՝ բացահայտ խոսել իրենց փորձառության մասին և դիմել աջակցության:
- Սիրո և վախի համադրման հակասական զգացումներ՝ բռնարարի հանդեպ միաժամանակ սեր, վախ, ատելություն ու կարեկցանք զգալը, որը հաճախ ձևավորվում է վերահսկողության, կախվածության և պարբերական բռնության միջավայրում: Այս բարդ հուզական կապը կարող է բացատրել, թե ինչու են որոշ զրհեր մնում բռնարար հարաբերությունների մեջ կամ վերադառնում դրանց: Սա կոչվում է տրավմատիկ կապվածություն (trauma bonding):

**2. Վարքային փոփոխությունների** շրջանակում դիտարկման ենթակա են հետևյալ հիմնական դրսևորումները.

- Ապակենտրոնացում և սոցիալական մեկուսացում. տուժողները հաճախ խզում են կապերը ընկերների և ընտանիքի հետ՝ բռնարարի ճնշման կամ ամոթի ազդեցությամբ:
- Ինքնավնասում կամ ինքնավնասող վարք. հուզական կամ հոգեբանական ցավը մեղմելու նպատակով տուժողները երբեմն դիմում են ինքնավնասման տարբեր ձևերի՝ փորձելով վերահսկել կամ նվազեցնել ներքին տագնապը:
- Ստոկհոլմյան համախտանիշի տարրեր. որոշ դեպքերում զրհերը կարող են պաշտպանել բռնարարին, արդարացնել նրա վարքը կամ ընկալել որպես «խղճահարության արժանի» անձ: Այս երևույթը բացատրվում է երկարատև վերահսկողության և կախվածության պայմաններում ձևավորված հոգեբանական կապով:

3. **Ինքնաընկալման փոփոխությունների շրջանակում** դիտարկման ենթակա են հետևյալ հիմնական դրսևորումները.

- Ինքնաընկալման և ինքնագնահատականի փոփոխություններ. տուժողն սկսում է ընկալել իրեն որպես անօգնական կամ անարժեք անձ՝ մտածելով. «Ես ոչնչի ունակ չեմ», «Ավելի լավ կյանքի արժանի չեմ», «Նա իմ միակ հենարանն է», ինչն էապես խոչընդոտում է տուժողին ձեռնարկել միջոցներ՝ ուղղված սեփական անվտանգությունն ապահովելուն:



### Թեմայի նպատակն է՝

- ✓ ներկայացնել ընտանեկան բռնության դեպքերում քաղաքացիական գործերի քննության առանձնահատկությունները.
- ✓ ներկայացնել երեխայի բնակության վայրի սահմանման և տեսակցության վերաբերյալ իրավական և հոգեբանական հարցեր.
- ✓ ծանոթացնել երեխայի լավագույն շահի գնահատման բաղադրիչներին և դրանց հոգեբանական առանձնահատկություններին:

Ընտանեկան իրավունքի ոլորտը կարևոր է կանանց իրավունքների պաշտպանության համատեքստում, քանի որ շոշափվում են կանանց համար էական շահեր: Ընտանեկան իրավունքի հարցերն ընդգրկում են երեխաների բնակության վայրի, խնամքի, տեսակցության, ապրուստի միջոցի, ինչպես նաև ամուսնալուծության գործընթացին առնչվող հարցեր:

ԵԽ կոնվենցիայով ընդգծվում է կարևոր կապն ընտանեկան բռնության և ընտանեկան խնդիրների միջև՝ երեխայի խնամակալության, տեսակցության իրավունքների և ապահովության համատեքստում: Անդամ պետություններից պահանջվում է ձեռնարկել «անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ՝ ապահովելու համար, որ երեխաների նկատմամբ խնամակալության և տեսակցության իրավունքների վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի առնվեն Կոնվենցիայի գործողության ոլորտում ընդգրկված բռնության միջադեպերը և «ապահովելու համար, որ տեսակցության կամ խնամակալության որևէ իրավունքի իրականացմամբ չվտանգվեն զոհի կամ երեխաների իրավունքներն ու անվտանգությունը»<sup>71</sup>:

### 8.1. Հաշտարարության կիրառման հետ կապված հարցեր

Դատավորներն ու ոլորտին առնչվող մյուս մասնագետները պետք է նկատի ունենան, որ ամուսնալուծության վերաբերյալ գործերը կարող են ունենալ ընտանեկան բռնության նախապատմություն, հետևաբար կողմերին հաշտեցնելու գործողություն կատարելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ գործ չունենք ընտանեկան բռնության երևույթների հետ, այլապես նման ջանքերը կնպաստեն բռնության շարունակմանը: Ընտանեկան բռնության պատմություն ունեցող անձանց հաշտեցնելու, ընտանիքը վերամիավորելու գործողությունների կատարումը հակասում է միջազգային չափանիշներին: Նման գործերով դատավորները պար-

<sup>71</sup> Տե՛ս հղում 1, 31-րդ հոդված:

տավոր են հնարավորինս արագ լուծել ամուսնությունը, որը հաճախ ընտանեկան բռնությունից պաշտպանվելու առաջին գործողությունն է զոհերի համար: Հետազոտությունները վկայում են, որ բռնության ենթարկված կանայք ամուսնալուծությունը, տեղափոխվելը, հեռանալը նշել են որպես առաջնային գործոն, որն օգնել է դադարեցնել բռնությունը<sup>72</sup>: Այսպիսով՝ ամուսնալուծության գործընթացի հրատապ լուծումը նպաստում է բռնության դադարեցմանը և կանխարգելմանը: Նման պայմաններում դատական կարգով լուծման ենթակա ամուսնության գործերով դատարանները չպետք է կիրառեն հաշտության համար ժամկետ սահմանելու լիազորությունը:

«Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նախքան դատարան դիմելը կողմերը կարող են չդիմել պարտադիր հաշտարարության այն դեպքում, երբ կողմերից որևէ մեկի նկատմամբ կայացվել է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներից որևէ մեկի կիրառման մասին որոշում՝ անկախ այդ անձի կանխարգելիչ հաշվառման վերցված լինելու կամ հաշվառումից հանված լինելու հանգամանքից:

Այսպիսով՝ ընտանեկան բռնության հաղորդման դեպքում կողմերի միջև առկա քաղաքացիաիրավական վեճերի դատական լուծման համար չի պահանջվում մինչև դատարան դիմելն իրականացնել պարտադիր հաշտարարություն:

Ընդհանրապես, պետք է հաշվի առնել, որ հաշտարարության ձևաչափով վեճերի կարգավորումը արդյունավետ է, երբ հիմնված է վեճի կողմերի հավասար բանակցային հնարավորությունների վրա, իսկ բռնության ենթարկված անձը չունի հավասար բանակցային ուժ և չի կարող հավասար հիմունքներով պաշտպանել իր շահերը: Ընտանեկան բռնության գործերով բռնություն գործադրած անձը հաճախ իշխում և վերահսկում է զոհին, ինչի պայմաններում առկա է ուժերի անհավասարակշռություն<sup>73</sup>: ԿՆԽՎԿ-ի կանանց համար արդարադատության մատչելիության վերաբերյալ թիվ 33 ընդհանուր հանձնարարականում նշվում է, որ պետությունները պետք է ապահովեն, որ կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերը ոչ մի պարագայում չլուծվեն վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային ընթացակարգերով<sup>74</sup>:

Նույնատիպ արգելք սահմանված է նաև ԵԽ կոնվենցիայի 49-րդ հոդվածով:

Նշված վեճերի դատական քննության ժամանակ դատավորները պետք է զգուշավորություն ցուցաբերեն կողմերի միջև կնքված համաձայնությունների հաստատմանը և պետք է վստահ լինեն, որ ընտանեկան բռնության զոհը համաձայնությունը կնքել է ազատ կամքի դրսևորմամբ և առանց վախի:

Դատարանները պետք է գենդերազգային մոտեցում ցուցաբերեն նաև ընտա-

<sup>72</sup> Եվրոպայի խորհուրդ, ԵՄ, Գործընկերություն հանուն լավ կառավարման «Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման» ձեռնարկ, 2017 թ.:

<sup>73</sup> [ԵԽ կոնվենցիայի քաղաքական գեկույցի](#) 252-րդ կետ:

<sup>74</sup> ՏՆ հղում 60, § 58:

նեկան բռնությունից զատ կանանց՝ ուշադրության արժանի այլ շահերի պաշտպանության նկատմամբ: Նկատի ունենալով, որ երեխաների խնամքի, ապրուստի միջոցի, համատեղ գույքի բաժանման և այլ գույքային շահերը լուծվում են հաշտարարությամբ, ուստի պետք է ստուգեն, որ նման համաձայնությունները բացասաբար չազդեն կանանց իրավունքների վրա և չունենան խտրական հետևանքներ: Հաշտարարությամբ լուծված հաշտության համաձայնությունը դատական կարգով հաստատելու ժամանակ դատավորը պետք է պարզի համաձայնության օրենքի պահանջներից բխելու հանգամանքը: Ալիմենտի բռնագանձման հարցով հաշտարարությամբ կնքված համաձայնությունը հաստատելիս անհրաժեշտ է ստուգել օրենքի պահանջներից բխելու հանգամանքը: Պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ հաշտարարությամբ սահմանվել է ալիմենտի գումարի չափ, որը պակաս է օրենքով նախատեսված չափից, և դատարանը, պետական եկամուտների կոմիտեից ստանալով համապատասխան տվյալներ ալիմենտ վճարողի եկամուտների չափի վերաբերյալ, մերժել է հաստատել հաշտարարությամբ կնքված համաձայնությունը<sup>75</sup>: Կարևոր է նաև ապահովել հաշտարարությամբ լուծվող ընտանեկան գործերի վերաբերյալ տվյալների մատչելիությունը, որը հնարավորություն կտա պարզելու՝ ընտանեկան վեճերի այլընտրանքային լուծումը անհավասար ազդեցություն չի ունենում արդյոք կանանց իրավունքների իրացման նկատմամբ:

## 8.2. Երեխայի լավագույն շահի սահմանումը

Ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության կարևորագույն սկզբունքներից է երեխայի լավագույն շահերի առաջնահերթությունը:

Ընտանեկան բռնության գործերով երեխան հաճախ հենց ինքն է դառնում բռնության զոհ կամ ակնատես է լինում բռնության, որի պայմաններում երեխան ստանում է տուժողի կարգավիճակ և պետք է օգտվի պաշտպանության բոլոր միջոցներից: Նման մոտեցումը բխում է ինչպես ընտանեկան բռնության դեմ պայքարի, այնպես էլ երեխայի լավագույն շահի ապահովման նպատակներից: **Ընդ որում՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ ընտանեկան բռնության ենթարկված կինը, տարբեր հանգամանքներով պայմանավորված, շարունակում է համատեղ բնակությունը ամուսնու հետ, ամուսինը և/կամ կինը հորդորում են երեխաներին՝ բռնության վերաբերյալ տեղեկությունները թաքցնել իրավապահ մարմիններից, երեխաները ոչ միայն բռնության իրավիճակով պայմանավորված հոգեբանական տրավմա են ունենում, այլև նրանց մեջ ձևավորվում է այդ սցենարի վերաբերյալ ապակառուցողական դիրքորոշում, որպես ընդունելի կենսակերպի մոդել՝ ամրապնդվում են տուժողի կամ ագրեսորի վարքային մեխանիզմները:**

<sup>75</sup> Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, [դատական գործ թիվ ՍԴ/0342/02/25](#), 2025 թ. օգոստոսի 13:

Երեխայի լավագույն շահը սահմանված է միջազգային մի շարք գործիքակազմերում:

Երեխայի իրավունքների մասին հռչակագրի (1959 թ.) 2-րդ հոդվածը սահմանում է, որ երեխայի լավագույն շահը պետք է ունենա գերակայություն: Երեխան պետք է վայելի հատուկ պաշտպանություն ազատության և արժանապատվության պայմաններում ֆիզիկապես, բարոյապես, սոցիալապես, մտավոր և հոգևոր զարգացում ունենալու համար<sup>76</sup>:

Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեի 14-րդ ընդհանուր մեկնաբանությունների համաձայն՝ երեխայի լավագույն շահը պահանջում է, որ ապահովվեն երեխայի ֆիզիկական, հոգեբանական, բարոյական և հոգևոր ամբողջական պաշտպանությունը, և խթանվի նրա մարդկային արժանապատվությունը<sup>77</sup>:

Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեի 14-րդ ընդհանուր մեկնաբանությունները սահմանել են երեխայի լավագույն շահի գնահատման չափանիշներ: Երեխայի լավագույն շահը որոշելիս դատարանները պետք է հաշվի առնեն հետևյալ տարրերը.

- երեխայի կարծիքը.
- երեխայի ինքնությունը, ներառյալ՝ սեռը, ազգային ծագումը, կրոնը, մշակութային ինքնությունը և անձնային հատկանիշները.
- ընտանեկան միջավայրի պահպանությունը և ծնող-երեխա հարաբերությունների պահպանությունը.
- երեխայի խնամքի, պաշտպանության և անվտանգության ապահովումը, որը առաջնահերթորեն վերաբերում է երեխային ֆիզիկական և հոգեբանական բռնությունից (ինչպես առկա, այնպես էլ հնարավոր) և ներազդեցությունից զերծ պահելուն: Այն նաև ներառում է անհրաժեշտ պայմանների ստեղծում երեխայի ֆիզիկական, մտավոր և հուզական անխոչընդոտ զարգացման համար.
- երեխայի խոցելիությունը՝ անապահով ընտանիքում գտնվելը, բռնության ենթարկված լինելը, կամ բռնության ականատես լինելը և այլն.
- երեխայի առողջությունը.
- երեխայի կրթության իրավունքը:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր CM/Rec(2025)5 հանձնարարականով սահմանել է երեխայի լավագույն շահի գնահատման համար անհրաժեշտ բաղադրիչների ցանկը և դրանց կիրառման առանձնահատկությունները: Նախարարների կոմիտեն նշել է, որ երեխայի լավագույն շահը պետք է լինի առաջնային նկատառում կամ օրենքով սահմանված դեպքերում գերակա նկատառում

<sup>76</sup> UN, [Declaration of the Rights of the Child](#), 1959.

<sup>77</sup> UN Committee on the Rights of the Children, [General Comment No. 14](#), 2013, Երեխայի իրավունքների մասին, ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածն ընդգծում է, որ երեխաների նկատմամբ իրականացվող բոլոր գործողություններում, ներառյալ դատարանների կողմից ձեռնարկված միջոցառումները, առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի երեխայի լավագույն շահին:

բոլոր տեսակի վարույթներով, որտեղ որոշումներ են կայացվում կամ գործողություններ ձեռնարկվում:

Ի լրումն Երեխայի իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեի՝ երեխայի լավագույն շահը գնահատելիս սահմանված չափանիշների, ԵԽ նախարարների կոմիտեի վերոնշյալ հանձնարարականով հիմք են ընդունվում հետևյալ հանգամանքները.

- երեխայի համար կայուն միջավայրի պահպանումը, ներառյալ ընտանեկան և սոցիալական միջավայրի պահպանումը.
- երեխայի դաստիարակության և խնամքի պատմությունը.
- երեխայի առօրյա գործունեությունը և հորբիները:

ՄԻԵԴ-ը նույնպես սահմանել է երեխայի լավագույն շահը մի շարք գործերով, որտեղ անդրադարձ է կատարվել երեխայի խնամքին և դաստիարակությանը վերաբերող տարբեր հարցերի<sup>78</sup>: Միևնույն ժամանակ, ՀՀ Վճռաբեկ դատարանը ևս իր որոշումներում անդրադարձել է երեխայի լավագույն շահի դրսևորման տարբեր առանձնահատկություններին<sup>79</sup>:

ԵԽ Նախարարների կոմիտեի CM/Rec(2025)5 հանձնարարականի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ երեխան իրավունք ունենա ստանալ անկախ աջակցություն և իրավաբանական օգնություն, ինչպես նաև, ազգային օրենսդրության համաձայն, դատական գործընթացի ամբողջ ընթացքում իր ծնողներից կամ այլ կողմերից առանձին իրավաբանական ներկայացուցչություն՝ համաձայն Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ երեխայակենտրոն արդարադատության վերաբերյալ ուղեցույցների<sup>80</sup>:

### **8.3. Երեխայի բնակության վայրի սահմանման և տեսակցության վերաբերյալ իրավական հարցեր**

ՀՀ ընտանեկան օրենսգիրքը երկու ծնողների համար հավասար իրավունքներ և պարտականություններ է սահմանում<sup>81</sup>: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանվում է, որ երեխայից առանձին ապրող ծնողն իրավունք ունի երեխայի հետ շփվելու, նրա դաստիարակությանը մասնակցելու, երեխայի կրթություն ստանալու հարցերը լուծելու: Ծնողը, որի հետ ապրում է երեխան, չպետք է խոչընդոտի մյուս ծնողի հետ երեխայի շփմանը, եթե նման շփումը վնաս չի պատճառում երեխայի ֆիզիկական ու հոգեկան առողջությանը, նրա բարոյական զարգացմանը:

<sup>78</sup> Մին ընդեմ Ֆինլանդիայի [[C. v. Finland](#)], թիվ 18249/02, 2006 թ. մայիսի 9, Յոհանսենն ընդեմ Նորվեգիայի [[Johansen v. Norway](#)], թիվ 17383/90, 1996 թ. հունիսի 27:

<sup>79</sup> ՀՀ Վճռաբեկ դատարան, դատական գործ թիվ [ԵԴ/66351/02/22](#), ՀՀ Վճռաբեկ դատարան, դատական գործ թիվ [ԵԴ/40003/02/19](#) և այլ գործեր:

<sup>80</sup> Council of Europe Committee of Ministers, [Recommendation of the Committee of Ministers to member States on the protection of the rights and best interests of the child in care proceedings](#), CM/Rec(2025)5, 2025, § 33:

<sup>81</sup> [ՀՀ ընտանեկան օրենսգիրք](#), 49-րդ հոդված:

Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ ծնողներից մեկից կամ երկուսից բաժանված երեխան իրավունք ունի կանոնավոր կերպով անձնական հարաբերություններ և ուղղակի կապեր պահպանել ծնողների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի լավագույն շահին<sup>82</sup>:

Դատարանները պետք է նաև հաշվի առնեն Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 19-րդ հոդվածի պահանջները, որը պարտավորեցնում է անդամ պետություններին՝ պաշտպանել երեխաներին ծնողների, խնամակալների կամ երեխայի մասին հոգ տանող այլ անձի կողմից հոգեկան կամ ֆիզիկական բռնության բոլոր ձևերից<sup>83</sup>: Ընդ որում՝ երեխաների նկատմամբ ցանկացած ձևի բռնություն, անկախ դրա թեթև կամ ծանր լինելու հանգամանքից, անընդունելի է<sup>84</sup>:

Բռնության սահմանման համար նախապայման չեն դրա հաճախականությունը, վնասի ծանրությունը կամ վնաս պատճառելու դիտավորությունը: Ցանկացած տեսակի բռնություն չի կարող լինել իրավական և/կամ սոցիալական հիմնավորմամբ ընդունելի<sup>85</sup>:

ԿՆԽՎԿ-ն թիվ 21 ընդհանուր հանձնարարականով, անդրադառնալով երեխայի խնամքի հարցերին, նշել է, որ երեխայի խնամքի և խնամակալության իրականացման որոշման հարցում պետք է հաշվի առնվեն ընտանեկան բռնությունը և ոտնձգության ենթարկված զուգընկերոջ խոցելի կարգավիճակը<sup>86</sup>:

Եւս նախարարների կոմիտեն նշել է, որ երեխայի փոքր տարիքը չպետք է որոշիչ գործոն լինի երեխային ծնողների հետ կապ հաստատելու և պահպանելու իրավունքից զրկելու համար<sup>87</sup>:

Երբ անսահմանափակ շփումը չի համապատասխանում երեխայի լավագույն շահին, պետք է դիտարկել վերահսկվող շփման կամ շփման այլ ձևերի հնարավորությունը: Պետք է նաև կիրառել շփման կասեցումը կամ շփման արգելումը, և դա կարող է համապատասխանել երեխայի լավագույն շահերին<sup>88</sup>:

ՄԻԵԴ-ը Ի. Մ. և այլք ընդդեմ Իտալիայի գործով, որը վերաբերում է երեխաների հետ շփմանը, որոնք ականատես են եղել ընտանեկան բռնությանը և ստիպված են եղել մոր հետ տնից հեռանալ, կարևորել է այն փաստը, որ երեխաները երեք տարի շարունակ ունեցել են շփում իրենց բռնարար հոր հետ անապահով միջավայրում: Ընդ որում՝ իշխանությունները տեղեկացվել են հոր բռնի գործողությունների մասին, ինչպես նաև այն մասին, որ երեխաները ականատես են եղել մոր նկատմամբ հեզնական վերաբերմունքին, ինչպես նաև հոր կողմից երեխա-

<sup>82</sup> [Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա](#), 1989 թ., 9-րդ հոդված:

<sup>83</sup> Տե՛ս նույն տեղում, 19-րդ հոդված:

<sup>84</sup> UN Committee on the Rights of the Children, [General Comment No. 13](#), 2011:

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>86</sup> CEDAW, [Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women](#): Czech Republic, CEDAW/C/CZE/CO/5, 2010, § 23; CEDAW, [Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women: Germany](#), CEDAW/C/DEU/CO/6, 2009, § 42:

<sup>87</sup> Տե՛ս հղում 81, § 18:

<sup>88</sup> Տե՛ս նույն տեղում, § 19:

ներին իրենց մոր վերաբերյալ ասված վիրավորական և նվաստացուցիչ արտահայտությունների մասին, և պետությունը, ի դեմս դատական և այլ մարմինների, չի իրականացրել վտանգի գնահատում և հարկադիր շահերի համադրում: Դատարանն ընդգծել է, որ ազգային դատարանները չեն ապահովել երեխաների լավագույն շահերի գերակայությունը իրենց հոր՝ երեխաների հետ շփում պահպանելու շահի նկատմամբ: Դատարանը եզրակացրել է, որ հոր հետ շփումը խախտել է երեխաների հոգեբանական և զգացմունքային հավասարակշռությունը, արդյունքում պետությունը ձախողել է երեխաների առողջ և անհոգ զարգացման ապահովումը և խախտել է ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածը<sup>89</sup>:

Այն դեպքերում, երբ երեխան գտնվում է ծնողի կամ շփման իրավունք ունեցող այլ անձի կողմից բռնության կամ այլ վնաս կրելու վտանգի տակ, իրավասու մարմինը պետք է կարողանա անհապաղ կասեցնել ուղղակի շփումը ժամանակավորապես կամ հրահանգել անուղղակի, վերահսկվող կամ աջակցվող շփում կամ ցանկացած այլ միջոցառում, որը համապատասխանում է երեխայի լավագույն շահերին:

Այն դեպքերում, երբ երեխան համառորեն հրաժարվում է մասնակցել շփմանը, մինչև վերջնական որոշման կայացումը պետք է նախատեսվեն ժամանակավոր միջոցառումներ՝ երեխայի լավագույն շահերին համապատասխան<sup>90</sup>:

Այս համատեքստում կարևոր է պետության կողմից ռիսկերի պատշաճ գնահատումը: Այսպես՝ ՄԻԵԴ-ը պահանջել է, որ բռնության կամ այլ տեսակի վատ վերաբերմունքի ռիսկերի գնահատումը կազմի խնամակալության և տեսակցության իրավունքների վերաբերյալ վարույթների անբաժանելի մասը: Միևնույն ժամանակ Դատարանը նշել է, որ երեխայի հետ շփման իրավունքը որոշելիս ընտանեկան բռնության դեպքերը հաշվի չառնելը կարող է հանգեցնել ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի խախտման<sup>91</sup>:

Վերը նշվածի հիմքով ընտանեկան բռնության դեպքերում դատարանը պետք է քննարկի երեխայի հետ բռնարարի տեսակցության և շփման սահմանափակման հարցը՝ ելնելով բռնության ենթարկվածի և երեխայի ֆիզիկական ու հոգեբանական անվտանգությունը ապահովելու նկատառումներից, որը երեխայի լավագույն շահի անբաժանելի մասն է կազմում: Նշված պահանջը վերաբերում է նաև դատական ակտով արդեն իսկ սահմանված տեսակցություններին:

<sup>89</sup> Ի.Մ.-ն և այլք ընդեմ Իտալիայի ([I.M. et autres c. Italie](#)), 2022 թ. նոյեմբերի 10:

<sup>90</sup> Տե՛ս հղում 81, §§ 50, 51:

<sup>91</sup> Լյուկան ընդեմ Մոլդովայի Հանրապետության [[Luca v. the Republic of Moldova](#)], թիվ 55351/17, 2023 թ. հոկտեմբերի 17:

## 8.2. Գենդերազգայուն դատավարական մոտեցումներ երեխայի բնակության վայրի և տեսակցությունների կարգի որոշման գործերում

### 1. Դատավարական որոշումների հոգեբանական հիմքերը ընտանեկան բռնության համատեքստում

Երեխայի բնակության վայրի և տեսակցությունների կարգի որոշման ընթացքում քաղաքացիական գործերով դատավորը հաճախ բախվում է ընտանիքի ներսում առկա խորքային հոգեբանական խնդիրներին, որոնք ձևավորվել են երկարատև լարվածության, բռնության կամ փոխադարձ վերահսկողության պայմաններում: Ընտանեկան բռնությունը ոչ միայն իրավական խախտում է, այլ նաև հոգեբանական երևույթ, որն ունի դինամիկ զարգացում. այն կարող է վերածվել ոչ ֆիզիկական, սակայն նույնքան վնասակար հուզական, տնտեսական կամ հոգեբանական ճնշման:

Այս իրավիճակներում **դատական որոշումների հիմնավորումն անհրաժեշտ է կառուցել երեխայի և ծնողների հոգեբանական վիճակի համալիր գնահատման վրա**, քանի որ իրավական և հոգեբանական գործոնները փոխկապակցված են: Հոգեբանական վերլուծությունը թույլ է տալիս գնահատել, թե ծնողական վարքը արդյոք նպաստում է երեխայի հոգեկան կայունությանը, թե՞ շարունակում է բռնարար դինամիկան այլ ձևով: Ընդ որում՝ անհրաժեշտ է դիտարկել, որ դատական վեճի ընթացքում յուրաքանչյուր ծնող երեխայի լավագույն շահը ուրվագծում է իր համար նախապատվելի հանգամանքների շրջանակում, ինչի արդյունքում հաճախ երեխայի լավագույն շահը նույնականանում է ծնողի շահի հետ, և արդյունքում առավելություն է ստանում այն ծնողը, որի ներկայացուցիչն առավել ներկայանալի կերպով է հանդես գալիս և առավել համոզիչ է կարողանում ներկայացնել իր վստահորդի ակնկալիքների տիրույթում երեխայի լավագույն շահի դիտարկումը: Այս հանգամանքի պայմաններում էապես կարևոր է դատավորի կողմից **վիճելի հանգամանքների ընկալման և գնահատման հոգեբանական հավասարակշռությունը**, քանի որ դատական գործընթացում ձևավորվող տպավորությունը հաճախ կարող է պայմանավորվել ոչ միայն ներկայացված փաստական տվյալներով, այլև կողմերի վարքային դրսևորումներով, հաղորդակցության հուզական տոնայնությամբ և ներկայացման ձևով: Այստեղ դատավորի դերը գերազանցում է իրավական գնահատման սահմանները և ներառում է **հոգեբանական ընկալման ու ինքնագիտակցության բարձր մակարդակ**, որը հնարավորություն է տալիս զանազանելու՝ տվյալ փաստարկը արդյոք արտացոլում է երեխայի իրական կարիքը, թե՞ ծնողի անհատական ընկալման, վախերի կամ վերահսկման անհրաժեշտության արդյունք է:

Այս համատեքստում դատավորից պահանջվում է.

- հիմք ընդունել, որ ծնողների կողմից ներկայացվող «երեխայի լավագույն շահի» պատկերը հաճախ կրում է **սուբյեկտիվ և հուզականորեն կողմնակալ բնույթ**.
- զերծ մնալ այն ազդեցություններից, որոնք պայմանավորված են կողմերի արտաքին համոզչությամբ, հռետորական կարողություններով կամ հասարակական կերպարով.

- կիրառել **հոգեբանական չեզոքություն**, որը ենթադրում է ոչ միայն անաչառություն, այլև ներքին դիտողունակություն՝ սեփական համակրանքների, տպավորությունների և նախատրամադրվածությունների նկատմամբ:

Բացի դրանից՝ դատավորի համար առանձնակի կարևոր է ճանաչել այն **ներդատավարական հոգեբանական դինամիկան**, որը կարող է ձևավորվել կողմերի միջև՝ հատկապես երբ նրանց հարաբերություններում առկա են ուժային անհավասարություններ, կախվածության կամ վերահսկման նախորդ փորձեր: Նման դեպքերում երեխայի շահի գնահատումը պետք է հիմնվի ոչ թե ծնողների պահանջների համաչափության, այլ երեխայի հոգեբանական կայունության, անվտանգության և զարգացման միջավայրի երաշխավորման հիման վրա:

Այսպիսով՝ դատավարական որոշումների հոգեբանական հիմքը ընտանեկան գործերում դատավորի **էմպաթիկ, բայց ոչ հուզականորեն ներգրավված ընկալման կարողությունն է**, որն ապահովում է հավասարակշռություն իրավական և մարդկային գործոնների միջև՝ միաժամանակ պահպանելով դատական գործընթացի չեզոք և պաշտպանական բնույթը:

## **2. Երեխայի հոգեբանական անվտանգությունը և տրավմայից պաշտպանությունը**

Անհրաժեշտ է դիտարկել, որ երեխայի «լավագույն շահը» ոչ միայն իրավական, այլև հոգեբանական կատեգորիա է, չի սահմանափակվում ֆիզիկական անվտանգությամբ և ներառում է՝

- հուզական կայունության պահպանում.
- շփման ազատության ապահովում առանց վախի կամ մանիպուլյացիայի.
- անվտանգության կանխատեսելի զգացողություն և վստահություն ծնողներից յուրաքանչյուրի նկատմամբ.
- կոնֆլիկտից զերծ միջավայրում ապրելու հնարավորություն:

Երեխայի վրա ազդեցություն թողնում են ոչ միայն բռնարար գործողությունները, այլև վախի մթնոլորտը, ծնողների միջև երկարատև կոնֆլիկտները և դատարանի կողմից անորոշ կամ անհավասարակշիռ որոշումները, ուստի հատկապես ընտանեկան բռնության համատեքստում դատավորի առաջ ծառանում է կարևոր խնդիր՝ խուսափել այն հոգեբանական սխալից, երբ երեխայի արտաքին կայուն վարքը կամ ծնողի նկատմամբ պահպանվող արտաքին դրական վերաբերմունքը մեկնաբանվում են որպես տրավմայի բացակայության կամ հոգեբանական անվտանգության ցուցանիշ: Իրականում նման վարքը հաճախ հարմարվողական արձագանք է՝ պայմանավորված վերահսկման, վախի կամ կախվածության ներքին դինամիկայով: Հետևաբար, դատավորի կողմից որոշման ընդունման հիմքում պետք է լինի **երեխայի հոգեբանական վերականգնման և ներքին կայունության ապահովման սկզբունքը**, իսկ տեսակցությունների սահմանման դեպքում՝ **վերականգնողական մոտեցումը**, ոչ թե իրավահավասարության ֆորմալ չափորոշիչը:

### **3. Ծնողներից մեկի կողմից երեխայի նկատմամբ ազդեցության (ալիենացիայի) հոգեբանական մեխանիզմները**

Ծնողներից մեկի կողմից երեխայի նկատմամբ բաց կամ թաքնված բացասական ազդեցությունը կարող է երեխայի մեջ հակասական վերաբերմունք ձևավորել մյուս ծնողի հանդեպ նույնիսկ բռնության բացակայության պարագայում: Այդ երևույթը հաճախ ուղեկցվում է՝

- մեղքի, շփոթության կամ վախի զգացումներով (հատկապես երբ դատական վճռի չկայացման դեպքում ծագում է ծնողներից մեկի կողմից խոչընդոտելու հիմքով քրեական վարույթ նախաձեռնելու անհրաժեշտություն, և տվյալ ծնողը երեխային ներկայացնում է, որ եթե երեխան չհայտնի, որ դա իր կամքով է, այլ ոչ թե ծնողն է ազդում, այդ ծնողին կզրկեն ազատությունից, երեխան կմնա առանց այդ ծնողի, ուստի առկա է լինում արտահատված մեղքի զգացում իր գործողություններով նման իրավիճակ ստեղծելու համար):
- ծնողական դերերի խեղաթյուրումով (օրինակ՝ երբ երեխան ստանձնում է ծնողին պաշտպանելու գործառույթ կամ «պատժում» է մյուս ծնողի հետ բնակությունը դադարեցնելու որոշում կայացնելու համար, որոնք դրսևորվում են բացասական արտահայտչամիջոցներ, մինչև անգամ հայիոյանքներ ուղղելով, լինում են նաև երեխայի կողմից ֆիզիկական բռնության հակվածության դեպքեր՝ այդ ծնողի վրա թքելու դրսևորումներով):
- սեփական ինքնության խախտմամբ:

Դատավորը պետք է ունենա պատրաստվածություն նման ազդակները ճանաչելու համար՝ հենվելով հոգեբանական փորձագիտական եզրակացությունների, երեխայի և ծնողների վարքի և ընտանիքի փոխազդեցության դինամիկ դիտարկումների վրա:

Մինևույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ երեխայի վրա հոգեբանական ազդեցություն գործող ծնողները սովորաբար առավել հաճախ են վկայակոչում երեխային հոգեբանական տրավմայի չենթարկելու կարևորությունը՝ առավելապես օգտագործելով բոլոր այն դեպքերում, երբ իրողությունների համակողմանի գնահատման նպատակով անհրաժեշտ է լինում իրականացնել դատահոգեբանական փորձաքննություն, որը որոշակիորեն դուրս է գալիս ծնողների կառավարելիության տիրույթից և կարող է չարտացոլել ազդեցություն գործող ծնողի կողմից նախապես ծրագրած պատկերը:

### **4. Տեսակցությունների կարգ սահմանելիս և բնակության վայր որոշելիս դատավորի կողմից ուշադրության ենթակա հոգեբանական գործոնները**

Դատավորի կողմից կիրառվող որոշումը պետք է հիմնված լինի ոչ միայն իրավական փաստերի, այլև հոգեբանական գործոնների գնահատման վրա, որոնց թվում են՝

- **Երեխայի հուզական կապի բնույթը** յուրաքանչյուր ծնողի հետ. դրական կապը ոչ միշտ է հավասար ծնողական իրավունքի հետ:

- **Ծնողի ունակությունը՝ ճանաչելու և բավարարելու երեխայի հուզական կարիքները**, ոչ միայն նյութական պայմանները:
- **Ծնողի վերաբերմունքը մյուս ծնողի նկատմամբ**. նա նպաստում է արդյոք երեխայի համար առողջ պատկերացման ձևավորմանը, թե՛ հակառակը՝ ստեղծում է շարունակական մեղադրանքի և չլուծվող կոնֆլիկտի մթնոլորտ:
- **Բռնության պատմության ճանաչումն ու դրա հետևանքների ընդունումը**. բռնարար անցյալ ունեցող ծնողի՝ փոխվելու և ինքնագիտակցման աստիճանը կարող է որոշիչ լինել տեսակցությունների ձևավորման հարցում:
- **Երեխայի կարծիքի լսելիությունը՝** ապահովելով, որ այն արտահայտվի առանց ճնշման և վախի:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ 10 տարին լրացած երեխայի կարծիքը պետք է հաշվի առնվի դատարանի կողմից: Սակայն այս դրույթը գործնականում հաճախ ենթարկվում է սխալ մեկնաբանության կամ ոչ լիարժեք կիրառման, քանի որ տվյալ տարիքային շրջանում երեխան դեռևս չունի կայուն ինքնություն դիրքորոշում, և նրա կարծիքը հեշտությամբ կարող է ձևավորվել արտաքին ազդեցությունների ներքո:

Հոգեբանական տեսանկյունից 10 տարեկան երեխայի կամարտահայտությունը դեռևս գտնվում է **ծնողական ազդեցության և կախվածության գոտում**. այս տարիքում երեխան հակված է նույնականացնելու իրեն այն ծնողի հետ, որի ներկայությամբ նա իրեն զգում է առավել անվտանգ, կամ որի ազդեցությունն առավել արտահայտված է: Սա չի նշանակում, որ երեխայի կարծիքը չպետք է լսվի, այլ որ դատավորի առաջ ծառանում է բարդ խնդիր՝ **զանազանելու երեխայի իսկական կարծիքը նրանից պարտադրված կամ ուղղորդված դիրքորոշումից**:

Այս նպատակով անհրաժեշտ է, որ դատավորները հաշվի առնեն մի շարք հոգեբանական գործոններ՝

- երեխայի արտահայտած կարծիքը արդյոք համապատասխանում է նրա ընդհանուր վարքային դրսևորումներին.
- այն արտահայտվում է արդյոք բնական, ինքնուրույն ձևով, թե՛ ունի մշակված, չափազանց հասուն կամ չափազանց պաշտպանողական բնույթ.
- առկա են արդյոք այնպիսի հուզական արտահայտություններ (վախ, մեղքի զգացում, չափազանց հավատարմություն մի ծնողի հանդեպ), որոնք վկայում են ներքին ճնշման կամ մանիպուլյացիայի մասին:

Դատավորի համար առանցքային է գիտակցելը, որ երեխան, գտնվելով ընտանեկան հակամարտության կենտրոնում, հաճախ ձգտում է հարմարվել առավել ազդեցիկ ծնողի սպասումներին՝ նվազեցնելու կոնֆլիկտը և պահպանելու հարաբերական անվտանգությունը: Այդ պատճառով երեխայի կարծիքը չպետք է դիտարկվի որպես մեկուսացված ապացույց, այլ որպես հոգեբանական ցուցիչ, որը պետք է համադրվի մասնագիտական եզրակացությունների, սոցիալական միջավայրի դիտարկումների և ընդհանուր ընտանեկան դինամիկայի գնահատման հետ:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս զերծ մնալ երեխայի կարծիքի շահարկումից և ապահովել, որ նրա կամարտահայտությունը դիտվի ոչ թե որպես դատավարական գործիք, այլ որպես **երեխայի իրական հոգեբանական բարեկեցության արտացոլում**:

#### **5. Գենդերային կողմնակալությունների դերը ծնողական իրավունքի գնահատման մեջ**

Դատական պրակտիկայում հաճախ նկատվում են անգիտակցական գենդերային կողմնակալություններ՝ հետևյալ դրսևորումներով.

- կնոջ նկատմամբ «բնական խնամողի» ակնկալիք.
- տղամարդու նկատմամբ «ֆինանսական պատասխանատվության» առաջնահերթ դիտարկում.
- բռնության դեպքերում՝ բռնարարի վարքի «հուզական արդարացում»:

Այս կողմնակալությունները խաթարում են դատական հավասարակշռությունը և կարող են հանգեցնել երեխայի շահերի անտեսման:

Գենդերազգայուն մոտեցումը ենթադրում է՝

- ծնողական ունակությունների և հոգեբանական ռեսուրսների գնահատում՝ անկախ սեռից.
- բռնության ձևերի ճանաչում, որոնք հաճախ թաքնված են հոգեբանական կամ տնտեսական մակարդակներում.
- երեխայի նկատմամբ ծնողների ազդեցության դիտարկում ոչ թե գենդերային դերերի, այլ հոգեբանական կայունության համատեքստում:

#### **6. Գործնական հոգեբանական ուղեցույցներ գենդերազգայուն դատավարության համար**

1. **Երեխայի հետ կապված գործերում առաջնահերթորեն դիտարկել հոգեբանական անվտանգության ապահովումը՝** որպես գերակա շահի բաղադրիչ:
2. **Դատարանը պետք է ապահովի միջավայր, որը հնարավորություն կտա երեխային արտահայտել կարծիք առանց վախի, ցանկալի է՝** մասնագիտացած միջնորդի կամ հոգեբանի աջակցությամբ:
3. **Ծնողների հարցաքննության ընթացքում դատավորը պետք է խուսափի գենդերային ենթատեքստ ունեցող հարցադրումներից, որոնք կարող են նպաստել կողմնակալ մեկնաբանություններին:**
4. **Անհրաժեշտության դեպքում նշանակել հոգեբանական փորձաքննություն ոչ թե ֆորմալ հիմքով, այլ կոնկրետ ռիսկերի բացահայտման նպատակով** (երեխայի տրավմատիկ փորձառություն, ծնողական կարողություններ, բռնության ազդեցություն):
5. **Տեսակցությունների սահմանման ժամանակ կարևոր է ապահովել աստիճանական, վերահսկվող և վերականգնողական բնույթի շփում, հատկապես եթե եղել է բռնության պատմություն:**
6. **Դատավորի որոշման հիմնավորման մեջ նպատակահարմար է արտա-**

- ցուել ոչ միայն իրավական, այլև հոգեբանական եզրակացությունները, որոնք վկայում են երեխայի զարգացման միջավայրի կայունության մասին:**
- 7. Գենդերազգայուն մոտեցումը պահանջում է ոչ թե «կողմերի հավասարություն», այլ երեխայի լավագույն շահի հաշվառմամբ արդարություն, ինչը հնարավոր է միայն ընտանիքի ներսում առկա հոգեբանական հարաբերությունները հասկանալու դեպքում:**

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է շեշտադրել, որ երեխայի բնակության վայրի և տեսակցությունների կարգի որոշման գործերը պահանջում են ոչ միայն իրավական, այլև բարձր մակարդակի հոգեբանական զգայունություն, ուստի դատավորի կողմից գենդերազգայուն և տրավմազգայուն մոտեցման կիրառումը նպաստում է ոչ միայն արդար որոշման կայացմանը, այլև ընտանիքի անդամների՝ հատկապես երեխայի հոգեբանական բարեկեցության ապահովմանը, արտահայտում է արդարադատության մարդակենտրոն և արժանապատիվ բնույթը՝ միաժամանակ ամրապնդելով հասարակական վստահությունը դատական համակարգի նկատմամբ:



### Թեմայի նպատակն է

- ✓ Քննարկել դատական պրակտիկայում հանդիպող իրավիճակային խնդիրներ

### ԻՐԱՎԻՃԱԿ 1

**Դեպքի նկարագրություն.** 2024 թ. սեպտեմբերին ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանները արձանագրեցին ընտանեկան բռնության դեպք: Բռնությունը տեղի էր ունեցել հանրային վայրում և տեսագրվել է խանութի անվտանգության տեսախցիկների կողմից: Առաջին դեպքը չէր, որ ամուսինը կիրառել էր ֆիզիկական բռնություն կնոջ նկատմամբ. նախկինում ևս եղել էին միջադեպեր, որոնք կնոջը ստիպել էին ժամանակավորապես հեռանալ տնից:

Հաշվի առնելով կնոջ և նրա անչափահաս երեխայի կյանքի և առողջության նկատմամբ առկա իրական վտանգը՝ Ոստիկանությունը անմիջապես կիրառեց **անհետաձգելի միջամտության որոշում**՝ արգելելով բռնություն գործադրած ամուսնուն մոտենալ կնոջը, երեխային (որն ականատես էր եղել բռնությանը և օրենքով սահմանված կարգով նույնպես ճանաչվեց տուժող) կամ կնոջ բնակության վայրին, ինչպես նաև շփվել նրա և երեխայի հետ որևէ եղանակով 25 օր ժամկետով:

**Դատավարական զարգացումներ.** Դեպքի հաջորդ օրը բռնության ենթարկված կինը դիմեց Ոստիկանություն՝ ամուսնու՝ որպես բռնություն գործադրած անձի վերաբերյալ **հաշվառման թերթիկը** ստանալու նպատակով:

Ոստիկանությունում նրան հայտնեցին, որ հաշվառման թերթիկ տրամադրելը կարող է տևել մի քանի օրից մինչև մեկ-երկու շաբաթ, քանի որ անհրաժեշտ են լրացուցիչ ընթացակարգեր՝ **ամուսնու հաշվառման տվյալների ճշտում, ներքին փաստաթղթերի շրջանառություն և այլն:**

Կինը, չսպասելով երկարատև բյուրոկրատական գործընթացին, որոշեց դիմել **ընդհանուր իրավասության դատարան**՝ առանց հաշվառման թերթիկի՝ հիմնվելով տեսաձայնագրությունների և Ոստիկանության որոշման արձանագրության վրա:

Սակայն Դատարանը մերժեց հայցը՝ պատճառաբանելով հաշվառման թերթիկի բացակայության փաստը: Այդ նույն ընթացքում ամուսինը դիմեց **Վարչական դատարան**՝ բողոքարկելով Ոստիկանության՝ անհետաձգելի միջամտության որոշումը, պնդելով, թե **իր հետ «լսումներ չեն անցկացվել»**, հետևաբար խախտվել է իր «լավաճ լինելու իրավունքը»:

Ոստիկանությունը ներկայացրեց իր փաստարկները՝ նշելով, որ միջամտությունից առաջ փորձել է կապ հաստատել բռնություն գործադրած անձի հետ, որը կնոջը ծեծելուց հետո փախուստի էր դիմել: Ոստիկանությունը զանգահարել էր նրան և հաղորդագրություններ ուղարկել՝ տեղեկացնելով, որ քննարկվում է նրա նկատմամբ անհետաձգելի միջամտության որոշում կայացնելու հարցը, և որ հարկավոր է, որպեսզի իր հետ էլ լսումներ անցկացնեն, սակայն վերջինս **խուսափել է հաղորդակցությունից**՝ անջատելով կապի բոլոր միջոցները: Ոստիկանությունը նաև ընդգծեց, որ անհետաձգելի միջամտությունը կիրառվել է **ՀՀ օրենսդրության սահմանված կարգով**, և իրենք հաշվի են առել **կնոջ կյանքի նկատմամբ առկա ակնհայտ վտանգը**, ինչը պահանջում էր արագ արձագանք:

Չնայած այս փաստարկներին՝ Վարչական դատարանը բավարարեց ամուսնու հայցը՝ **անվավեր ճանաչելով Ոստիկանության որոշումը** «լսված լինելու իրավունքը չապահովելու» հիմքով:

Արդյունքում՝

- Ընդհանուր իրավասության դատարանը **չկայացրեց պաշտպանական որոշում**, քանի որ հաշվառման թերթիկը դեռ չէր տրամադրվել Ոստիկանության կողմից:
- Վարչական դատարանը **48 ժամվա ընթացքում անվավեր ճանաչեց Ոստիկանության ընդունած անհետաձգելի միջամտության որոշումը**:
- Բռնության ենթարկված կնոջ նկատմամբ որևէ **պաշտպանական մեխանիզմ չկիրառվեց**՝ չնայած վտանգի առկայությանը:

### **Քննարկման հարցեր**

1. Ինչպե՞ս պետք է դատարանը հավասարակշռի «լսված լինելու իրավունքը» և «զոհի կյանքի և անվտանգության իրավունքը» անհետաձգելի միջամտությունների պարագայում (անհրաժեշտություն, համաչափություն, կանխատեսելի վնասի չափորոշիչներ):
2. Կարելի էր արդյոք մերժել պաշտպանական որոշումը միայն հաշվառման թերթիկի բացակայության հիմքով, երբ առկա էին այլ ապացույցներ (տեսագրություն, Ոստիկանության արձանագրություն): Դատարանը կաշկանդված էր արդյոք, և չէր կարող ինքը ձեռք բերել այդ թերթիկը կամ որոշում կայացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:
3. Ո՞րն էր լավագույն «միջանկյալ» լուծումը՝ և՛ լսված լինելու իրավունքը ապահովելու, և՛ անվտանգության երաշխիքները ապահովելու համար:

## ԻՐԱՎԻՃԱԿ 2

**Դեպքի նկարագրություն.** Ընդհանուր իրավասության դատարանում քննվում է երեխայի բնակության վայրի հաստատման վերաբերյալ հարցը: Նախկինում թե՛ մայրը՝ Օ.Դ.-ն, և թե՛ անչափահաս երեխան բազմիցս ենթարկվել են հոր՝ Պ.Լ.-ի կողմից ֆիզիկական և հոգեբանական բռնության: Վերջինս հաշվառված է եղել որպես ընտանիքում բռնություն գործադրած անձ:

**Դատավարական զարգացումներ.** Դատական նիստին Պ.Լ.-ն ներկայանում է ինքնավստահ, հավասարակշռված ու զուսպ կերպարով՝ ընդգծելով իր սոցիալական գործունեությունը, մասնագիտական նվաճումները: Նա փորձում է իր նախկին կնոջը սադրել՝ պահպանելով արտաքուստ հանգիստ պահվածք: Նիստի ընթացքում նա հայտարարում է. «Հարգելի դատարան, այս կինը գիժ է, հոգեկան հիվանդ: Ասում է, թե իբր ես իրեն ծեծել եմ, բռնության ենթարկել»: Դատարանը միջամտում է. «Պարոն Լ., Հայաստանում կանանց մեծ մասը նման բաներ է ասում: Ոչինչ, կին է, կարող է մի բան էլ ավելացնել կամ չափազանցնել: Մեծահոգի եղեք»: Պ.Լ.-ն շարունակելով նշում է. «Ես հարգարժան մարդ եմ, ես երկար եմ հանդուրժել այս կնոջ հիստերիաները, ասեմ ավելին՝ նրա կյանքի երազանքն է եղել, որ իրեն բռնության ենթարկված համարեն: Ո՞վ է նա, որ ինձ նման մարդը նրա վրա ձեռք բարձրացնի»:

Կինը սկսում է լաց լինել ու բղավել. «Սուտ է, ես հոգեկան չեմ: Իսկ նա, իրոք, բռնարար է»:

Դատարանը արձագանքում է. «Տիկին Դ., խնդրում եմ հարգալից եղեք դատարանի նկատմամբ և դատավարությանը չխանգարեք: Եթե չեք կարողանում կառավարել Ձեր էմոցիաները, խնդրում եմ լքել դահլիճը: Հակառակ դեպքում ստիպված կլինեմ սանկցիա կիրառել»:

Պ.Լ.-ը շարունակում է. «Այս կինը ոչ լավ կին է եղել, ոչ էլ նորմալ մայր: Ես ստիպված եմ եղել դրսից սնունդ պատվիրել, որովհետև իր պատրաստած ճաշերն էլ իր նման անհամ էին ու զզվելի»: Դատարանը ծիծաղում է ու հավելում. «Լավ, պարոն Լ., տղամարդու պես պահեք Ձեզ: Կին է, կարող էր մեկ-մեկ էլ չեփել, մեծահոգի գտնվեք, չէ՛, տիկին Դ.»:

Կնոջ փաստաբանը միջամտում է՝ նշելով, որ այս արտահայտությունները տեղին չեն, իսկ հնչեցրած պնդումները գործին չեն առնչվում, սակայն դատարանը պատասխանում է. «Այդ դատարանն է որոշում՝ առնչվում է, թե ոչ»:

Կինը փորձում է շարունակել. «Նա միշտ է այսպես վարվել: Երեխայի հանդեպ էլ չի եղել ուշադիր: Վերջին շրջանում շաբաթներով անգամ չի այցելել երեխային»: Դատարանը պատասխանում է. «Տիկին Դ., այնպես եք ասում, կարծես դա բացառիկ մի բան է: Հա, ի՞նչ անենք: Ես էլ եմ զբաղված մարդ, ես էլ օրերով չեմ տեսնում իմ երեխաներին: Ուզում եք ասել՝ ես էլ վամպ հայր եմ»:

Կինը շփոթված ու հուզված պատասխանում է. «Ես պարզապես ասում եմ, որ նա պատասխանատու վարքագիծ չի դրսևորում, ինչը չի բխում երեխայի լավագույն շահից»: Հայրը ընդհատում է. «Ահա՛ տեսեք՝ միշտ լեզուն երկար է եղել, տեղը

չի իմացել: Դրա համար էլ այս օրին է հասել: Եթե ավանդական հարս լիներ, մի քիչ հարգեր ամուսնուն, գուցե մեկ-մեկ էլ ամուսինը ձայն բարձրացներ վրան կամ ձեռք, նման ողբերգություն չէր սարքի այդ ամենից»:

Դատարանը որևէ կերպ չի արձագանքում այս հայտարարությանը: Կնոջ խոսքը մնում է անավարտ, դատարանը շարունակում է՝ առհասարակ անտեսելով ընտանեկան բռնության փաստը. «Երեխայի համար կարևոր է, որ երկու ծնողն էլ հավասարապես մասնակցեն դաստիարակությանը»: Ապա, դիմում է մորը. «Ձեզ խնդրում եմ, որ Ձեզ հավաքեք, շատ նյարդային եք, պոռթկուն, իսկ նա [հայրը], տեսեք, ավելի հավասարակշռված է, սթափ, հանգիստ, երեխան պետք է հավասարակշռված ծնող տեսնի, իսկ ինչ վերաբերում է բնակության վայրին, ապա...»:

### Քննարկման հարցեր

1. Դատավորի վարքագիծն ու արտահայտությունները արդյոք համապատասխանում են դատական անաչառության և չեզոքության սկզբունքին: Որո՞նք են այն խոսքային կամ վերաբերմունքային դրսևորումները, որ ցույց են տալիս ենթագիտակցական և գենդերային կողմնակալություն:
2. Ինչպե՞ս կարող են գենդերային կարծրատիպերը («կանայք հուզական են», «տղամարդիկ՝ ռացիոնալ», «ավանդական ընտանիք») ազդում դատական որոշումների վրա: Կարո՞ղ են արդյոք նման մեկնաբանությունները դիտվել որպես խտրական վերաբերմունք՝ ԵԽ կոնվենցիայի և Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի տեսանկյունից:
3. Դատարանը արդյոք հավասար պայմաններ է ապահովել կողմերի համար: Կարո՞ղ էր արդյոք դատարանի վերաբերմունքը հանգեցնել զոհի կրկնազոհայնացման կամ լռեցման:
4. Ինչպե՞ս պետք է դրսևորվի գենդերազգայուն մոտեցումը դատական նիստերի վարույթում:
5. Դատարանը արդյոք բավարար կերպով է կիրառել «երեխայի լավագույն շահի» սկզբունքը: Ինչպե՞ս են դատավորի հնչեցրած կարծրատիպային արտահայտությունները հակասում այդ սկզբունքին:
6. Ինչպե՞ս է դատավորի կողմից ընտանեկան բռնության փաստի անտեսումը խաթարում արդարադատության բովանդակային արդարությունը և հավասարությունը: Կարո՞ղ է նման անտեսումը դիտվել որպես ինստիտուցիոնալ խտրականություն:
7. Ինչպե՞ս պետք է դատավորը վարվի, երբ կողմերից մեկը դատական նիստի ընթացքում գործածում է գենդերային կարծրատիպեր և խտրական արտահայտություններ:
8. Դատավորը պարտավոր էր արդյոք արձանագրել և զսպել բռնարար կողմի մտաշահարկող/մանիպուլյատիվ վարքագիծը (սադրանք, զոհի վարկաբեկում, նվաստացում, անձի թիրախավորում, խոսքի մոնոպոլիզացիա): Ինչպե՞ս է այս պարտականությունը բխում գենդերազգայուն արդարադատության սկզբունքներից:

### ԻՐԱՎԻՃԱԿ 3

**Դեպքի նկարագրություն.** 2025 թ. հոկտեմբերին ՀՀ ՆԳՆ համայնքային ոստիկանները Արմավիրի մարզում արձանագրեցին ընտանեկան բռնության դեպք՝ ֆիզիկական բռնության գործադրմամբ: Դեպքի վայր ժամանած ոստիկանները կիրառեցին անհետաձգելի միջամտության միջոց բռնություն գործադրած անձի նկատմամբ:

Բռնությանն ականատես էր եղել անչափահաս ութ տարեկան երեխան: Ոստիկանները, հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի դրույթները, երեխային և մորը ճանաչեցին որպես տուժողներ:

**Դատավարական զարգացումներ.** Հաջորդիվ, բռնության ենթարկված կինը դիմեց ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ իր և անչափահաս երեխայի համար երկարաժամկետ պաշտպանական որոշում ստանալու նպատակով:

Դատարանը որոշեց հայցը բավարարել մասնակի՝ կիրառելով վեցամսյա պաշտպանական միջոց միայն մոր նկատմամբ: Դատարանի որոշման մեջ նշված էր. «Թեև ՀՀ օրենքը նախատեսում է բռնության ականատես եղած երեխային ևս ճանաչել բռնությունից տուժող, դատարանը գտնում է, որ այս տարիքում երեխայի բնականոն զարգացման համար հավասարապես կարևոր է երկու ծնողների ներգրավվածությունը, հոգատարությունն ու խնամքը: Բացի դրանից՝ երեխային հորից վեցամսյա ժամկետով տեսակցությունից զրկելը կարող է հոգեբանական տառապանք պատճառել հորը: Հաշվի առնելով այս հանգամանքները՝ Դատարանը գտնում է, որ թեև այլ դեպքում նման իրավիճակում անհրաժեշտ կլիներ կիրառել պաշտպանական միջոց նաև երեխայի նկատմամբ, սակայն, ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից և հոր հետ հոգեհուզական կապի պահպանման նպատակահարմարությունից, ի շահ երկու կողմերի, դատարանը որոշում է չկիրառել պաշտպանական միջոց երեխայի նկատմամբ»:

#### Քննարկման հարցեր

1. Դատարանը կարո՞ղ էր արդյոք չկիրառել պաշտպանական որոշում երեխայի նկատմամբ՝ հիմնվելով հոր հետ հոգեհուզական կապի պահպանման փաստարկի վրա:
2. Ինչպե՞ս է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում բռնության ականատես եղած երեխայի կարգավիճակը և պաշտպանական միջոցների շրջանակը: Ինչ նպատակով է կիրառվում պաշտպանական միջոցը:
3. Ինչպե՞ս պետք է հավասարակշռվեն «երեխայի լավագույն շահը» և «ծնողական իրավունքները»՝ գենդերազգայուն արդարադատության սկզբունքների ներքո:

✓ Ա.Է.-ն ընդդեմ Բուլղարիայի, [A.E. v. Bulgaria](#), 2003 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում, ինչպես նաև 3-րդ հոդվածի խախտում 14-րդ հոդվածի համակցությամբ: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- իրավական և գործնական մակարդակում պատշաճ պաշտպանություն չտրամադրելը ընտանեկան բռնության զոհ երեխային.
- ներպետական արդյունավետ պաշտպանության միջոցների բացակայություն ընտանեկան բռնության դեպքերով և տուժողներին բավարար երաշխիքների բացակայություն.
- լուրջ խախտումների դեպքով՝ ոչ արդյունավետ քննություն.
- կիրառելի օրենսդրական դրույթները բավարար չեն արդյունավետորեն արձագանքելու այն զոհերի նկատմամբ գործադրված բռնության դեմ, որոնք չեն կարող նախաձեռնել և հանդես գալ դատական վարույթում որպես մասնավոր մեղադրողներ.
- կանանց նկատմամբ ընտանեկան բռնության համարժեքորեն չանդրադառնալը, որը հանգեցնում է խտրականության:

✓ Գայդուկևիչն ընդդեմ Վրաստանի, [Gaidukevich v. Georgia](#) 2023 թ., ՄԻԵԿ 2-րդ հոդվածի խախտում (նյութական և ընթացակարգային)՝ 14-րդ հոդվածի համակցությամբ: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- դիմումատուի դստերը ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար համապատասխան կանխարգելիչ միջոցներ չձեռնարկելը, որն ավարտվել է նրա մահով, և իրավապահ մարմինների կողմից արդյունավետ հետաքննություն չիրականացնելը.
- գենդերային բռնությանը չանդրադառնալը.
- գենդերային հիմքով սպանության հնարավորությունը չուսումնասիրելու փաստը՝ չնայած նախկինում՝ մահից առաջ, ընտանեկան բռնության և վնասվածքներ ստացած լինելու բազմաթիվ դեպքերին:

✓ Ջուլիանո Գերմանոն ընդդեմ Իտալիայի, [Giuliano Germano v. Italy](#), 2023 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- դիմումատուի նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ մեղադրանքների շրջանակում հետամտումից պաշտպանելու վարույթում ոստիկանության նախազգուշացում կիրառելու անհրաժեշտությունը հիմնավորող վերաբերելի և բավարար պատճառաբանության բացակայություն:

✓ Լուկան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, [Luca v. the Republic of Moldova](#), 2023 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի (նյութական և ընթացակարգային), 8-րդ

և 14-րդ հոդվածների խախտում՝ 3-րդ հոդվածի համակցությամբ: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- անհապաղ գործողություններ չձեռնարկելը՝ ապահովելու, որ ընտանեկան բռնության զոհը կարողանա կապ պահպանել իր երեխաների հետ,
- ընտանեկան բռնության ռիսկի գնահատում չիրականացնելը, այդ թվում՝ ընտանեկան բռնության մասին բողոքներին ի պատասխան պաշտպանության միջոցներ չտրամադրելը:

✓ Դե Ջորջին ընդդեմ Իտալիայի, [De Giorgi v. Italy](#), 2022 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- դիմումատուի և նրա երեխաների նկատմամբ ամուսնու կողմից վատ վերաբերմունքի և ընտանեկան բռնության արդյունավետ քննության բացակայություն.
- քրեական դատավարության ընթացքում դատական անգործություն:

✓ Մ.Ս.-ն ընդդեմ Իտալիայի, [M.S. v. Italy](#), 2022 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում (նյութական և ընթացակարգային): ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- ազգային իշխանությունների կողմից ջանասիրության բացակայություն սկզբնական շրջանում, քանի որ ուշացումով է միջամտություն կիրառվել, և նախազգուշական միջոց նշանակվել (դիմումատուի նկատմամբ դանակով հարձակումից միայն 22 ամիս անց).
- դիմումատուի նկատմամբ ընտանեկան բռնության կրկնության իրական և անմիջական ռիսկի գոյության անհապաղ և նախաձեռնողական գնահատում չիրականացնելը.
- ազգային դատարանների կողմից ջանասիրության և արագության բացակայությունը, որի արդյունքում բռնարար ամուսինը գրեթե լիակատար անպատժելիություն է ունեցել վաղեմության ժամկետի կիրառման պատճառով:
- դատական անգործություն, որը չի համապատասխանել ներպետական օրենսդրությանը:

✓ Ջ.Լ.-ն ընդդեմ Խորվաթիայի, [J.I. v. Croatia](#), 2022 թ., 3-րդ հոդվածի (դատավարական) խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- բռնաբարության զոհի նկատմամբ նրա բռնարար հոր կողմից ենթադրյալ մահվան սպառնալիքների վերաբերյալ արդյունավետ հետաքննություն չիրականացնելը:

✓ Ի.Մ.-ն և այլք ընդդեմ Իտալիայի, [I.M. and Others v. Italy](#), 2022 թ., 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- երեխաները երեք տարվա ընթացքում շփվում են իրենց բռնարար հոր հետ ոչ ապահով միջավայրում.
- մոր ծնողական իրավունքի կասեցում է տեղի ունեցել, որը դեմ է եղել նման շփմանը.

- բացակայել է ռիսկի գնահատումը կամ շահերի հավասարակշռումը.
  - անտեսվել են երեխայի լավագույն շահերը.
  - կիրառվել է դատարանների կողմից լայնորեն տարածված պրակտիկան՝ «անհամագործակցող ծնողներ» պիտակավորումն այն կանանց նկատմամբ, որոնք դեմ են իրենց երեխաների շփմանը նախկին զուգընկերոջ հետ՝ ընտանեկան բռնության հիմքով:
- ✓ Մալագիչն ընդդեմ Խորվաթիայի, [Malagić v. Croatia](#), 2022 թ., 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալը.
- դիմումատուի ֆիզիկական անձեռնմխելիությունը պաշտպանելու համար ձեռնարկվել են միջոցներ՝ հաշվի առնելով դիմումատուի նախկին ամուսնու կողմից ընտանեկան բռնության կրկնվող բնույթը.
  - երեք տարուց ավելի ուժի մեջ գտնվող պաշտպանական որոշումը վերացնելու վերաբերյալ ներպետական դատարանների որոշումը չի եղել անհիմն կամ ակնհայտորեն անհամաչափ.
  - առկա է իրավական շրջանակ, որը թույլ է տալիս դիմումատուին բողոքարկել ընտանեկան բռնության դեպքը և դիմել պաշտպանության:
- ✓ Վոլոդինան ընդդեմ Ռուսաստանի (թիվ 2), [Volodina v. Russia \(no. 2\)](#), 2021 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.
- ընտանեկան բռնության զոհին կիբեռբռնության կրկնվող գործողություններից պաշտպանելու և բռնարարին պատասխանատվության ենթարկելու անկարողություն:
- ✓ Տունիկովան և այլք ընդդեմ Ռուսաստանի, [Tunikova and Others v. Russia](#), 2021 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում (նյութական և ընթացակարգային), 14-րդ հոդվածի խախտում՝ 3-րդ հոդվածի հետ համակցված: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.
- ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու համար համարժեք միջոցներ չձեռնարկելը և արդյունավետ հետաքննություն չիրականացնելը՝ շարունակական կառուցվածքային խնդրի պատճառով.
  - ընտանեկան բռնության դեմ պայքարի շարունակական ձախողումը և պաշտպանական միջոցներ չձեռնարկելը՝ կանանց նկատմամբ խտրական հետևանքներով:
- ✓ Բուտուրուգան ընդդեմ Ռումինիայի, [Buturugă v. Romania](#), 2020 թ., ՄԻԵԿ 3-րդ (պոզիտիվ պարտավորություններ) և 8-րդ (պոզիտիվ պարտավորություններ) հոդվածների խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.
- ընտանեկան բռնության տեսանկյունից քննություն չիրականացնելը.
  - կիբեռբռնության վերաբերյալ բողոքի քննություն չնախաձեռնելը, ինչը սերտորեն կապված է ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքի հետ:

✓ Դ.Մ.Դ.-ն ընդդեմ Ռումինիայի, [D.M.D. v. Romania](#), 2017 թ., ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ հոդվածի (դատավարական) խախտում: ՄԻԵԿ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- որդու կողմից հոր դեմ ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքի քննություն չնախաձեռնելը.
- փոխհատուցում չտրամադրելը՝ չնայած օրենքով սահմանված պահանջի:

✓ Մ. և Մ.-ն ընդդեմ Խորվաթիայի, [M. and M. v. Croatia](#), 2015 թ., ՄԻԵԿ 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում: ՄԻԵԿ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- երկարատև խնամակալության վարույթների ընթացքում երեխայի կարծիքը չլսելը.
- անչափահասի նկատմամբ ընտանեկան բռնության վերաբերյալ մեղադրանքների անհապաղ քննություն չնախաձեռնելը (ավելի քան չորսուկես տարի):

✓ Վալյույենեն ընդդեմ Լիտվայի, [Valiulienė v. Lithuania](#), 2013 թ., ՄԻԵԿ 3-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԿ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- նախաքննության ուշացած իրականացում և քննության կարճում:

✓ Կալուչզան ընդդեմ Հունգարիայի, [Kaluczka v. Hungary](#), 2012 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԿ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- դիմումատուի նախկին զուգընկերոջ բռնի վարքագծից արդյունավետ պաշտպանության համար բավարար միջոցներ չձեռնարկելը՝ չնայած նրա կողմից իրավապահ մարմիններին քրեական վարույթ հարուցելու պահանջով դիմումներին, պաշտպանական որոշում կայացնելու բազմաթիվ դիմումներին և նախկին զուգընկերոջը բնակարանից վտարելու քաղաքացիական գործի վարույթին:

✓ Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի, [A. v. Croatia](#), 2010 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԿ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- դիմումատուին՝ նրա հոգեկան առողջության խնդիրներ ունեցող նախկին ամուսնու կողմից ընտանեկան բռնությունից չպաշտպանելը՝ չնայած տեղեկացված լինելուն, որ ամուսնու կողմից բազմիցս կիրառվել են ֆիզիկական բռնություն և բանավոր տարաբնույթ սպառնալիքներ, ինչպես նաև մահվան սպառնալիքներ.
- դատարանների կողմից սահմանված պաշտպանական ոչ բոլոր միջոցառումների կիրառումը, ինչը խաթարել է նման պատժամիջոցների զսպող նպատակը.
- բազմաթիվ առանձին դատավարությունների շրջանակներում գործի քննությունը, որը չի հանգեցրել դիմումատուին արդյունավետ պաշտպանելուն նախկին ամուսնու բռնությունից, քանի որ իշխանությունները չեն ունեցել իրավիճակի ամբողջական պատկերացում:

✓ Հայդուովան ընդդեմ Սլովակիայի, [Hajduová v. Slovakia](#), 2010 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- չնայած դիմումատուի նախկին ամուսնու կողմից բազմիցս հնչեցված մահվան սպառնալիքները երբեք իրականություն չեն դարձել, դրանք բավարար են եղել դիմումատուի հոգեբանական ամբողջականության և բարեկեցության վրա ազդելու համար, որպեսզի առաջանան պետության պոզիտիվ պարտավորությունները 8-րդ հոդվածի համաձայն:

✓ Ի.Ս.-ն և այլք ընդդեմ Սլովակիայի, [E.S. and Others v. Slovakia](#), 2009 թ., ՄԻԵԿ 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումը.

- Ի.Ս.-ի նախկին ամուսնու անպատշաճ վարքագծից պաշտպանական որոշումը դիմումատուներին չի ապահովել՝ ամուսնուց և հորից համարժեք պաշտպանություն, և, հետևաբար, չի կարող համարվել արդյունավետ ներպետական իրավական պաշտպանության միջոց:

✓ Բևակուան և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի [Bevacqua and S. v. Bulgaria](#), 2008 թ., ՄԻԵԿ 8-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ն արձանագրել է հետևյալ խախտումները.

- անչափահաս Ս.-ի բարեկեցությանը բացասաբար ազդած իրավիճակում անհապաղ խնամակալության միջոցներ չձեռնարկելը.
- տիկին Բևակուայի նախկին ամուսնու վարքագծին ի պատասխան համարժեք միջոցներ չձեռնարկելը:

### **Ընտանեկան բռնության համատեքստում կյանքի իրավունքի խախտում**

✓ Օղիշվիլին ընդդեմ Վրաստանի, [Oghlishvili v. Georgia](#), 2024 թ. (2-րդ հոդվածի (ընթացակարգային) խախտում)

✓ Ա-ն և Բ-ն ընդդեմ Վրաստանի, [A and B v. Georgia](#), 2022 թ. (2-րդ հոդվածի խախտում (նյութական և ընթացակարգային) 14-րդ հոդվածի համակցությամբ)

✓ Յ-ն և այլք ընդդեմ Բուլղարիայի, [Y and Others v. Bulgaria](#), 2022 թ. (2-րդ հոդվածի խախտում)

✓ Լանդին ընդդեմ Իտալիայի, [Landi v. Italy](#), 2022 թ. (2-րդ հոդվածի խախտում)

✓ Տխելիձեն ընդդեմ Վրաստանի, [Tkhelidze v. Georgia](#), 2021 թ. (2-րդ հոդվածի խախտում (նյութական և ընթացակարգային) 14-րդ հոդվածի համակցությամբ)

✓ Տալպիսն ընդդեմ Իտալիայի, [Talpis v. Italy](#), 2017 թ. (2-րդ, 3-րդ և 14-րդ հոդվածների խախտում՝ 2-րդ և 3-րդ հոդվածների համակցությամբ)

✓ Չիվեկն ընդդեմ Թուրքիայի, [Civek v. Turkey](#), 2016 թ. (2-րդ հոդվածի խախտում)

✓ Հալիմե Բըլլչն ընդդեմ Թուրքիայի, [Halime Kiliç v. Turkey](#), 2016 թ. (2-րդ և 14-րդ հոդվածների խախտում՝ 2-րդ հոդվածի համակցությամբ)

✓ Դուրմազն ընդդեմ Թուրքիայի, [Durmaz v. Turkey](#), 2014 թ. (2-րդ հոդվածի (ընթացակարգային) խախտում)

- ✓ Բրանկո Տոմաշիչը և այլք ընդդեմ Խորվաթիայի, [Branko Tomasić and Others v. Croatia](#), 2009 թ. (2-րդ հոդվածի խախտում (նյութական))
- ✓ Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, [Kontrová v. Slovakia](#), 2007 թ. (2-րդ հոդվածի և 13-րդ հոդվածի խախտում 2-րդ հոդվածի համակցությամբ)

### **ՄԻԵԴ նախադեպային իրավունքը տարբերակված վերաբերմունքի արգելքի վերաբերյալ**

- ✓ Ավանդույթներին, տարածված պատկերացումներին, գերիշխող սոցիալական վերաբերմունքին կամ տնտեսական շահերին հղումները չեն կարող որևէ կերպ արդարացնել սեռի հիմքով տարբերակված վերաբերմունքը:
  - ✓ Նուրջան Բայրաքթարն ընդդեմ Թուրքիայի, [Nurcan Bayraktar v. Türkiye](#), 2023 թ., § 74
  - ✓ Բիլերն ընդդեմ Շվեյցարիայի, [Beeler v. Switzerland \[GC\]](#), 2022 թ., § 110
  - ✓ Լեոն Մադրիդն ընդդեմ Իսպանիայի, [León Madrid v. Spain](#), 2021 թ., § 66
  - ✓ Ջուրիչին ընդդեմ Խորվաթիայի, [Jurčić v. Croatia](#), 2021 թ., § 73 and § 84
  - ✓ Կոնստանտին Մարկինն ընդդեմ Ռուսաստանի [ՄՊ], [Konstantin Markin v. Russia \[GC\]](#), 2012 թ., § 127
  - ✓ Ունալ Թեքելին ընդդեմ Թուրքիայի, [Ünal Tekeli v. Turkey](#), 2004 թ., § 63
  - ✓ Պետության՝ կանանց ընտանեկան բռնությունից պաշտպանելու պարտականությունը չկատարելը կարող է խախտել նրանց՝ օրենքով հավասար պաշտպանության իրավունքը, նույնիսկ եթե դա դիտավորյալ չի արվել:
    - ✓ Թալփիսն ընդդեմ Իտալիայի, [Talpis v. Italy](#), 2017 թ., § 141
    - ✓ Թ. Մ.-ն և Ս. Մ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, [T.M. and C.M. v. the Republic of Moldova](#), 2014 թ., § 57
    - ✓ Երեմիան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, [Eremia v. the Republic of Moldova](#), 2013 թ., § 85
    - ✓ Օփուզն ընդդեմ Թուրքիայի, [Opuz v. Turkey](#), 2009 թ., § 191

153. Արդյունավետության սկզբունքը նշանակում է, որ ներպետական դատական մարմինները ոչ մի դեպքում չպետք է պատրաստ լինեն անպատիժ թողնելու հասցված ֆիզիկական կամ հոգեբանական տառապանքները: Անհրաժեշտ է պահպանել հանրության վստահությունը օրենքի գերակայության նկատմամբ և աջակցել դրան, ինչպես նաև կանխել իշխանությունների կողմից բռնության գործողությունների նկատմամբ հանդուրժողականության ցանկացած դրսևորում կամ նրանց մասնակցությունն այդ գործողություններին: Ընտանեկան բռնության դեպքերը քննելիս անհրաժեշտ է ցուցաբերել առանձնահատուկ ուշադրություն, իսկ ներպետական վարույթների ընթացքում պետք է հաշվի առնել ընտանեկան բռնության առանձնահատուկ բնույթը (տես *Գայդուկևիչն ընդդեմ Վրաստանի [Gaidukevich v. Georgia]*, թիվ [38650/18](#), § 58, 2023 թվականի հունիսի 15, և վերևում հիշատակված՝ Տունիկովան և այլք գործերը, § 114):

161. Դատարանը գտել է, որ բացի ֆիզիկական վնասվածքներից՝ ընտանեկան բռնության կարևոր կողմ է հոգեբանական ազդեցությունը (տես *Վալիուլիենեն ընդդեմ Լիտվայի [Valiulienė v. Lithuania]*, թիվ [33234/07](#), § 69, 2013 թվականի մարտի 26, և վերևում հիշատակված՝ Վոլոդինայի գործը, §§ 74-75): 3-րդ հոդվածը վերաբերում է ոչ միայն բացառապես ֆիզիկական ցավ պատճառելուն, այլ նաև հոգեկան տառապանքներին, որոնք առաջանում են ֆիզիկական բռնությունից բացի այլ եղանակով հասցված տառապանքի և սթրեսային վիճակի հետևանքով (տես *Էլ-Մասրին ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության գործը [ՄՊ] [El-Masri v. “the former Yugoslav Republic of Macedonia [GC]]*, թիվ [39630/09](#), § 202, ՄԻԵԴ 2012): Հետագայում բռնության ենթարկվելու վախը կարող է բավականաչափ լուրջ լինել և ստիպել ընտանեկան բռնության զոհերին տառապել և անհանգստանալ, որը կարող է հասնել 3-րդ հոդվածի կիրառման նվազագույն շեմին (տես *Երեմիան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [Eremia v. Republic of Moldova]* թիվ [3564/11](#), § 54, 2013 թվականի մայիսի 28, *S.U.-ը և Կ.Մ.-ն ընդդեմ Մոլդովայի Հանրապետության [T.M. and C.M. v. the Republic of Moldova]*, թիվ [26608/11](#), § 41, 2014 թվականի հունվարի 28, և վերևում հիշատակված՝ Վոլոդինայի գործը, § 75):

162. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ քրեական դատավարության ողջ ընթացքում, ինչպես քննության, այնպես էլ դատաքննության ժամանակ, դիմումատուն պաշտպանության համար բազմիցս դիմել է նախ քննչական մարմիններ, ապա մարզային դատարան՝ հայտնելով, որ Ս.Հ.-ն իրեն սպառնացել է, որ դիմումատուն նրա դեմ ցուցմունք չտա (տես, օրինակ, վերևում՝ 27-րդ, 33-րդ, 35-րդ, 39-40-րդ և 41-րդ պարբերությունները *վերջում*): Դատարանն արդեն ընդունել է,

որ սպառնալիքները հոգեբանական բռնության ձև են, և որ խոցելի զոհը կարող է վախենալ՝ անկախ այդպիսի վախեցնող վարքագծի օբյեկտիվ բնույթից (տես վերջին վճիռը, Ջեյ. Այ.-ն ընդդեմ Խորվաթիայի [*J.I. v. Croatia*], թիվ [35898/16](#), § 88, 2022 թվականի սեպտեմբերի 8):

163. Հաշվի առնելով այն վերաբերմունքը, որին դիմումատուն նախկինում ենթարկվել է Ս.Հ.-ի կողմից (տես վերևում՝ մասնավորապես 36-րդ և 41-րդ պարբերությունները՝ *վերջում*), որը, ըստ մարզային դատարանի, «[դիմումատուին] պատճառել է ուժեղ ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք... » (տես վերևում հիշատակված՝ 45-րդ պարբերությունը), Դատարանը կասկած չունի, որ քրեական դատավարության ընթացքում նրա սպառնացող վարքագիծը ստիպել է դիմումատուին երկար ժամանակ անկեղծ վախենալ բռնության կրկնակի դրսևորումից: Որպես այդ վախի ապացույց կարելի է դիտարկել նաև այն հանգամանքը, որ դիմումատուն հրաժարվել է մնալ հիվանդանոցում՝ վախենալով, որ իրեն կարող են գտնել և համոզել վերադառնալ (տես վերևում՝ 11-րդ և 41-րդ պարբերությունները), այն, որ նա տեղափոխվել է Երևան և բնակվել կանանց կացարանում (տես վերևում՝ 12-րդ պարբերությունը), այն, որ դիմումատուն խնդրել է, որ իրեն և իր հարազատներին հարցաքննեն Երևանում, և որ նա խնդրել է չունենալ առերես հարցազրույց Ս. Հ.-ի հետ (տես վերևում՝ 27-րդ և 35-րդ պարբերությունները): Քրեական դատավարության ընթացքում ինչ-որ պահի, այդ սպառնալիքներն իսկապես իրագործվել են, երբ Ս.Հ.-ն վիրավորել և հարվածել է նրան (տես մասնավորապես վերևում՝ 34-րդ պարբերությունը): Դիմումատուին որևէ պաշտպանություն չառաջարկելու՝ իշխանությունների անտարբեր վերաբերմունքը (տես, օրինակ, վերևում՝ 27-րդ և 33-րդ պարբերությունները) պետք է որ խորացրած լինի դիմումատուի անհանգստության և անզորության զգացողությունը, որը դիմումատուի մոտ առաջացել է Ս.Հ.-ի սպառնացող վարքագծի պատճառով: Բռնության գործողությունների անկանխատեսելի սրացումը և անորոշությունը, թե ինչ կարող է պատահել իր հետ, հավանաբար մեծացրել են դիմումատուի խոցելիությունը և հասցրել են վախի և հուզական և հոգեբանական սթրեսային վիճակի (տես, *mutatis mutandis*, վերևում հիշատակված՝ *Տունիկովան և այլք* գործը, § 76): Դատարանի կարծիքով՝ վերոնշյալ իրավիճակը բավական լուրջ հանգամանք է հանդիսացել Կոնվենցիայի 3-րդ հոդվածով նախատեսված ծանրության մակարդակին հասնելու և այդպիսով այս դրույթով նախատեսված իշխանությունների դրական պարտավորությունը խթանելու համար (համեմատիր վերևում հիշատակված՝ *Վալիուլիենեի* գործը, §§ 69 և 70, և վերևում հիշատակված՝ Երեմիայի գործը, § 54):

170. Դատարանը նշում է, որ տվյալ ժամանակահատվածում չի գործել որևէ հատուկ օրենսդրություն, որը կկարգավորեր ընտանիքում տեղի ունեցող բռնության դեպքերը (տես վերևում՝ 167-րդ պարբերությունը, տես նաև վերևում՝ 81-րդ պարբերության մեջ հիշատակված «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարարների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված՝ Եվրոպայի խորհրդի Rec(2002)5 հանձնարարականը, և որը նշված է վերոնշյալ 81-րդ կետում, և վերևում՝ 81-րդ պարբերության մեջ հիշատակված՝ ԿԻՎԿ կոմիտեի Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտար-

կումների 25-րդ կետը՝ վերջում): Ո՛չ «ընտանեկան բռնություն» հասկացությունը, ոչ էլ որևէ համարժեք հասկացություն չեն սահմանվել կամ որևէ կերպ չեն հիշատակվել ներպետական օրենսդրության մեջ: Ընտանեկան բռնությունը նախկին քրեական օրենսգրքով չի սահմանվել որպես առանձին հանցանք, ինչպես նաև այն չի որակվել որպես որևէ այլ հանցանքի ծանրացնող հանգամանք: Այսպիսով, նախկին քրեական օրենսգրքը չի տարբերակել ընտանեկան բռնության և անձի նկատմամբ բռնության այլ ձևեր՝ դրանք կարգավորելով մարդու առողջությանը վնաս հասցնելու կամ դրա հետ կապված այլ դրույթներով (տե՛ս, օրինակ, վերևում՝ 51-54-րդ պարբերություններում հիշատակված քրեական օրենսդրության դրույթները):

171. Նախորդ գործերով դատարանն արդեն որոշում է կայացրել, որ իրավական շրջանակը, որը մասնավորապես չի սահմանում ընտանեկան բռնությունը ոչ որպես առանձին հանցագործություն, ոչ էլ որպես այլ հանցագործությունների ծանրացնող տարր, չի բավարարել ընտանեկան բռնության բոլոր ձևերի համար պատժի համակարգ ստեղծելու և զոհերի համար բավարար երաշխիքներ ապահովելու և արդյունավետ կիրառելու պետության դրական պարտավորությանը բնորոշ պահանջները (տե՛ս, *mutatis mutandis*, վերևում հիշատակված՝ Վոլոդինայի գործը, § 85): Հետևաբար Դատարանը չի կարող ընդունել կառավարության այն փաստարկը (տե՛ս վերևում՝ 144-րդ պարբերությունը), որ այդ ժամանակ գործող քրեական իրավունքի նորմերը թույլ են տվել պատշաճ կերպով ապահովել պաշտպանությունն ընտանեկան բռնության տարբեր ձևերից (նույն տեղում՝ § 81):

172. Անդրադառնալով քրեական օրենսդրության կոնկրետ դրույթներին, որոնք առնչվում են սույն գործի նպատակներին, Դատարանը նշում է, որ գործի քննության պահին գործող նախկին Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվել է քրեական պատասխանատվություն «խոշտանգման» համար, որը սահմանվել է որպես «ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք» (տե՛ս վերևում՝ 53-րդ պարբերությունը): Դատարանը նաև նշում է, որ նախկին Քրեական օրենսգրքի 119 հոդվածի 2 մասի 3-րդ կետով սահմանվում է հանցագործությունը ծանրացնող հանգամանք այն դեպքում, երբ այդ գործողությունները կատարվում են, ի թիվս այլնի, «հանցավորից այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ» (տե՛ս վերևում՝ 54-րդ պարբերության մեջ՝ այդ դրույթի նկարագրությունը): Կառավարությունը պնդել է, որ նախկին քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված կոնկրետ ծանրացնող հանգամանքի նախատեսումը (տե՛ս վերևում՝ 54-րդ պարբերությունը) բավարար է, որ համապատասխան ներպետական շրջանակը դիտարկվի որպես բավարար՝ դիմումատուին ընտանեկան բռնությունից համարժեք պաշտպանություն ապահովելու համար:

173. Այդուհանդերձ, Դատարանի կարծիքով՝ «հանցավորից այլ կախվածություն ունեցող» սահմանումը չի եղել բավականաչափ ճշգրիտ՝ բացառելու իրավասու մարմինների, այդ թվում՝ մասնավորապես ներպետական դատարանների կողմից այնպիսի մեկնաբանությունը, որը կարող էր հակասել ընտանեկան բռնության

գործողություններից արդյունավետ պաշտպանություն ապահովելու պարտավորությանը (տես վերևում՝ 169-րդ պարբերությունը): Իսկապես, ինչպես երևում է այն ձևից, որով ներպետական դատարանները մեկնաբանել ու կիրառել են քրեական օրենսդրության խնդրո առարկա դրույթները, մասնավորապես՝ «հանցավորից այլ կախվածություն ունեցող անձի նկատմամբ» եզրույթը դիմումատուի՝ Ս.Հ.-ի հետ հարաբերությունների համատեքստում (տես վերևում՝ 45-րդ և 48-րդ պարբերությունները). այդ եզրույթը եղել է չափազանց անորոշ և թույլ է տվել հայեցողության ազատություն, ինչը հանգեցրել է այնպիսի մեկնաբանության, որով ամբողջությամբ անտեսվել է սույն գործով ընտանեկան բռնության տարրը:

186. Մասնավորապես ներպետական իշխանությունները չեն իրականացրել վտանգի ինքնուրույն, պրասակտիվ և համապարփակ գնահատում: Հետևաբար անհասկանալի է, թե ինչ հիմքով է Կառավարությունը պնդել, որ դիմումատուի համար իրական և անմիջական սպառնալիք չի եղել (տես վերևում՝ 145-րդ պարբերությունը): Իրավապահ մարմինները դիմումատուի բողոքները քննելիս պատշաճ կերպով իրազեկված չեն եղել ընտանեկան բռնության առանձնահատկությունների և դինամիկայի մասին (տես *համապատասխան փոփոխություններով*, վերևում հիշատակված՝ *Snienhlyndan և այլք* գործը [*Tunikova and Others*], § 108, տես նաև «ԿԻՎԿ» կոմիտեի մտահոգությունները՝ կապված ընտանեկան բռնության վերաբերյալ բողոքների քննության առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից, որն ամփոփվել է Հայաստանի համատեղ հինգերորդ և վեցերորդ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում՝ վերևում հիշատակված՝ 73-րդ պարբերության մեջ, ինչպես նաև Հայաստանի յոթերորդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում՝ վերևում հիշատակված՝ 74-րդ պարբերության 26-րդ կետում): Ավելին, վերջիններս նույնքան պասիվ են եղել նաև այն բանից հետո, երբ դիմումատուն հաղորդել է 2013 թվականի նոյեմբերի 5-ին տեղի ունեցած միջադեպի մասին, որով ներկայացվել է այդպիսի բռնության կրկնվելու դեպքը (տես վերևում՝ 34 և 35 պարբերությունները):

187. Իր հերթին մարզային դատարանը անհապաղ չի արձագանքել դիմումատուի՝ 2013 թվականի դեկտեմբերի 19-ին և 2014 թվականի հունվարի 29-ին ներկայացված դիմումներին (տես վերևում՝ 39-րդ պարբերությունը), և երբ նա արձագանքել է 2014 թվականի փետրվարի 24-ին դիմումատուի կողմից ներկայացված մեկ այլ այդպիսի դիմումի, որոշել է, որ կքննի ներկայացված այդ դիմումներն ապացույցներն ուսումնասիրելուց հետո: Ըստ էության, դատարանը հետաձգել է այդ դիմումների քննությունը՝ չնայած վերոհիշյալ անհապաղության պահանջին (տես վերևում՝ 40 և 182 պարբերությունները):

188. Այսպիսով, ինչպես նշված է նախորդ պարբերություններում, դիմումատուի գործով զբաղվող իշխանությունները Ս.Հ.-ի դեմ հարուցված քրեական գործով վարույթի տարբեր փուլերում մնացին լիովին պասիվ և չձեռնարկեցին որևէ պաշտպանության միջոց՝ նրա նկատմամբ բռնության հետագա դեպքերը կանխելու նպատակով (տես այդ կապակցությամբ վերևում՝ 80-րդ պարբերության մեջ հիշատակված «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարար-

ների կոմիտեի կողմից անդամ պետություններին ուղղված՝ Rec(2002)5 հանձնարարականը): Համաձայն Դատարանի եզրակացությունների (տե՛ս վերևում 176-րդ պարբերությունը)՝ դա հիմնականում պայմանավորված էր օրենսդրական դաշտի անբավարարությամբ, որը չէր առաջարկում ընտանեկան բռնության զոհերի նկատմամբ պաշտպանության որևէ մեխանիզմ: Ավելին, իշխանությունները չեն կատարել իրենց՝ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը՝ պաշտպանելու դիմումատուին քրեական վարույթի ընթացքում հետագա բռնություններից նույնիսկ գործող օրենսդրական դաշտի շրջանակներում, որը, ըստ Կառավարության, կարող էր համապատասխան պաշտպանություն ապահովել դիմումատուին, եթե նա դիմեր քրեական վարույթին մասնակիցող անձանց հասանելի պաշտպանության միջոցների կիրառմանը (տե՛ս վերևում՝ 122 պարբերությունը):

189. Դատարանն այս կապակցությամբ նկատում է, որ ինչպես իրավացիորեն նշել է դիմումատուն (տե՛ս վերևում հիշատակված՝ 125-րդ կետը), քննչական մարմինը կարող էր որոշում կայացնել՝ կիրառելու նախկին քրեական դատավարության օրենսգրքի 98.1 հոդվածում թվարկված միջոցներից որևէ մեկը (տե՛ս վերևում՝ 66-րդ պարբերությունը)՝ իր սեփական նախաձեռնությամբ (տե՛ս վերևում՝ 64-րդ պարբերությունում Քրեական դատավարության նախկին օրենսգրքի 98-րդ հոդվածի 3-րդ մասը), սակայն այդպես չի արել: Ամեն դեպքում, ինչպես Դատարանը պարզել է վերևում, քրեական վարույթին մասնակցող անձանց համար հասանելի պաշտպանության ընդհանուր միջոցները չեն կարող համարվել պաշտպանության համարժեք միջոցներ ընտանեկան բռնության համատեքստում (տե՛ս վերևում՝ 176 պարբերությունը):

192. Դատարանը վերահաստատում է, որ եթե պաշտոնական քննությունը հանգեցրել է ներպետական դատարաններում վարույթի հարուցմանը, ապա վարույթն ամբողջությամբ, այդ թվում՝ դատավարության փուլը, պետք է բավարարի Կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջները: Չնայած առկա չէ բացարձակ պարտավորություն, որ բոլոր հետապնդումները հանգեցնեն դատապարտման կամ կոնկրետ դատավճռի, այնուամենայնիվ, ազգային դատարանները ոչ մի դեպքում չպետք է թույլ տան, որ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ ծանր հարձակումները մնան անպատիժ, կամ լուրջ հանցագործությունների համար կիրառվեն չափազանց մեղմ պատիժամիջոցներ: Հետևաբար Դատարանի համար կարևոր հարցը հետևյալն է՝ արդյոք և որքանով դատարանները, իրենց եզրակացությանը հանգելով, կարող են համարել, որ գործը մանրամասն քննել են՝ գործող դատական համակարգի զսպող ազդեցությունը և վատ վերաբերմունքի բացառման խախտումները կանխելու գործում նրանց ունեցած դերը չթուլանացնելու նպատակով (տե՛ս *Սաբալիքն ընդդեմ Խորվաթիայի* գործը [*Sabalić v. Croatia*], թիվ [50231/13](#), § 97, 2021 թվականի հունվարի 14, հետագա հղումներով):

198. Ելնելով վերոնշյալից և համաձայն դատարանների վերանայման գործառույթների, թե արդյոք և որքանով է դիմումատուի գործը ենթարկվել մանրամասն քննության (տե՛ս վերևում՝ 192-րդ պարբերության մեջ հիշատակված նախադեպային իրավունքի սկզբունքները), Դատարանը չի կարող չնկատել ներպետական դատարանների բացառապես ձևական մոտեցումն այն հանագամանքներին,

որոնցում դիմումատուն ենթարկվել է խնդրո առարկա վատ վերաբերմունքի՝ հաշվի առնելով, որ նրանք հրաժարվել են հաշվի առել մի շարք գործոններ, որոնք առնչվում են գործի ընդհանուր գնահատմանը և դատապարտման գործընթացին: Մասնավորապես դիմումատուն և Ս.Հ.-ն ամուսնացել են կրոնական արարողությամբ 2004 թվականին (տե՛ս վերևում՝ 5-րդ պարբերությունը) և երբեք չեն բաժանվել. դիմումատուն շարունակել է ապրել Ս.Հ.-ի ծնողների հետ և հոգ տարել իրենց երեխաների մասին նույն տանը, որտեղ նրանք ապրել են (տե՛ս վերևում՝ 8-րդ պարբերությունը), և դիմումատուն երբեք չի աշխատել որևէ տեղ (տե՛ս վերևում՝ 6-րդ պարբերությունը), նրանց երեխաներին ամբողջությամբ ֆինանսապես աջակցել է Ս.Հ.-ի մայրը (տե՛ս վերևում՝ 45-րդ և 48-րդ պարբերությունները): Ընդ որում, վարույթի ամբողջ ընթացքում, ինչպես նաև գործը քննող դատարանում Ս.Հ.-ն դիմումատուին մշտապես հիշատակել է որպես իր «կին» (տե՛ս, օրինակ, վերևում՝ 42-րդ պարբերությունը) և այն, որ բռնության դեպքերը, որոնցում նա մեղադրվում էր, կապված են եղել զուտ ընտանեկան հարցերի հետ, այդ թվում՝ այն վեճը, որը կապված էր իրենց դստեր վնասվածքի վերաբերյալ դիմումատուի կողմից տրված բացատրության մասով Ս.Հ.-ի դժգոհության հետ, ինչպես նաև Ս.Հ.-ի կողմից հնչեցված սպառնալիքները դիմումատուի հասցեին այն դեպքում, երբ նա կկասկածեր դիմումատուին անհավատարմության մեջ (տե՛ս վերևում՝ 8-րդ և 9-րդ պարբերությունները): **Ուստի ապշեցուցիչ է, որ որոշելով վերաորակել նախկին Քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված մեղադրանքը՝ մարզային դատարանը, այնուհետև վերաքննիչ դատարանը եկել են այն եզրակացության, որ չի եղել իրավիճակ, երբ դիմումատուն կախվածություն ունենա Ս.Հ.-ից բացառապես այն պատճառով, որ շուրջ երկու տարի Ս.Հ.-ն և դիմումատուն ընդհանուր համատեղ տնտեսություն չեն վարել, քանի որ Ս.Հ.-ն սիրուի է ունեցել Երևանում (որի հետ նա ապրել է) և ֆինանսական աջակցություն չի ցուցաբերել դիմումատուին (տե՛ս վերևում՝ 45-րդ և 48-րդ պարբերությունները, տե՛ս նաև դիմումատուի փաստարկներն ու պնդումները, ինչպես նաև իր բողոքներում հիշատակված մեղադրանքները՝ համապատասխանաբար վերևում՝ 46-րդ և 47-րդ պարբերության մեջ):**

199. Այս հանգամանքներում չի կարելի ասել, որ հանցագործության վերաորակավորումը, որով Ս.Հ.-ն մեղավոր էր ճանաչվել, և դրա արդյունքում ավելի մեղմ պատժի նշանակումը տեղի են ունեցել գործի բոլոր համապատասխան նկատառումները մանրամասն ուսումնասիրելուց հետո (տե՛ս *համապատասխան փոփոխություններով, Սմիլյանիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Smiljanić v. Croatia*], թիվ 35983/14, § 99, 2021 թվականի մարտի 25 և վերևում հիշատակված՝ *Վուչկովիչի* գործերը [*Vučković*], § 62):

202. Սույն գործը ներառում է վատ վերաբերմունքի մի քանի լուրջ դեպքեր, որոնք հանգեցրել են դիմումատուին ֆիզիկական վնասի (տե՛ս 21-րդ և 30-րդ պարբերությունները՝ դիմումատուի ֆիզիկական վնասվածքների նկարագրությունը, որոնք ստացել է վիճարկվող վատ վերաբերմունքի հետևանքով) և անկասկած, նաև երկարատև հոգեբանական վնասի: **Դատարանը մտահոգիչ է համարում, որ սույն գործով ներպետական քրեական դատարանները, ամբողջությամբ**

**անտեսելով ընտանեկան բռնության համատեքստը**, առաջին հերթին վերաորակել են այն հանցագործությունը, որում Ս.Հ.-ն մեղավոր էր ճանաչվել, որպես տվյալ իրավախախտման ոչ ծանր տեսակ, որը ենթադրում էր զգալիորեն ավելի մեղմ պատիժ, և նրան դատապարտել են՝ վերաորակելով իրավախախտման համար կիրառելի պատիժների շարքի ավելի մեղմ տեսակով (տե՛ս վերևում՝ 197-րդ և 198-րդ պարբերությունները), և այնուհետև համարել են, որ Ս.Հ.-ն պետք է ազատվի նույնիսկ այդ պատիժը կրելուց (տե՛ս վերևում՝ 200-րդ պարբերությունը)՝ դրանով իսկ ամբողջությամբ վերացնելով քրեաիրավական շրջանակի զսպող ազդեցությունը:

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ  
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Արաբկիրի բաժնին  
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց փ., 1 շենք

\_\_\_\_\_ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ \_\_\_\_\_) վարույթում է գտնվում թիվ \_\_\_\_ քաղաքացիական գործն ըստ հայցի \_\_\_\_\_ ընդդեմ \_\_\_\_\_՝ պաշտպանական որոշում կայացնելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.3.-րդ հոդվածի համաձայն՝ 4. Գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio"): Դատարանը կաշկանդված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Անհրաժեշտությունից ելնելով, նկատի ունենալով, որ \_\_\_\_\_ (նույնականացման քարտ՝ xx) նկատմամբ ՀՀ ոստիկանության տարածքային բաժնի իրավասու ծառայողի կողմից 00.00.20\_\_\_\_ թվականին կայացվել է անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշում՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում դատարանին տրամադրել տեղեկություններ \_\_\_\_\_ի կողմից անհետաձգելի միջամտության որոշման պահանջները չկատարելու, \_\_\_\_\_ի խնամքին գտնվող անձանց շրջանակի, համատեղ երեխաների՝ բռնության դեպքին ականատես լինելու հանգամանքների վերաբերյալ:

Դատավոր՝

\_\_\_\_\_ դարոց» ՊՈԱԿ-ի ղեկավարին  
հասցե՝ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ \_\_\_\_\_) վարույթում է քննվում թիվ \_\_\_\_ քաղաքացիական գործը, գործի քննության անհրաժեշտությունից ելնելով՝ խնդրում ենք հնարավորինս սեղմ ժամկետում դատարանին տրամադրել տեղեկատվություն \_\_\_\_\_ի 20-- -20--թթ. ուսումնական տարվա ընթացքում դարոց հաճախելիության և դասերից բացակայելու ժամանակահատվածի, բացակայության պատճառների վերաբերյալ:

Դատավոր՝

«Կանանց հզորացման ռեսուրս կենտրոն» ՀԿ-ին

\_\_\_\_\_ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է քննվում թիվ \_\_\_\_ քաղաքացիական գործն ըստ հայցի՝ \_\_\_\_\_ ընդդեմ \_\_\_\_\_ պաշտպանական որոշում կայացնելու պահանջի մասին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.3-րդ հոդվածի 4-րդ մասով՝ խնդրում են հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել տեղեկություններ \_\_\_\_\_ին աջակցության կենտրոնի կողմից տրամադրված ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև \_\_\_\_\_ի նկատմամբ գործադրված ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ Ձեզ հայտնի դարձած տեղեկությունները:

Դատավոր՝

\_\_\_\_\_ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ \_\_\_\_\_ քաղաքացիական գործն ըստ հայցի՝ \_\_\_\_\_ի ընդդեմ \_\_\_\_\_ի՝ պաշտպանական որոշում կայացնելու պահանջի մասին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.3-րդ հոդվածի 4-րդ մասով՝ խնդրում եմ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել տեղեկություններ \_\_\_\_\_ի կողմից իր նկատմամբ \_\_\_\_\_ թվականին կայացված անհետաձգելի միջամտության որոշման պահանջների պահպանման վերաբերյալ:

Միաժամանակ, տրամադրել տեղեկատվություն նախկինում \_\_\_\_\_ի նկատմամբ կայացված՝ օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների մասին, նաև տրամադրել ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչների վերաբերյալ լրացված հարցաթերթի պատճենը:

Դատավոր՝

## ԻՐԱՎԻՃԱԿ 1

**Խորհուրդներ դասընթացավարին**

*Հիմնական ուղերձ:* Այս իրավիճակը քննելիս հարկավոր է ընդգծել, որ «լսված լինելու իրավունքը» չի կարող գերակայել զոհի անվտանգությանը: Դատարանը պարտավոր է ոչ միայն ապահովել դատավարական հավասարություն, այլև գնահատել այն, թե տվյալ իրավունքի իրացումը չի հանգեցնում արդյոք շարունակական բռնությանը զոհի նկատմամբ կամ դրա վտանգին:

Արդարադատության համակարգը պետք է գործի կանխարգելիչ և/կամ զոհին պաշտպանելու տրամաբանությամբ՝ ճանաչելով ընտանեկան և գենդերային բռնության դինամիկան, ուժի անհավասարությունը և բռնություն գործադրողի կողմից իրավական համակարգի միջոցով զոհի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու փորձերը:

**Ուղեցույց դասընթացավարի համար քննարկման հարցերի վերաբերյալ**

1. Անձի պաշտպանությունը գերակա է դատավարական ֆորմալությունից:
2. Եթե եղել են լսված լինելու իրավունքը ապահովելու փորձեր, գործնական քայլեր, ապա դրանք կարող են բավարար համարվել այս իրավունքի ապահովման համար, այն դեպքում երբ զոհի կյանքին և անվտանգությանը իրական վտանգ է սպառնում:
3. Դատավորի գործողությունները պետք է ղեկավարվեն կյանքի և անվտանգության իրավունքի գերակայության սկզբունքով, որն ամրագրված է թե՛ ազգային, թե՛ միջազգային իրավունքում:
4. Գենդերազգայուն արդարադատության շրջանակում դատավորը պարտավոր է ճանաչել զոհի խոցելիությունն ու կողմերի միջև իշխանության անհավասարությունը՝ դրանով իսկ ապահովելով իրական, ոչ թե ձևական հավասարություն:
5. Ընդհանուր իրավասության դատարանը նախևառաջ պետք է իրականացնի բռնության վտանգի և դրա հնարավոր հետևանքների գնահատում: Դատարանի որոշումը կարող էր լինել ձևականորեն իրավաչափ, սակայն բովանդակային առումով անարդար:
6. Անհետաձգելի միջամտության միջոցների էությունն այն է, որ ցանկացած ուշացում կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների: Դրանք նախատեսված են արագ արձագանքի համար և չեն կարող կիրառվել նույն դատավարական ընթացակարգերով, ինչ ընդհանուր ընթացակարգային գործերը:
7. Ընդհանուր իրավասության դատարանը, մերժելով պաշտպանական որոշումը միայն ձևական հիմքով, անտեսել է իր պարտականությունը՝ պաշտ-

պանել զոհին ակնհայտ վտանգից: Որոշման չկայացումը նույնպես որոշում է, որը կարող է վտանգել անձի կյանքն ու առողջությունը:

8. Գենդերազգայուն արդարադատության շրջանակում դատավորը պարտավոր է հաշվի առնել, որ բռնության ենթարկված անձը գտնվում է խոցելի և ոչ հավասար դիրքում՝ պայմանավորված վախով, սոցիալական ճնշումներով և համակարգային անպաշտպանությամբ: Այս գործոնները պետք է պարտադիր ներառվեն դատական որոշման հիմնավորմամբ:
9. Դատարանի և իրավապահ մարմինների միջև անհրաժեշտ է գործարկել վտանգի արագ գնահատման և փաստաթղթավորման գործիքներ՝ ապահովելով արդյունավետ և համակարգային տեղեկատվական փոխանակում:
10. Այս դեպքը հստակ ցույց է տալիս, թե ինչպես ոչ գենդերազգայուն մոտեցումը կարող է վերարտադրել բռնությունը ինստիտուցիոնալ մակարդակում՝ վտանգելով անձի կյանքն ու անվտանգությունը:
11. Ընտանեկան բռնության գործերով երեխան հաճախ հենց ինքն է դառնում բռնության զոհ կամ ականատես է լինում բռնության, որի պայմաններում երեխան պետք է ստանա տուժողի կարգավիճակ և պետք է օգտվի պաշտպանության բոլոր միջոցներից: Այս առումով, տվյալ դեպքում Ոստիկանությունը ճիշտ է վարվել, որ երեխային նույնպես ճանաչել է որպես տուժող: Նման մոտեցումը բխում է ինչպես ընտանեկան բռնության դեմ պայքարի, այնպես էլ երեխայի լավագույն շահի ապահովման նպատակներից:

## ԻՐԱՎԻՃԱԿ 2

### Խորհուրդներ դասընթացավարին

*Հիմնական ուղերձ:* Այս իրավիճակը բացահայտում է դատական համակարգում առկա այն խնդիրը, երբ գենդերային կարծրատիպերը և խտրական վերաբերմունքը խաթարում են արդար դատաքննության անաչառությունը: Դատարանի պարտականությունն է ապահովել գործի բոլոր կողմերի նկատմամբ արժանապատիվ վերաբերմունքի և իրական հավասարության երաշխավորումը:

Գենդերազգայուն արդարադատությունը ենթադրում է, որ դատավորը գիտակցի իր խոսքի և վարքագծի ազդեցությունը գործի մասնակիցների վրա՝ հատկապես այն դեպքերում, երբ առկա են ընտանեկան բռնության պատմություն և ուժային անհավասարություն: Ցանկացած կարծրատիպային մեկնաբանություն («կանայք հույզերով են առաջնորդվում», «տղամարդը պետք է մեծահոգի լինի», «ավանդական ընտանիքի արժեքներ») նվազեցնում է զոհի արժանապատվությունը, վերարտադրում բռնության կիրառումը և խոչընդոտում արդար որոշման կայացմանը:

Դատական պրակտիկայում գենդերազգայուն մոտեցումը նշանակում է նաև՝

- դատավորը պետք է գիտակցաբար խուսափի խոսքից և արտահայտություններից, որոնք կրում են խտրական կամ վարկաբեկող բնույթ.

- ապահովի բոլոր կողմերի *անվտանգ և չեզոք միջավայր*, որտեղ զոհը կարող է արտահայտվել առանց վախի կամ նվաստացման.
- գնահատի ընտանեկան բռնության *դինամիկան և հոգեբանական ազդեցությունը*՝ որպես գործի համատեքստի անբաժանելի մաս:

Այս իրավիճակի քննարկման ընթացքում անհրաժեշտ է ընդգծել, որ *գենդերային կարծրատիպերը իրավական սխալների ամենաաննկատ, բայց վտանգավոր աղբյուրներից են*, որոնք վերարտադրում են անհավասարությունը ոչ միայն հարաբերություններում, այլև ինստիտուցիոնալ մակարդակում՝ խաթարելով արդարադատության բուն էությունը:

### **Ուղեցույց դասընթացավարի համար քննարկման հարցերի վերաբերյալ**

1. Դատավորի խոսքային և վարքագծային արտահայտությունները պարունակում են գենդերային կողմնակալություն և վարկաբեկում են կողմերից մեկին՝ կնոջը, որը բռնության զոհն է: Սա հակասում է ՄԱԿ-ի և ԵԽ իրավական փաստաթղթերին և դրանցից բխող ՀՀ ստանձնած պարտավորություններին:
2. Երբ դատավորն առաջնորդվում է գենդերային կարծրատիպերով (օրինակ՝ «կինը չափազանց հուզական է»), նա փաստացի շեղվում է գործի էությունից և դատական քննության առարկայից՝ ձևավորելով սուբյեկտիվ գնահատական:
3. Դատարանը պարտավոր է ապահովել այնպիսի դատաքննություն, որ կողմերից ոչ մեկը չդառնա թիրախ: Դատավարության մասնակցին վարկաբեկող կամ պիտակավորող արտահայտությունները (օրինակ՝ «հիստերիկ կին» բնութագրումը, «անհամ ու զզվելի» արտահայտությունը) խաթարում են արժանապատիվ վերաբերմունքի իրավունքը և կարող են դիտվել որպես երկրորդային բռնություն:
4. Դատավորի կողմից բռնության փաստի անտեսումը կամ վերաիմաստավորումը («քանի որ կին է, կարող է չափազանցնել») խորացնում է զոհի հոգեբանական վնասը և խաթարում նրա վստահությունը արդարադատության նկատմամբ: Դատավորի գործողությունները հակասում են Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի դրույթներին՝ ուղղված պետության պարտավորությանը՝ վերացնել գենդերային կարծրատիպերը, խտրականությունը և ապահովել հավասարություն:
5. Երբ դատարանը անտեսում է ընտանեկան բռնության փաստերը և կրկնազոհյնացնում անձին, սա ոչ թե անհատական սխալ է, այլ ինստիտուցիոնալ խտրականություն՝ վերարտադրվող համակարգային մակարդակում:
6. Այս ամենը հակասում է գենդերազգային դատավարության սկզբունքներին, որը ենթադրում է՝
  - *հարգալից վերաբերմունք բոլոր կողմերի հանդեպ.*
  - *խտրական արտահայտությունների կանխարգելում և չեզոք արձագանք.*

- բռնության դինամիկայի և հոգեբանական հետևանքների համապարփապային գնահատում.
  - *խոսքի ու վարքի գիտակցված վերահսկում:*
7. Արդար դատաքննությունը չի սահմանափակվում ձևական հավասարությամբ. այն ենթադրում է իրական հավասարություն՝ հիմնված կողմերի դիրքի, խոցելիության և ուժային անհավասարության գիտակցման վրա:

### ԻՐԱՎԻՃԱԿ 3

#### Խորհուրդներ դասընթացավարին

*Հիմնական ուղերձ:* Դատարանը պարտավոր է առաջնորդվել երեխայի անվտանգության և հոգեկան բարեկեցության գերակայությամբ՝ ելնելով առկա փաստերից և իրավիճակից:

Բռնության ականատես եղած երեխան տուժող է, և դատարանը պաշտպանական միջոց կիրառելիս պարտավոր է հաշվի առնել այս հանգամանքը: Մի կողմից գնահատել երեխայի անվտանգության ապահովման հարցը, մյուս կողմից՝ հոր հետ կապը:

#### Ուղեցույց դասընթացավարի համար քննարկման հարցերի վերաբերյալ

1. **Երեխայի նկատմամբ պաշտպանական որոշում չկիրառելու իրավաչափությունը.** դատարանը պաշտպանական որոշում կայացնելիս պետք է հաշվի առնի, որ երեխան եղել է բռնության ականատես: Օրենքի համաձայն բռնությանն ականատես երեխան տուժող է: Համաձայն Օրենքի 4-րդ հոդվածի՝ «**ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձ**՝ ֆիզիկական անձ (նաև ընտանիքի ներսում բռնությանը ականատես երեխան), որը, ըստ նախազգուշացման, անհետաձգելի միջամտության, պաշտպանական որոշման կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի, տուժել է ընտանեկան և կենցաղային բռնությունից»:
2. **Պաշտպանական միջոցների նպատակը և իրավական իմաստը.** պաշտպանական միջոցը նախատեսված է կանխարգելելու բռնության կրկնությունը և ապահովելու տուժողի ֆիզիկական, հոգեկան և հուզական անվտանգությունը: Դրա նպատակը ոչ թե ընտանեկան հարաբերությունների պահպանությունն է, այլ վնասի կանխումը, ռիսկի գնահատումը՝ երեխայի նկատմամբ: Տվյալ դեպքում, դատարանը պետք է մի կողմից հաշվի առնի վտանգի հավանականությունը, մյուս կողմից՝ ծնողի հետ երեխայի կապի ապահովում:
3. **Ծնողական իրավունքների և երեխայի անվտանգության հակադրությունը.** դատարանը հոր ենթադրյալ «տառապանքը» գնահատելիս, պետք է նաև գնահատի երեխայի փաստացի վտանգված վիճակը: Բոլոր որոշումներում առաջնահերթ պետք է դիտարկել երեխայի լավագույն շահը:

4. **Հոգեհուզական կապի գնահատման մասնագիտական անհրաժեշտությունը.** դատարանը չի կարող ինքնուրույն գնահատել «հոգեհուզական կապ» հասկացությունը, դրա որակը կամ մակարդակը՝ առանց մանկական մասնագիտացված և լիցենզավորված հոգեբանի կամ համապատասխան մասնագետի եզրակացության: Բռնարար ծնողի հետ շփումը երեխայի մոտ հաճախ առաջացնում է վախ, մեղավորության զգացում և կրկնակի տրավմա:
5. **Երեխայի լավագույն շահի և ծնողական իրավունքների հավասարակշռում.** գենդերազգայուն արդարադատության շրջանակում «երեխայի լավագույն շահը» ենթադրում է ոչ միայն երկու ծնողների պարտադիր ներկայությունը, այլ երեխայի ֆիզիկական և հոգեկան անվտանգության ապահովումը:
6. **Ընտանեկան միասնության գաղափարի չարաշահումը.** դիտարկվում է ընդհանուր միտում, որ դատական համակարգում գերիշխում է կարծրատիպային մոտեցում՝ ընտանեկան միասնությունը գերադասել բռնության կանխարգելումից: Այս մտածողությունը վերարտադրում է հայրիշխանական արժեքներ և նվազեցնում զոհերի նկատմամբ պետության պատասխանատվությունը: Կարևոր է նշել, որ ընտանեկան միասնությունը չի կարող ունենալ առաջնահերթություն անվտանգության նկատմամբ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Սահմանադրություն, 2015 թ., <https://www.president.am/hy/constitution-2015/>
2. «Ընտանեկան բռնության կանխարգելման և ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենք, 2017 թ., <https://www.arlis.am/hy/acts/194267>
3. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք, 2013 թ., <https://www.arlis.am/hy/acts/83841>
4. ՀՀ դատական օրենսգիրք, 2018 թ., <https://www.arlis.am/hy/acts/119531>
5. ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 2004 թ., <https://www.arlis.am/hy/acts/66138>
6. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 2018 թ., <https://www.irtek.am/views/act.aspx?aid=150488>
7. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 2021 թ., <https://www.arlis.am/hy/acts/209973/latest>
8. Սահմանադրական դատարան, (2012թ. նոյեմբերի 23), ՍԴՈ-1059 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/634019b857a41\\_sdv-1059.pdf](https://www.concourt.am/decision/decisions/634019b857a41_sdv-1059.pdf)
9. Սահմանադրական դատարան, (2014թ. ապրիլի 2), ՍԴՈ-1142 որոշում, <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1142.pdf>
10. Սահմանադրական դատարան, (2017թ. հունվարի 24), ՍԴՈ-1339 որոշում, <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1339.pdf>
11. Սահմանադրական դատարան, (2017թ. նոյեմբերի 7), ՍԴՈ-1383 որոշում, <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1383.pdf>
12. Սահմանադրական դատարան, (2021թ. դեկտեմբերի 23), ՍԴՈ-1621 որոշում, է՝ [https://www.concourt.am/decision/decisions/61fcdd81a03ef\\_sdv-1621.pdf](https://www.concourt.am/decision/decisions/61fcdd81a03ef_sdv-1621.pdf)
13. Սահմանադրական դատարան, (2023թ. ապրիլի 11), ՍԴՈ-1683 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/648858455f979\\_sdv-1683.pdf](https://www.concourt.am/decision/decisions/648858455f979_sdv-1683.pdf)
14. Սահմանադրական դատարան, (2024թ. հոկտեմբերի 1), ՍԴՈ-1752 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/670926c7423d9\\_SDV-1752.pdf](https://www.concourt.am/decision/decisions/670926c7423d9_SDV-1752.pdf)
15. Սահմանադրական դատարան, (2025թ. հունվարի 24), ՍԴՈ-1766 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/678a658805dba\\_SDV-1766.pdf](https://www.concourt.am/decision/decisions/678a658805dba_SDV-1766.pdf)
16. Սահմանադրական դատարան, (2025թ. փետրվարի 11), ՍԴՈ-1769 որոշում, [https://www.concourt.am/decision/decisions/680f7555eb0e7\\_SDV-1769.pdf](https://www.concourt.am/decision/decisions/680f7555eb0e7_SDV-1769.pdf)
17. ՀՀ Վճռաբեկ դատարան, դատական գործ թիվ ԵԴ/40003/02/19, [https://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=45880421203990209](https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203990209)
18. ՀՀ Վճռաբեկ դատարան, դատական գործ թիվ ԵԴ/66351/02/22, [https://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=45880421204386694](https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204386694)
19. Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան, դատական գործ թիվ ՍԴ/0342/02/25, 2025 թ., [https://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=35465847065633256](https://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065633256)

20. **Վարչական դատարան, Բաբկեն Ներսիսյանը ընդդեմ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, թիվ ՎԴ/0237/05/24, 2024թ.,** <https://datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=administrative>
21. **«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ և «Իրավունքի ուժ» ՀԿ, «2022-2024 թթ. ընդանեկան բռնության գործերով դատական նիստերի մշտադիտարկման արդյունքները» զեկույց, 2025թ.,** <https://coalitionagainstviolence.am/wp-content/uploads/2025/07/HRP-Monitoring-report-Final.pdf>
22. **Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ, «Ընդանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության միջոցներ, խնդիրներ և լուծումներ» հետազոտություն, 2025 թ.,** <https://ldpf.am/uploads/files/57777fa6b6b057bb7f62cfd3f4a86524.pdf>
23. **«Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ, Վնասից դեպի արդարություն. Սեռական բռնության գործերով դատական քննության բարեփոխման ուղենիշները Հայաստանում. Դատական մոնիթորինգի արդյունքների վերլուծություն միջազգային չափանիշների լույսի ներքո, 2025 թ.,** [https://saccarmenia.org/wp-content/uploads/2025/07/Monitoring\\_ARM\\_FINAL\\_10.07.25.pdf](https://saccarmenia.org/wp-content/uploads/2025/07/Monitoring_ARM_FINAL_10.07.25.pdf)
24. **ԵԽ, ԵՄ, Գործընկերություն հանուն լավ կառավարման «Կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ դատավորների և դատախազների վերապատրաստման» ձեռնարկ, 2017 թ.**
25. **ԵԽ, Կանանց նկատմամբ բռնության և ընդանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիա (ԵԽ կոնվենցիա), 2011 թ.**
26. **ԵԽ, Կանանց նկատմամբ բռնության և ընդանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի կոնվենցիայի բացատրական զեկույց, 2011 թ.,** <https://rm.coe.int/ic-and-explanatory-report/16808d24c6>
27. **ՄԱԿ, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989 թ.,** <https://www.arlis.am/hy/acts/60503>
28. **ՄԱԿ, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1979 թ.,** <https://www.irtek.am/views/act.aspx?aid=3735>
29. **ՄԱԿ, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն, 1945 թ.,** <https://www.arlis.am/hy/acts/75801>
30. **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա, փոփոխված 11 և 14 արձանագրություններով, 1950 թ.,** <https://www.arlis.am/hy/acts/20870>
31. **ՄԻԵԴ, Գայդուկևիչն ընդդեմ Վրաստանի, թիվ 38650/18, 2023 թ.,** <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-225228%22%5D%7D>
32. **ՄԻԵԴ, Ի.Մ. և այլք ընդդեմ Իտալիայի, 2022 թ.,** <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-220989%22%5D%7D>
33. **ՄԻԵԴ, Լյուկան ընդդեմ Մոլդովայի Հանրապետության, թիվ 55351/17, 2023 թ.,** <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-228151%22%5D%7D>
34. **ՄԻԵԴ, Հասմիկ Խաչատրյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 11829/16, 2024 թ.,** <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-242447%22%5D%7D>
35. **ՄԻԵԴ, Յոհանսեն ընդդեմ Նորվեգիայի, թիվ 17383/90, 1996 թ.,** <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-58059%22%5D%7D>

36. ՄԻԵԴ, Սի ընդեմ Ֆինլանդիայի, թիվ 18249/02, 2006 թ., <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%22001-75337%22%7D>
37. ՄԻԵԴ, Տունիկոլան և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի, թիվ 55974/16 և 3 այլք, 2021 թ., <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22%3A%5B%22001-213869%22%7D>
38. Վիեննայի կոնվենցիա «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին», 1969 թ., <https://www.arlis.am/hy/acts/24526>
39. CEDAW, *Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women: Czech Republic*, CEDAW/C/CZE/CO/5, 2010, <https://docs.un.org/en/CEDAW/C/CZE/CO/5>
40. CEDAW, *Concluding observations of the Committee on the Elimination of Discrimination against Women: Germany*, CEDAW/C/DEU/CO/6, 2009, <https://docs.un.org/en/CEDAW/C/DEU/CO/6>
41. CEDAW, *General Recommendation 19*, 1992, [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2FCEDAW%2FGEC%2F3731&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2FCEDAW%2FGEC%2F3731&Lang=en)
42. CEDAW, *General Recommendation 33*, 2015, [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F33&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F33&Lang=en)
43. CEDAW, *General Recommendation 35*, 2017, [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F35&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FGC%2F35&Lang=en)
44. **Committee against Torture**, *V.L. v. Switzerland*, CAT/C/37/D/262/2005, 2006, <https://juris.ohchr.org/casedetails/101/en-US>
45. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Burundi (CAT/C/BDI/CO/1)**, <https://docs.un.org/fr/CAT/C/BDI/CO/1>
46. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Guyana (CAT/C/GUY/CO/1)**, <https://docs.un.org/en/CAT/C/GUY/CO/1>
47. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Mexico (CAT/C/MEX/CO/4)**, <https://docs.un.org/en/CAT/C/MEX/CO/4>
48. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Peru (CAT/C/PER/CO/5-6)**, <https://docs.un.org/en/CAT/C/PER/CO/5-6>
49. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Senegal (CAT/C/SEN/CO/3)**, <https://docs.un.org/en/CAT/C/SEN/CO/3>
50. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Tajikistan (CAT/C/TJK/CO/2)**, <https://docs.un.org/en/CAT/C/TJK/CO/2>
51. **Concluding observations of the Committee against Torture on the periodic reports of States parties under the CAT, including such observations as regarding Togo (CAT/C/TGO/CO/1)**, <https://docs.un.org/en/CAT/C/TGO/CO/1>

52. **Concluding observations of the Human Rights Committee on the periodic reports of States parties under the ICCPR**, including such observations as in respect of Slovakia (CCPR/CO/78/SVK), [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CCPR%2FCO%2F78%2FSVK&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/Download.aspx?symbolno=CCPR%2FCO%2F78%2FSVK&Lang=en)
53. **Concluding observations of the Human Rights Committee on the periodic reports of States parties under the ICCPR**, including such observations as in respect of Japan (CCPR/C/79/Add.102), <https://docs.un.org/en/CCPR/C/79/Add.102>
54. **Concluding observations of the Human Rights Committee on the periodic reports of States parties under the ICCPR**, including such observations as in respect of Peru (CCPR/CO/70/PER), <https://docs.un.org/en/CCPR/CO/70/PER>
55. **Corten O., Klein P.**, *The Vienna Conventions on the Law of Treaties: A Commentary (vol. I)*, Oxford University Press, 2011
56. **Council of Europe Committee of Ministers**, *Recommendation of the Committee of Ministers to member States on the protection of the rights and best interests of the child in care proceedings*, CM/Rec(2025)5, 2025, <https://search.coe.int/cm/#{%22CoEIdentifier%22:%220912594880265c75%22,%22sort%22:%22CoEValidationDate%20Descending%22%22}>
57. **Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations**, 1970, <https://digitallibrary.un.org/record/202170?v=pdf>
58. **European Institute for Gender Equality**. (n.d.). *Gender-sensitive*. In *Gender Equality Glossary & Thesaurus*. [https://eige.europa.eu/publications-resources/thesaurus/terms/1324?language\\_content\\_entity=en](https://eige.europa.eu/publications-resources/thesaurus/terms/1324?language_content_entity=en)
59. **European Institute for Gender Equality**, *Risk assessment and risk management*, [https://eige.europa.eu/gender-based-violence/risk-assessment-risk-management/principle-2-adopting-victim-centred-approach?utm\\_source=chatgpt.com](https://eige.europa.eu/gender-based-violence/risk-assessment-risk-management/principle-2-adopting-victim-centred-approach?utm_source=chatgpt.com)
60. **Harvard Draft Convention on the Law of Treaties**, 1935, [https://legal.un.org/ilc/documentation/english/a\\_cn4\\_23.pdf](https://legal.un.org/ilc/documentation/english/a_cn4_23.pdf)
61. **Hugh Thirlway**, *The Law and Procedure of the International Court of Justice: Fifty Years of Jurisprudence Volume*, 2013
62. **International Court of Justice**, *Case Concerning the Land and Maritime Boundary between Cameroon and Nigeria (Cameroon v. Nigeria)*, 11.06.1998
63. **Sir Humphrey Waldock**, *Sixth Report on the Law of Treaties*, (doc. A/ CN.4/186), YILC, (vol. II), New York 1966
64. **UN Committee on the Rights of the Children**, *General Comment No. 13*, 2011, [https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.gc.13\\_en.pdf](https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/crc.c.gc.13_en.pdf)
65. **UN Committee on the Rights of the Children**, *General Comment No. 14*, 2013, [https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/gc/crc\\_c\\_gc\\_14\\_eng.pdf](https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/gc/crc_c_gc_14_eng.pdf)
66. **UN**, *Declaration of the Rights of the Child*, 1959, <https://digitallibrary.un.org/record/195831?v=pdf>
67. **UN Human Rights Committee**, *General Comment No. 28 :Article 3 (The equality of rights between men and women)*, 2000, [https://adsdatabase.ohchr.org/IssueLibrary/HRC\\_General%20comment%20No28%20Article%203%20\(The%20Equality%20of%20rights%20between%20men%20and%20women\).pdf](https://adsdatabase.ohchr.org/IssueLibrary/HRC_General%20comment%20No28%20Article%203%20(The%20Equality%20of%20rights%20between%20men%20and%20women).pdf)
68. **UN**, *International Law Commission*, (1949), *Draft Declaration on Rights and Duties of States*, [https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft\\_articles/2\\_1\\_1949.pdf](https://legal.un.org/ilc/texts/instruments/english/draft_articles/2_1_1949.pdf)

69. **UN-REDD Programme.** (n.d.). *Gender-sensitive – definition.*  
<https://www.un-redd.org/glossary/gender-sensitive>
70. **UN,** *Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment (A/HRC/31/57), 2016,*  
<https://digitallibrary.un.org/record/831491?ln=fr&v=pdf>
71. **UN,** *Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment (A/HRC/7/3), 2008,* <https://docs.un.org/en/A/HRC/7/3>
72. **UN,** *Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment (A/HRC/31/57), 2016,*  
<https://digitallibrary.un.org/record/831491?ln=fr&v=pdf>
73. **UN,** *Report of the Special Rapporteur on torture and other cruel, inhuman or degrading treatment or punishment, A/HRC/7/3,* <https://docs.un.org/en/A/HRC/7/3>
74. **UNDP,** *Gender and Judicial Excellence, 2022*
75. **Villiger M. E. Commentary on the 1969 Vienna Convention on the Law of treaties,** *Martinus Nijhoff Publishers, Leiden, 2009*